





L.Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(I մաս)



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

Л. Ш. ОГАНЕСЯН

ИССЛЕДОВАНИЕ СМЫСЛОВЫХ
ГРУПП ЛЕКСИКИ
ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

(Часть I)

Издательство «Гитутюн» НАН РА
ЕРЕВАН 2008

ՀՏԴ 809.198.1

ԳՄԴ 81.23

Հ 854

Հ 854 Հովհաննիսյան Լ.Շ. Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, Գիտություն, 2008 – 132 էջ:

Աշխատանքում քննված են գրաբարի բառապաշարի մի քանի իմաստային խմբեր, խմբերում ներառվող միավորների իմաստային-գործառական յուրահատկությունները, բնիկ և փոխառյալ բառերի հարաբերակցությունը:

Գիրքը նախատեսված է հայոց լեզվի պատմությամբ զբաղվողների համար:

ԳՄԴ 81.23

ISBN 978 – 5 – 8080 – 0727– 7

© ՀՀ ԴԱԱ «Գիտություն» հյուստարակչություն, 2008

Հայոց լեզվի պատմության, այդ թվում նաև գրաբարի բառապաշարի գիտական ուսումնասիրությունը սկսվել է 19-րդ դարի 30-ական թվականներից՝ համեմատական լեզվաբանության կազմավորման շրջանից, և շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այդ գործընթացին խթանել և խթանում են մի շարք հանգամանքներ, որոնցից են. ա) համեմատական լեզվաբանության կազմավորումը և այդ բնագավառում հայերենի տվյալների օգտագործումը, բ) Մխիթարյան միաբանության գործունեությունը՝ ի մասնավորի Հազկազյան բառարանների հրատարակությունը, գ) գրաբարագիր գործերի հրատարակությունը, դ) դասական և ետդասական գրաբարի հարցադրումը, ե) նոր ձեռագրերի հայտնագործումը, զ) բառապաշարի բնության տարաբնույթ սկզբունքների ու եղանակների կիրառումը, է) հայկական համաբարբառների կազմումը և հրատարակությունը, ը) հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը և այլն:

Լեզվի բառապաշարի բնությունը անպայման պահանջում է որոշ կարգի դասակարգումներ: Վերջիններիս բնույթն ու սկզբունքները պայմանավորված են մի շարք գործոններով՝ նյութի ծավալ, բնության մեթոդներ և նպատակադրում, ուսումնասիրողի հայեցակետ ...

Դասակարգումները, վերջին հաշվով, որոշակի խնդիրների առաջադրման, բնության ու եզրահանգումների յուրատեսակ միջոցներ են:

Լեզվաբանական գրականության մեջ բառապաշարը դասակարգվում է նաև ըստ իմաստային խմբերի: Գրաբարի բառապաշարի բնիկ և փոխառյալ շերտերն էլ աղբյուրնակ դասակարգման ենթարկվել են (տես Աճառյան, ՀԼՊ, հտ. 1-2, Տսիհուկյան, 1987):

Ցանկացած դասակարգում անքերի չէ: Ըստ թեմատիկ խմբերի դասակարգման դեպքում առարկումներ կարող են լինել այս կամ այն միավորի տվյալ և ոչ թե հարակից խմբում ներառելու, բառերի լեզվական արժեքը չտարբորչելու, հոմանիշների գործառական առանձնահատկությունները չտարբերակելու և նման այլ խնդիրների վերաբերյալ: Առարկումներ կարող են լինել նաև դասակարգումների անվանումների հարցում:

Մեր աշխատանքում նկատելի է մի «հակասություն» ևս. որոշ բաժիններում (Մարդ, Ծնունդ, մահ) գործ ունենք հոմանիշության, ինչպես նաև այս կամ այն հասկացության և նրա հետ կապված առարկայական իրո-

դուքյունների ու վերջիններիս լեզվական անվանումների հետ, այսինքն՝ իմաստային խումբ անվանումը պայմանական է: Դասակարգման համակարգի խախտումը այս դեպքում «հատուցվում է» խնդիրների նորովի քննությամբ, ոչ միայն լեզվական, այլև մեր ժողովրդի աշխարհընկալման որոշ պատկերացումների, բանահյուսության ու ազգագրության և արտալեզվական այլ իրողությունների բացահայտմամբ: Իսկ լեզվաբանության մեջ ընդունված իմաստային խմբերի մեր դիտարկումներն էլ որոշակիորեն տարբերվում են այլ ուսումնասիրողների կողմից կատարվածներից: Օրինակ՝ Աճառյանի դասակարգումներում փաստորեն միայն բառախմբերի առանձնացում է, իսկ Գ. Ջահուկյանն էլ անդրադառնում է հիմնականում նախագրային շրջանում գործածված որոշ բառերի ստուգաբանական տվյալներին:

Դույզն-ինչ չենք թերագնահատում երկու մեծագույն հայագետների վաստակը այս բնագավառում, քանի որ դասակարգումներում ընդգրկված նյութի տարաբնույթ քննությունը նրանց աշխատանքի նպատակադրումը չէր:

Ստուգաբանական հարցերին զուգընթաց անդրադառնում ենք տվյալ խմբի մեջ ներառվող բառերի գործառական յուրահատկություններին, վկայության ժամանակաշրջանին, գրական կամ ոչ գրական շերտերի հետ ունեցած հարաբերակցությանը, կիրառության հաճախականությանը, հնարավորության դեպքում բերվում են զուգահեռներ այլ լեզուներից: Լեզվական իրողությունները վերլուծելիս ըստ հնարավորին օգտագործվում են արտալեզվական տվյալներ: Շոշափվում են նաև բառակազմական հարցեր: Ավելորդ չէ նշել նաև հետևյալը. շուրջ 30 տարի զբաղվելով գրաբարի բառապաշարի ուսումնասիրությամբ՝ հավաքել ենք զգալի նոր նյութ (նախնական հաշվումներով մոտ 5000 բառ, որը չի վկայել ՆՀԲ-ն, իսկ մի զգալի մասն էլ գրաբարի բառարաններն ընդհանրապես): Դասակարգումները լրացրել ենք նաև այդ կարգի բառերով՝ ստուգաբանական-բառաքննական հնարավոր դիտարկումներով: Այդ բառերի գերակշիռ մասը քաղցմանական գրականությունից է, որի բառապաշարը ցայժմ բավարար չափով ուսումնասիրված համարել չենք կարող:

Ա. ՄԱՐԴ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱ-
ՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Տարբեր լեզուներում, այդ թվում և հայերենում, բանական էակի՝ homo sapiens-ի անվանումները բազմազան են՝ պայմանավորված առարկայական իրականության ընկալման, լեզվամտածողական, աշխարհագրական, ժամանակային, կրոնական և այլ գործոններով:

Հայերենում մեզ հետաքրքրող երևույթի անվանումների շրջայում հիմնականը մարդ բառն է, որը, լինելով թերևս և նախնականը, ուշագրավ է ստուգաբանական առումով: Բառը բնիկ հայերեն է՝ հ.-ե. *mer «մեռնել» արմատի *mr-to ենթակայական դերբայի ձևը, և նրա բնիմաստն է (էտիմոն) մեռնող:

Սա նշանակում է, որ հայերի նախնական մտածողությամբ մարդ էակը առաջին հերթին սլատկերանում է որպես մահկանացու: Այդպես է նաև հնդիրանական ժողովուրդների մտածողության մեջ: Հմմտ.՝ հ.հնդկ marita «մարդ», martya «մահկանացու», պրս. mard «մարդ», morden «մեռնել» և այլն: Նկատենք, որ մահկանացու բառը դարձյալ ներառում է մարդ հասկացությունը:

Հնդեվրոպական ժողովուրդների մեկ այլ խմբում առաջնային է մարդու հոդածին լինելու գաղափարը (հ.-ե. *g'hmon.- լատ. humus «հող», homo «մարդ», գոթ. guma «մարդ» և այլն):

Անշուշտ, մարդ-հողածին ըմբռնումը կար և հայոց մեջ, որը թերևս ավելի ամրագրվեց Սուրբ Գրքի միջոցով: Ըստ ՆՀԲ-ի հողածին բառը ունի «ի հողոյ ծնեալ. ծնունդ երկրի, երկրածին, մարդ, աղամ» իմաստները:

Մարդու ծագման Աստվածաշնչյան որոշ մեկնաբանություններում հողածին և աստվածաստեղծ է միայն տղամարդը, քանի որ Աստված կնոջը արարել է Ադամի կողից. «Եւ շինեաց Տէր Աստուած զկողն զոր առ յԱդամայ ի կին, և ամ գնա առ Ադամ» (Ծննդ. Բ, 21-22):

Աստվածաշնչյան այս հաղորդումը հետագայում տարբեր կերպ է մեկնաբանվել: Ուշագրավ է V դարի մատենագիր Եղիշեի անդրադարձը: Իր «Արարարածոց մեկնութեան» մեջ նա գրում է. «Ես ընդէ՞ր ոչ ի հողոյ, իբր եւ զԱդամ. զի համապատիւ իցէ... ոչ համահասակ եւ երկրորդ զի

հնագանդ լիցի Ադամայ և լուռ» (տե՛ս Մատենագիրք հայոց, հատ. Ա, էջ 785):

Տղամարդու և կնոջ իրավունքների անհավասարության առաջին յուրօրինակ մեկնաբանություններից է սա V դ. հայ մատենագրության մեջ:

Հոդ բաղադրիչով հետևյալ կազմությունները՝ հողածին, հողեղեն, հողանիթեայ, նույնպես ներառում են մարդ իմաստը: «Առաջին մարդն՝ յերկրէ հողեղեն, իսկ երկրորդ մարդն՝ Տէր յերկնից: Որպէս հողեղենն, նոյնպէս եւ հողեղենքս. եւ որպէս երկնատրն նոյնպէս եւ երկնատրքն: Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք եւ զպատկեր երկնատրին» (Ա.Կորնթ. ԺԵ, 47-49): «Եւ մի՛ բնակեսցէ ի նմա մարդ և մի՛ նստցի ի նմա որդի հողածնի» (Երեմ. ԽԹ, 33): (Հունարենում և ռուսերենում հողածնի փոխարեն մարդ է): «Այլ յետ յանցանելոյ մարդոյն զԱստուծոյ պատուիրանան՝ տուան նմա զարհուրեցուցիչք առ ի չհպարտանալոյ հողեղինին, որ ի հողոյ եղեւ և ի հող դառնալոց էր» (Եզն. 68):

Գրաբարում երկիր բառը բազմիմաստ է, ունի մաս հող իմաստը: Հմմտ.՝ «Դարձիր երկիր, ուստի արար» (ՆՀԲ): Ուրեմն՝ երկրային, երկրածնունդ, երկրածին բառերի որոշ գործածությունների հիմքում էլ մարդու հողածին լինելու գաղափարն է:

Լեզուների ընձեռած փաստերը վկայում են, որ բանական էակի բնորոշման համար գործել են տարաբնույթ չափանիշ-հատկանիշներ: Այսպես՝ մարդ հասկացության բնորոշիչներից մեկը ուժ, արիություն և առնականությունն է. հ.-ե. *ner- արմատից՝ սանսկ. ner, հուն. ἀνηρ, αὐθροσ, հայ. այր: Գրաբարյան այդ հատկանիշները ավելի ցայտուն են, քանի որ այր ունի հիմնականում «տղամարդ» իմաստը: ՆՀԲ-ն այր մեկնում է. «Արու մարդ, չափահաս կամ կատարեալ, յարբունս հասեալ, երիտասարդ. և լի ատուրքք»: Գրաբարի բառարանները փաստորեն այր բառի մեջ տեսնում են և սեռային տարբերակում:

Թարգմանական գործերի որոշ օրինակներում հիշյալ տարբերակումը առանց բնագրի համեմատության երբեմն հստակ չի դրսևորվում:

Ըստ ՆՀԲ-ի «Դ-ո՛ն ուրեք դնի ի մեզ Մարդ, ուր. յն. իցէ Այր, ἀνηρ, այլ ստեպ այր դնի ի մեզ, ուր յն. է Մարդ, αὐθροσ» (Տե՛ս ՆՀԲ Մարդ բառահոդվածը):

Մեկ այլ չափանիշ կարող ենք համարել խոսող-չխոսող հակադրությունը: Հակադրության առաջին եզրը՝ խոսողները (ասուն) մարդիկ են:

Սա քերևս նույնանում է բանական-ոչ բանական հակադրության հետ, քանի որ հին հնդեվրոպացիների ընկալմամբ բանականությունը աղերսվում է խոսելու կարողության, ունակության հետ: Հ.-ե. տարբեր լեզուներում այդ արտահայտվում է *men- «խոսել, մտածել» արմատի գործածությամբ (տե՛ս Гамкрелидзе, Иванов, 473):

Գրաբարյան բազմաթիվ վկայություններում բան-ը, բանական-ը մարդու, մարդկայինի բնութագրիչներն են: Ահա որոշ օրինակներ. «Որ զամենայն զոր արար գեղեցիկս արար, այսինքն զբանաւորս և զանբանաւորս, զասունս և զանասունս» (Եզն. 9): «Առնել զբանաւոր զիմաստուն զխօսուն արարածն» (Ազար. 135): «Սահման է մարդոյ, կենդանի բանական» (ՆՀԲ):

Հ.-ե. որոշ լեզուներում Մարդ-կենդանի (բանական էակ-ոչ բանական էակ) հակադրությունը առկայանում է երկոտանի-չորքոտանի հատկանիշներով (ն.տ.):

Գրաբար մատենագրության մեջ այդ տարբերակումը ընդգծված չէ, և երկոտանի բառն էլ հաճախական չէ: ՆՀԲ-ն ունի երկու վկայություն. «Որպէս մարդումն գոլ երկոտանի», «չորքոտանիս կամ զերկոտանիս»:

Շնչավոր-անշունչ հակադրություն է հոգի բառի «մարդ» գործածության հիմքում: Հիշենք, որ հոգի բառի նախնական ստուգաբանական իմաստը՝ «փչել, շնչել, շունչն» է:

ՆՀԲ-ն հոգի բառահոդվածում նշում է տասից ավելի նրբիմաստ, որոնցից մեկն էլ «Մարդ կամ անձն» է: Արմ-ը՝ «հոգի, փխբ. նաև անձ, մարդ, շունչ, սատանայ, սիրտ, կյանք, կենդանություն»:

Հոգի-մարդ իմաստային անցումը առաջին հերթին իրականացվել է շնչավոր լինելու հենքի վրա, ապա և մարդը որպէս հոգու և մարմնի միասնության ըմբռնումից:

Արլի հայերենում հաճախական է քանակական թվականների հետ հոգի բառի գործածությունը «Մարդ» իմաստով. հմմտ 10 հոգի, 20 հոգի և այլն: Գրաբարում նման գործածությունները սակավաթիվ են, ՆՀԲ-ի օրինակներն էլ ուշ շրջանի վկայություններ են. «հոգիք իբրեւ ութ ապրեցան», «ամենայն հոգի, այսինքն ամենայն մարդ», «մի ամենայն հոգոյ հաւատայք»:

Ստուգաբանորեն անձ բառն էլ ենթադրում է հ.-ե. առհեռ «փչել, շնչել» արմատը: Ուրեմն՝ անձն բառի դեպքում էլ նախնականը եղել է հոգի, ապա և իմաստային զարգացմամբ՝ մարդ, գոյություն:

Երբեմն անձ, անձնավորություն իմաստն է արտահայտվում նաև բնութիւն բառով: Հմմտ.՝ «Է և ի տեղիս ասացեալ ի հարցն մի բնութիւն,

փոխանակ միոյ անձին», «վասն մի անձն ասելոյ... մի բնութիւն ասէ» (տե՛ս ՆՀԲ՝ Բնութիւն բառահոդովածը): Բնութիւն բառի «անձ» իմաստով գործածությունը թերևս հուն. $\phi\acute{o}\sigma\iota\varsigma$ -ի բազմիմաստության արտահայտությունն է:

Շնչավոր-անշունչ իմաստային դաշտում է գտնվում արարած բառը: Գրաբարում արարած նշանակում է ստեղծված բան (շնչավոր քե անշունչ), որը բնականաբար ներառում է նաև մարդուն:

Արդի հայերենում արարած-ը առաջին հերթին շնչավոր էակն է, մարդը, ապա նաև՝ «այն ամենը, որ ստեղծված է աստծու կողմից» (Աղայան, 1976):

Երբեմն մարդ հասկացությունն առկայանում է տարածքանիշ որոշ բառերում: Եթե Արմ-ը աշխարհ բառին վերագրում է «աշխարհ, երկիր, գաւառ» իմաստները, ապա ՆՀԲ-ն և ԱԲ-ն նկատել են և «մարդ, մարդիկ» նրբիմաստները: Ահա օրինակներ ՆՀԲ-ից. «Աշխարհ ամենայն զկնի նորա գնաց», «աշխարհ աստ զժողովուրդն կոչէ», «սովորութիւն իսկ է գրոց, երբեմն զարարածս աշխարհ անուանել»:

Աշխարհ-մարդ իմաստային կապը ակնհայտ է նաև որոշ կազմություններում. աշխարհամար «մարդահամար», աշխարհագոր, աշխարհական և այլն:

Աշխարհ-մարդ աղերսը կա և այլ լեզուներում. բուլղարերենում մարդիկ հավաքական հոգնակի հասկացությունը արտահայտվում է люде և хора բառերով: Վերջինս հուն. $\chi\omega\rho\alpha$ «երկիր, մարդ» բառի իմաստային զարգացում է դիտվում (տե՛ս $\text{\textit{\textethpsilon}\text{t}\text{im}\text{ol}\text{o}\text{g}\text{i}\text{a}}$, 1979, 86):

Ըստ էության Մարդ(իկ) իմաստով է գործածվում երկիր բառը հետևյալ վկայություններում. «Յուսով հաստատեալ խնդայր ամենայն երկիրն առ հասարակ» (Եղիշ. 69): «Նուանեցաք զամենայն երկիրն ի ծառայութիւն մեզ» (ՆՀԲ): «Դու գնացեր և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար» (Խոր. 192):

Տիեզերք բառի համար էլ ՆՀԲ-ն մի շարք իմաստների շարքում նշում է և «ամենայն երկիր բնակչօքն»:

Եղիշեի «Տիեզերք ամենայն զկնի ուսմանց նոցա գնացին» (60) նախադասության մեջ տիեզերք-ը կարելի է քարզմանել մարդիկ:

Վերը նշվեց հոգի բառի մասին: Մարդը դիտվում է որպես հոգու և մարմնի ներդաշնակ միասնություն, հոգեկիր մարմին: Իմաստային այդ հենքով պայմանավորված՝ մարմին բառն էլ գործառվում է մարդ իմաստով, և ՆՀԲ-ն էլ մարմին բառի իմաստների շարքում նշում է «որպէս մարդն ամբողջ և կատարեալ մարդկութիւն Քրիստոսի»՝ բերելով որոշ

օրինակներ. «Ձայն արձակեալ ի ձեռն մարմնոյն՝ գ՛լազար կոչեաց»։ Գրաբարյան մի շարք օրինակներում մարմին բառը կարելի է քարզմանել և՛ մարմին, և՛ մարդ։ Ահա Եզնիկից մի քանի օրինակ. «Զցլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարիւն որ ըմպիցէ՝ սատակի» (66)։ «... որ արարիչն է բնութեան մարմնոյ» (101)։ «Յարութեան մարմնոյ չհաւատալ ուստի՞ իցէ Մարկիոնի ... » (290)։

Մարմնառութիւն բառը ՆՀԲ-ն և ԱԲ-ն քարզմանում են մարդեղութիւն։

Մարմին-մարդ իմաստային և ստուգաբանական կապը ակնառու է հատկապէս հնդիրանական լեզուներում։ Հ.հնդ. տան- ունի «մարմին, անձ, մարդ» իմաստները։ Միջինիրանական տա «մարմին» բառն է անտարակոյս տահա/տանիա «միայնակ, անձամբ» բառերում։ Մեր կարծիքով պատահի բառի արմատը դարձյալ տա «մարմին» բառն է։

Երբեմն մարմնի որոշ մասերի անվանումներ ենթադրում են մարդ, անհատ հասկացությունը։ Այդ բառերին բնորոշ է բազմիմաստությունը, և իմաստներից մեկն էլ որպէս փոխանունության կամ փոխաբերության դրսևորում արտահայտում է մեզ հետաքրքրող երևույթը։ Բնականաբար դրանք մարմնի այն մասերն են, որոնք կարևոր դեր ունեն բանական էակի բանական գոյծունեության մեջ։

1. Բերան. «Եւ տայր Յովսէփ ռոճիկս հօրն և եղբարց իւրոց եւ ամենայն տան հօր իւրոյ ցորեան ըստ բերան» (Ծննդ., ԽԷ, 12)։ «Կոչեսցոր զաղջիկն և հարցցոր ի բերանոյ նորա» (Ծննդ., ԻԴ, 57)։ «Ամենայն բերան խոստովան լիցի» (ՆՀԲ)։

Ռուսերեն Աստվածաշնչի համապատասխան հատվածում բերան բառը չկա . հմնտ. "Призовем девицу и спросим что она сможет": Հայերենը քերևս հարազատ է մնացել հունարենին։

2. Գլուխ. «Ժողովեցէք ի դմանէ իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում, չափով ըստ գլուխ, ըստ թուոյ անձանց ձեռոց» (Ելք, ԺԶ, 16)։ «Առէք զհամար ամենայն ժողովրդեան որդոցն Իսրայելի, ըստ ազգս, ըստ տանց... ըստ գլխաց նոցա՝ ամենայն արու...» (Թխք., Ա, 2)։

Գլուխ բառի «գլխավոր, պետ, իշխան, վերակացու» փոխաբերական իմաստները նույնպէս առնչվում են մարդ հասկացությանը։

3. Դէմ(ք). Գրաբարի բառարանները դէմ(ք) բառի իմաստների շարքում դնում են՝ և «անձ, մարդ» (տե՛ս ՆՀԲ, ԱԲ, Արմ.)։ Ահա ՆՀԲ-ից մեկ օրինակ. «Մինչ անձն ասես, ընդէ՞ր հրաժարես զնա դէմ ասել»։

Արդի հայերենում այդ կարգի գործածությունը ավելի հաճախական է, և իմաստն էլ՝ հստակ։

4. Լեզու. «Ձի՞ տացի քեզ կամ զի՞նչ յաւելցի լեզու նենգատոր: «Լեզու սուտ ատեայ զճշմարտութիւն» ... ՆՀԲ-ն բերում է այս օրինակները լեզու բառի «Անձն խօսող» նրբիմաստի համար: Հավելենք, որ լեզու բառի «ազգ, ժողովուրդ, ազգի լեզու» իմաստները, այլև լեզու բառով մի շարք կազմութիւններ նկատի ունեն միայն մարդկանց. հմմտ. լեզուանի, լեզուագար, լեզուագարիմ ... և այլն:

5. Ձեռն. Մեզ հետաքրքրող իմաստի հստակ արտահայտություն չի հանդիպել, քե՛ն ՆՀԲ-ն Ձեռն բառահոլովածում նշում է և «անձն» նրբիմաստը:

6. Սիրտ բառով նույնպէս մեզ որևէ վկայություն չի հանդիպել:

Լեզվում գոյություն ունեն հազարավոր բառեր՝ առարկայանիշ կամ հատկանշանիշ, որոնք անպայման վերաբերում են մարդ էակին: Այդ կարգի բառերին այստեղ չենք անդրադառնում (գրել, կարդալ, մտածել, ժպտալ, բարբառել, ամուրի, այրի, զինուոր, բանաստեղծ, ազգակցական կապ ցույց տվող բոլոր բառերը և այլն):

Նկատենք միայն, որ անուն բառը երբեմն հանդես է գալիս «մարդ, ինչ-որ մարդ» իմաստով: Հմմտ.՝ «Էր անդ բազմութիւն անուանց իբրեւ հարիւր և քսանից» (Գծ., Ա, 15): Ռուս. "Было же собрание человек около ста двадцати": ՆՀԲ-ն անուն՝ «մարդ» նշանակությամբ բերում է նաև հետևյալ օրինակը. «Ի վերայ ամենայն իշխանութեան և պետութեան... և ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս յայսմիկ, այլև ի հանդերձելումն» (Եփես. Ա, 21):

Մասամբ անդրադարձել ենք մարդ հասկացության իմաստն արտահայտող բաղադրյալ կազմություններին:

Ամենաընդհանուր ձևով կարելի է առանձնացնել հետևյալ կադապարները:

ա) Գոյական + ծին. երկրածին, հողածին, ադամածին, կանանցածին, դեմետրածին և այլն: ՆՀԲ-ն դեմետրածին մեկնում է «երկրածին, կողածին»՝ բերելով ընդամենը մեկ վկայություն Սկևռացուց:

Ադամածին-ը գրաբարում նշանակում է ադամի որդիներ, որտեղ անշուշտ կա մարդ հասկացությունը:

Ադամ բառի հոմանշային շարքի անդամներն են նախահայր, նախամարդ, սկզբնահայր, սկզբնահաւ, սկզբնամարդ, աշխարահահայր:

Կաւաստեղծ բառը ՆՀԲ-ն չի վկայում: Իսկ ԱԲ-ն մեկնում է «կալե տեղծած, Ադամ.»: Վկայություն չիմնելու պատճառով չենք կարող հավաստել բառիմաստի ստուգությունը և վկայության ժամանակաշրջանը:

Նախամարդ, սկզբնահայր, աշխարհահայր ըստ ՆՀԲ-ի ուշ՝ հետիինգերոդդարյան վկայություններ են:

Այլ կազմություններից նշենք՝ ստեղծական, եղծական, եղծանելի, մահկանացու, մահաուր ...

Նկատելի է, որ մարդ հասկացությունն արտահայտող բառերը գրաբարում ավելի սակավաթիվ են, քան ժամանակակից հայերենում: Դրանում առաջին հերթին դեր ունեն փոխաբերացման երևույթները, որոնք դրսևորվում են հատկապես ժողովրդախոսակցական լեզվում: Բառերի բուն իմաստից մինչև փոխաբերացում անպայման ենթադրում է որոշակի ժամանակահատված՝ արտալեզվական և ներլեզվական նոր գործոններով:

Մարդ արմատը գրաբարում հանդես է գալիս որպես բազմաթիվ բառերի բաղադրիչ: Համեմատությունը ցույց է տալիս, որ արդի հայերենում նման կազմություններ ավելի շատ են, քան գրաբարում:

Այսպես՝ ըստ ԱԲ-ի տվյալների մարդ նախադաս բաղադրիչով կա 138 բառ (մարդակ «տան գերան», մարդպետ, մարդպետական, մարդպետություն բառերում մարդ «արարած» արմատը չէ): Իսկ Է.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» նման 193 բառ կա: ԱԲ-ի մարդ բառահոդվածում նշվում է հինգ իմաստ, իսկ Է.Աղայանի բառարանում՝ 13:

ԱԲ-ն մարդ բառով դարձվածաբանական միավորներ, կայուն կապակցություններ, հարադիր բայեր չի նշում, իսկ արդի հայերենի բառարանում կա այդպիսի 9 օրինակ (հմտ.՝ մարդու գնալ, մարդու տեղ դնել, մարդու տալ և այլն):

Մարդ արմատը որպես հետադաս բաղադրիչ արդի հայերենում գրաբարի համեմատ դարձյալ շատ բառերում է առկայանում:

Արդի հայերենում*	Գրաբարում	Արդի հայերենում	Գրաբարում
այրմարդ	—	մանկամարդ	+
անմարդ	+	նախամարդ	+
բազմամարդ	+	նամարդ	—
գերմարդ	—	սակավամարդ	+
լավամարդ	—	վատամարդ	—
կիսամարդ	+	տղամարդ	—
կնամարդ	+		

Վերոգրյալ արդի հայերեն-գրաբար զույգերում դարձյալ նկատելի է արդի հայերենի համապատասխանակի բազմիմաստությունը:

Բառը	ԱԲ	Արդի հայերենի բացատրական բառարան
Անմարդ	1. Ուր մարդ չկայ, անշէն:	1. Որտեղ մարդ չկա: 2. Անմարդաբնակ, անայի: 3. Մարդու չգնացած, չամուսնացած:
Կիսամարդ	2. Տմարդի: Անկատար մարդ:	4. Մարդ՝ ամուսին չունեցող, այրի: 5. Տմարդի: 1. Կիսով չափ մարդ: 2. փխբ. Արական հատկություններից զրկված մարդ:
Կնամարդ	Կնկան պես մարդ, թոյլ, վախկոտ, անճարակ:	3. (դից.) Մարմնի կեսով մարդ, կեսով՝ կենդանի: փխբ. Անարժան՝ անարգ, մարդ: 1. Կին, կինարմատ: 2. Կանացի բարբոլ և բնավորությամբ օժտված, կնաբարո, կնատ, մեղկ:
Նախամարդ	Առաջի մարդը՝ Ադամ:	1. Ժամանակակից մարդուն նախորդած մարդանման էակը: 2. Նախնադարյան մարդ: 3. (կրոն) Եհովայի ստեղծած առաջին մարդը (Ադամը): 4. փխբ. Վայրենի

Ընդհանրապես որևէ հասկացության բառային, բառակապակցային արտահայտությունների զանազան տարաբնույթ դիսկրիմինացիաները իրականացնում են լեզվի զարգացման երկարատև ժամանակահատվածում: Բնականաբար քննությունը ամբողջական լինելու միտումը պահանջում է, որ ներառվեն ոչ միայն գրաբարի, այլև միջին հայերենի, արդի գրական հայերենի երկու ճյուղերի, նաև բարբառների տվյալները, որը հետագայի խնդիր է:

Մեր հիմնական նպատակը գրաբարի իրողությունների բացահայտումն է, քանի որ հայոց լեզվի տարբեր փուլերի լեզվական այս կամ այն կարգի իրողությունների ու դրանց փոփոխության մեկնաբանությունների հիմքում պետք է անպայման ընկած լինեն գրաբարի, ըստ հնարավորին՝ վաղ գրաբարի տվյալները:

* Արդի հայերենի տվյալները քաղել ենք հանգաբառարանից (տե՛ս Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976:)

Քանի որ մարդու գոյությունը սկսվում է նրա ծնունդով, իսկ գործունեությունը իրականանում է ապրած կյանքի ընթացքում, անդրադառնալով ծնունդ/ծնվել և կյանք հասկացությունների լեզվական արտահայտություններին:

Ծնունդ/ծնվել-ը հոմանշային շարքի հիմնական անդամներ են, ամենահաճախականը և մահ/մեռանել-ի ամենացայտուն հակամիջը: Գրաբար մատենագրության մեջ հանդիպում ենք տարբեր դատողությունների ծննդյան և մահվան վերաբերյալ:

Սուրբ Գրքի «Բարի է անուն բարի քան զեղ բարի եւ օր մահուան իրոյ՝ քան զօր ծննդեան իւրոյ» (Ժող. Է, 2) հատվածը Մանդակունին «Թուղք մխիթարութեան վախճանելոց յաշխարհ» ճառում մեկնում է հետևյալ կերպ. «... Քանզի ար ծննդեանն սկիզբն է մեղաց եւ անարեւնութեանց, եւ անտի սկսանին աճել ի նմա ցաւք եւ հոգք եւ տրտմութիւնք, եւ զրպարտութիւնք, այրութիւնք եւ որբութիւնք... եւ ամենայն չարչարանք բազում...» (Մատենագ. Հայոց. հատ. Ա, էջ 1253):

Աստվածաշնչում Ծնանել գործածվել է 430, իսկ Ծնունդ 183 անգամ:

Ծին արմատը բնիկ հայերեն է, և արդեն V դարից ծնանել-ը բազմիմաստ էր:

Նշված արմատով կան մի շարք բաղադրյալ կազմություններ, որոնք նույնպես ունեն «ծնել» իմաստը:

«Սա ննջեալ ի հօր իւրում՝ մանկածնեցաւ ի նմանէ» (ՆՀԲ): «Կամ թէ ամուսնանայ, կամ թէ ի մանկածնութիւն հասանէ» (ՆՀԲ): «Վասն որդէծնութեան եւ մարդկան յաշխարհի սերելոյ ներեաց նմա» (Եզն. 154): Եզնիկի գրքում այդ բառը գործածվել է չորս անգամ: Որդեծնանել բառ ՆՀԲ-ն չի ավանդում: Բառարանն ունի զառակագործել, իսկ զառակագործութիւն չկա: Չառակ, մանուկ, որդի բաղադրիչներով որոշ բառեր նույնպես ունեն «ծնել» իմաստը. «Ճեպ տայ մանկարարութեան» (ՆՀԲ): «Մուտ առ նաժիշտիմն ես:» ՆՀԲ):

Ծննդաբերել բառով ՆՀԲ-ն ունի մեկ վկայություն, որը ուշ շրջանից է և մարդու ծննդին չի վերաբերում, այսպես է և V դարից վկայված ծննդագործել-ը: «Անապական միայն զկառավար սորա իմացին... զնոյն արարիչ չորեկքին նիւթոցս, յորմէ ամենայնքս ծննդագործին հրամանաւ արարողին իրեանց» (Եղիշ. 34):

Ծագումն բառի բազմիմաստության շարքում ՆՀԲ-ն նշում է և «ծնունդ»: «Յիշեցէք ամենեքեան զհարսն մեր զառաջինսն, որ յառաջ քան զծագումն որդւոյն Աստուծոյ յիւրաքանչիւր ժամանակի» (Եղիշ. 106):

Լինել, ելանել, սերել, սերանել, եղանել բայերի որոշ գործածություններում նույնպես նկատելի է «ծնել, ծնվել» իմաստը: «Սեթայ եղև որդի» (ՆՀԲ): «Չմանկունս թողուլ անթլփատս, յորժամ լինիցին» (Խոր. 119): «Որ ելանեն ի քէն, նա ժառանգեսցէ զքեզ» (ՆՀԲ): «...վասն որդեծնութեան և մարդկան յաշխարհի սերելոյ, ներեաց նմա...» (Եզն. 154): «Եթէ յիւր կին ոք օրինօք ամուսնացեալ մերձենայցէ վասն որդեծնութեան և զաւակի սիրելոյ, բարիոր է մերձատրութիւնն» (Եզն. 37): «Ի սերանալ և ի բազմանալ մարդկան ի վերայ երկրի» (ՆՀԲ):

Բերել-ը արդի հայերենում ունի և «ծնել» իմաստը. հմմտ. երեխա բերել: Հմմտ. նաև չբեր: Գրաբարի բառարանները բեր- արմատի մի շարք իմաստների շարքում նշում են և «ծնունդ կենդանեաց»: Ըստ երևույթին «մարդու ծնունդ» իմաստով գործածությունը գոնե վաղ գրաբարում հաճախական չի եղել:

ՆՀԲ-ն բղխեմ բառահոդվածում առանձնացնում է «ծնունդ Որդւոյ» նրբիմաստը. «Ընդ ծնողին է մշտնջենատրակից ի նմանէ բանն որպէս յաղբերէ ի հայրական էութենէ բղխեալ»:

Առ, ի նախդիրներով լույս ածել հարադրությունը նշանակում է «ծնվել»: «Չհայր կամ զմայր, որ առ լոյսն զնորա բնութիւն են ածեալ»: «Գալ ընդ կուսական արգանդ» նշանակում է «ծնվել կույսից» (տե՛ս ՆՀԲ):

«Ծնունդ, ծնել» իմաստն արտահայտող դարձվածային միավորները արդի հայերենում զգալիորեն շատ են, քան գրաբարում:

Ծնունդ-մահ ժամանակային շղթայի միջանկյալ օղակն է կյանքը, գրաբարում կեանք: Կեա- արմատը (կեալ, կեամ) դրսևորվում է մի շարք տարբերակներով. կեաց (երկայնակեաց, խաղաղակեաց), կեց (բարեկեցիկ), կեան (կեանք), կեն (կենակից, կենասեր...), կենս (կենսատուր, կենսական), կենց (կենցական, կենցաղ...), կենդան (կենդանանալ, կենդանություն...): (Տե՛ս Արմ. կեալ բառահոդվածը):

Նշված արմատներով գրաբարում առկա են բազմաթիվ կազմություններ (տե՛ս գրաբարի բառարանները):

Կեանք բառը գրաբարում բազմիմաստ է: Գրաբարի հոմանիշների բառարանում նշվում են. 1. Կենդանություն: 2. Վարք, քաղաքավարություն,

կենցաղավարություն: 3. Գույք, ստացուած ինչք, ապրուստ: (Ղազարեան, 2006):

Հոմանշային շարքի հիմնական անդամը կեանք -ն է:

Փոխաբերաբար արեւ բառը նույնպէս գործածվում է «կյանք» իմաստով: Հմմտ. «Երդունեալ յարեւն փարատնի» (Մանդ. ԽԲ, 15): Ռուս. "Клянуся жизнью фараона":


«...Երդնու նմա յարեգակն և ի լուսին ... և յարեւ Արտաշէզի և Տիգրանայ» (Խոր. 134):

Արեւշատութիւն բառում նույնպէս առկա է արեւ «կյանք» իմաստը:

«Շինեցին զհիւրատունս վասն արեւշատութեան տերանց մերոց» (ՆՀԲ): «Որդեկին իմոյ արեւշատութիւն հայցեցէք» (Հիշատ. Ե. ԺԲ, 43-44):

Արեւշատութիւն «կյանք» բառը հաճախական չէ: Վկայությունները հիմնականում հետհինգերորդ դարյան են:

A 93663



Գ. ՄԱՐԴՈՒՄ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

Մարդու երկրային կյանքը բաժանվում է տարբեր ժամանակահատվածների՝ կապված նրա ֆիզիկական, մտավոր զարգացման, գործունեության, հասարակության մեջ ունեցած դիրքի և այլ գործոնների հետ, որոնք, վերջին հաշվով, պայմանավորում են մարդ-իրականություն հարաբերությունը: Ժամանակային այդ հատվածի լեզվական անվանումները իրենց բաղիմաստային կամ ստուգաբանական հիմքով այս կամ այն չափով բնութագրում են տվյալ տարիքային ժամանակահատվածի բնորոշ կողմեր կամ կողմերից մեկը:

Մեզ հետաքրքրող իմաստային խմբի՝ նախագրային շրջանի տվյալները բավականին սոսի են, ինչ վերաբերում է զրաբարին, ապա այն շրջանում տարիքային անվանումները ներկայացնում են բազմազան ձևերով, բնիկ և փոխառյալ բառերի տարբեր հարաբերակցումներով:

Գրաբարում տարիքային ընդհանուր անվանումներն են տիժ) և հասակ բառերը. երկուսն էլ հ.-ե. ծագումով բնիկ հայերեն բառեր են՝ գործածության հնագույն ակունքներով:¹

Հասակ բառը արդեն V դարից ուներ և՛ «տարիք», և՛ «մարդու (կենդանու) մարմնի բարձրություն» իմաստը:

Նշված բառերի տարիքային կոնկրետությունը ի հայտ է գալիս միայն այլ՝ հուշող բառերի հետ գործածվելիս. հմմտ. դեռատի, նորատի, դեռահասակ, նորահասակ և այլն:

Գրաբարում տարիժ) «հասակ» բառը չկա:

Տարիքային անվանումների ընդգրկման պարզագույն շրջան մանուկ – երիտասարդ – ծեր-ն է: մանուկ – երիտասարդ շրջանի միջանկյալ օղակն է պատանի-ն, որը որոշակիորեն սահմանազատված չէ շրջանի աջ և ձախ եզրերից: Նկատենք, որ կան բառեր, որոնք (հատկապես հականշության դեպքում) արտահայտում են տարիքով «մեծ» կամ «փոքր» իմաստը. հմմտ. առագ/երեց-կրտսեր/փոքր, վարդապետ-աշակերտ, ծնող-որդի ..., սակայն այս դեպքում միշտ չէ, որ որոշակիանում են տարիքային սահմանները: Օրինակ՝ առագ եղբայր-

¹ Հայերենի տարիքային անվանումների առաջին ամփոփ ու համակարգված քննությունը կատարել է Գ.Հակոբյանը (Յակոբեան, 1995): Աշխատանքում ամենաընդհանուր ձևով ներկայացված են հայերենի տարբեր փուլերում, այլև բարբառներում գործառնող տարիքային անվանումները, արդի հայերենում այդ միավորների գործածության հաճախականությունը, փորձ է արվում գատորոշելու տարիքային խմբերի սահմանագծերը: Գրքի ծավալի և նյաւտակադրմամբ պայմանավորված՝ զրաբարին վերաբերող մասը որոշ առումով թերի է և լրացման կարիք ունի:

կրտսեր եղբայր զույգում որոշակի է միայն առաջինի տարիքով մեծ, երկրորդինը փոքր լինելը, բայց եղբայրների տարիքային որ խմբին պատկանելը առանց համատեքստի պարզ չէ:

Անդրադառնանք տարիքային խմբերի անվանումներին:

Ա) Կրտսեր տարիքային խումբ

Այս խմբի հիմնական և ամենահաճախական բառը մանուկ-ն է: Վերջինս հ.-ե. ծագումով քնիկ հայերեն բառ է՝ - mənuk- «փոքր, մանր» արմատով և -ուկ ձևությամբ (հիշյալ արմատն է մանր բառում): Մանուկ բառը նաև բառակազմական գործուն հիմք է (մանկանալ, մանկամայր, մանկտի, մանկակալ, մանկապէս, մանկակոտոր, գեղեցկամանուկ ...):

Գրաբարում (թերևս և մախագրային շրջանում) հաճախական մանուկ բառը զարմանալիորեն սակավ գործածական է բարբառներում:

ՆՀԲ-ն մանուկ-ը մեկնում է. 1. «տղայ մանրիկ, սաղմն և երեխայ նորածին, կամ սակաւահասակ, զաւակ. որդի», 2. «որպէս պատանի. երիտասարդ, ժիր. ծառայ. սպասատր. զինուոր. զօրական քաջ», 3. «փոքր. փոքրիկ. մանր և մանկական»:

Բստարանի նշած բառիմաստներից ակնհայտ է, որ հիշյալ բառը երբեմն «կրտսեր» տարիքի չափանիշ չէ, և եզրեր ունի պատանի, երիտասարդ տարիքային խմբերի հետ: Իսկ կրտսերություն նշելու դեպքում էլ երբեմն կոնկրետ ժամանակային սահմանն է խախտու. մանուկ է և՛ արգանդում գտնվողը, և՛ ծծկերը, և՛ 12 տարեկան տղան, որ կարող է ամուսնանալ և սերունդ ունենալ: «Խաղաց մանուկն յորովայնի նորա» (Ղուկ. Ա. 41): «Քանզի մանուկ կաթնակեր, որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ» (Եզն. 49): «Եւ մինչ մանուկն էր (Յուսիկ) յետ մի անգամ առաջնում զիշերին մտանելոյ՝ յղացաւ կինն» (Բուգ. 1): (Ըստ Բուզանդի հաղորդածի՝ Հուսիկը 12 տարեկանում արու զավակ է ունեցել): Մանուկ-ը կարող է և քաջ նետածիգ լինել. «Այս Վարազդատ էր տիով մանուկ, սրտեայ ... և յոյժ կորովի նետածգութեամբ» (Խոր. 308): Եզնիկից քաղված հետևյալ օրինակներում էլ մանուկ/մանկագոյն-ը «անչափահաս» իմաստը չունի, այլ թերևս՝ «պատանի, երիտասարդ». «Մանուկ կրօնաւոր որ ոչ է առ ոտս ծերոց, անջան որս է սատանայի», «Մանկագոյն կրօնաւորի մի ասէր զծածուկսն քո, զի մահ է նորա» (Եզն. 302): Եղիշեն գրում է. «Մի ոմն մանկագոյն ի մախարարացն ասէ» (13): Հաջորդ տողում մանկագոյնի փոխարեն պատանեակ է:

Մանուկ-ի «չափահաս, տղամարդ» իմաստը վկայված է և միջին հայերենում: Հայերեններից մեկում կարդում ենք. «Մանուկ ան մանկանն ասեն, որ զմանկան կին սիրէ ոչ, հապա ան մանուկն ասեն, թէ սիրէ՝ նա

պարծենայ ոչ» (տե՛ս Վ. Եղիազարյան, 2007, էջ 60): Արդի հայերենում մանուկ-ը «տղամարդ, հասուն տղամարդ» իմաստը չունի:

Մանուկ բառի հաճախական և նրբերանգային իմաստների առկայությունը հաստատվում է Ս. գրքի օրինակներով, որոնք մահ բացահայտում են քարզմանական որոշ յուրահատկություններ:

Նկատելի է, որ հունարենի բազմիմաստությունից հայերենը մախրնտրում է մանուկ բառը: Հմմտ. «Միթե կարող էք մանկանց առագաստի, մինչ փեսայն ընդ մոսա իցէ, հրաման տալ պահել» (Ղուկ. Ե, 34): Հուն. բնագրում ընդգծվածի համապատասխանակն է «որդի, տղա»: Ռուսերենում նույնպես сын է: «խաղաց մանուկն յորովայնի մորա» (Ղուկ. Ա., 41). հուն. βρέφος «մորածին», մահ՝ «տղա», ռուս. младенец: «Տէր, մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ» (Մտք. Ը, 6): Հուն. ραίς «երեխա, պատանի, ստրուկ», ռուս. сирота: «Ահա մանուկ իմ գոր ընտրեցի» (Մտք. Ժք, 18): Հուն. ραίς, ռուս. сирок «պատանի»:

Թեև զրաբարյան վկայությունների (ոչ միայն բառարանային) մեծ մասում մանուկ-ը արու երեխան է, բայց այն կարող է նշել մահ հակառակ սեռը. «Ձի ցուցցէ քէ մանուկն ասել և կոյս և աղջիկ մոյն միտք են» (Ոսկ. Մտք. I. 71): Երբեմն սեռային տարբերակումը կատարվում է այլ բառերի միջոցով. «Իսկ ընդէր ի ծնանել արու մանկանն մատի մա զբառասուն օր... և ի ծնանելն էգ մանկանն զուքսուն օր» (Եփր. Մատ. 213): Մանուկ բառով կազմված մանկամարդ-ը միայն իզական սեռ է մատնանշում:

Մանուկ-ի տարիքային կոնկրետությունը ի հայտ է գալիս մահ այլ բառերի հարադրությամբ. «Եւ էր մա մանուկ յաւուրց, լի արութեամբ» (Բուզ. 197): «Մանուկ հասակաւ» (Պտմ. Աղեքս. 377): «Մանուկ կաթնակեր» (Եզն.):

Կրտսեր տարիքային խմբի մյուս հաճախական բառը տղայ-ն է: Ըստ ՆՀԲ-ի ունի I. «մանուկ փոքր. երեխայ. սաղմն մատաղ տիօք», 2. «պարզամիտ, անգէտ, տգէտ»: Բառը փոխառյալ է ասորերենից: Փոխատու լեզվի համեմատությամբ հայերենում բառը իմաստային զարգացում է ապրել:

Գրաբարում, ըստ էության, բառը սեռային տարբերակում չուներ, այն որպես կրտսեր տարիքի ցուցիչ վերաբերում էր երկու սեռերին էլ, քեհ ավելի հաճախ՝ արական սեռին: Բերենք բնագրային որոշ օրինակներ. «Եւ կային շուրջ զծնօտիք սկուտեղն անքիւ բազմութիւնք տղայոց արուաց, այլ սակաւ իզաց» (Փարպ. 30): «Եւ ի ձեռն արու տղայոցն շինեցին նոքա զագգսն իբրեւ զտուն» (Եփր. մեկն. I, 135): Ահա մի վկայություն էլ 6-րդ դարից՝ Ամանունի վկայաբանությունից. «Յայնժամ

եկեալ դուստր թագատրին, որում անուն էր Մանդուխտ, որ էր ի տիոց տղայ, գեցեցիկ տեսլեամբ...» (Մատենագիրք հայոց, հատ. Գ, էջ 6):

Տղայ հասկացության ժամանակային սահմանը առավել ընդգծում է արտահայտվում որոշակի համատեքստերում. «Արդ զոր օրինակ մերժե երիտասարդություն զտղայություն և ծերություն զերիտասարդություն ... որպէս մերժեաց ... կրտսերություն զանդրանկություն» (Եփր. Մատ, 207): «Եվ զմանկտին, զոր տեսանէին տիս տղայութեան, առժամայն վաղ-վաղակի փոփոխեալք ի հասակ երիտասարդութեան կատարեալք լինէին» (Փարսլ. 30): «... հարին զնա սրով սուտերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց ստնդիացաց... (Խոր. 289):

Երախայ բառի հիմնական իմաստը «անկնունք, չկնքված»-ն է: «Մանուկ, փոքրահասակ» իմաստով բառը վաղ գրաբարում այնքան էլ հաճախական չէ: Ստույգ չէ և բառի ծագումը. իրանական *raḫik* կամ *raḥik* «երեխա, փոքրիկ» գայթակղիչ զուգահեռ է, բայց բառաձևը անմիջական փոխառության օգտին չի խոսում. թերևս ճիշտ է Աճառյանը՝ ենթադրելով ասոր. **raxa-* ձևը, «որից փոխառյալ են մի կողմից հայ. երախայ և մյուս կողմից պիլ. *raḫik* ձևերը» (տե՛ս Արմ. Երախայ բառահոդվածը):

Երախայ «մանուկ» իմաստը ամենայն հավանականությամբ ձեռք է բերվել հետագայում, քանի որ չկնքվածները հիմնականում երեխաներ են, իմաստափոխությանը անշուշտ նպաստել է նաև իրանական *raḫik*-ը: Պատահական չէ, որ երեխայ բառը տարբեր ձևերով առկա է միայն արևելյան տարածքի բարբառներում (Ղարաբաղ, Ագուլիս, Մեղրի...), որոնցում իրանական տարրը (նաև անմիջական շփումներով) բավականաչափ մեծ է:

Աղջիկ-ը սեռայինից զատ նաև տարիքային ցուցիչ է՝ հատկապես աղջիկ կին, աղջիկ պառավ հակադրության մեջ: Աղջիկ-ը տարիքային առումով կարող է լինել «երեխա», «երիտասարդ». բայց աղջիկ կին հակադրության մեջ այն ավելի կրտսեր է, քան ամուսնացածը. վերջինիս հոմանիշ է առնակին-ը, որը հաճախական է Ս. գրքում: Առնակին, որ նշանակում է «ամուսնացած կին» համապատասխանում է հուն. բնագրի կին-ին: «Ձի կին առնակին է (Ծննդ., Ի, 3):» (ռուս. ибо она имеет мужа): «Եւ այլ որ եթ շնայցէ ընդ առնակնոջ» (Հեւտ. Ի. 10): (ռուս. с женой замужного). Արմ.-ում աղջիկ բառը ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը այն ծագած է համարում հնդեվրոպական **ṛə́li-*ից: Գ. Ջահուկյանը (1987, 145), Վ. Համբարձումյանը, հիմք ընդունելով

Գամկրելիձեի և Իվանովի այն դրույքը, թե հ.ե. բարբառների մի մասում «կին» գաղափարը առնչվում է «աղալ, հատիկը մանրել» նշանակության հետ, աղջիկ չի բխեցնում է հ.ե. *al «աղալ»-ից (Համբարձումյան, 1998, 31):

Համբալ բառին ՆՀԲ-ն վերագրում է «նորածին, դեռաբոյս հասակաւ, երախայ տղայ», նաև «մանուկ. պատանի. երիտասարդ» իմաստները: Արմ.-ը «պատանի» և «երիտասարդ» իմաստը չի նշում: Մեզ ծանոթ վկայություններում համբալ-ը փոքր տարիք է մատնանշում: Այդպես են և ՆՀԲ-ի վկայած օրինակները:

Կրտսեր տարիքային խմբի անվանումներում կան մի շարք բառեր էլ, որոնք եզակի վկայություններ են, գուցե և աղավաղ կամ անստույգ:

Աղածրի բառը ՆՀԲ-ն համարում է «բառ անյայտ՝ իբրև երախայ, մատաղ» և բերում է միակ օրինակը. «Անկեալ աղա չեն աւասիկ ամենայն աղածրի երամ երամ բազմութիւն տղայոց» (Գ.Մակ. Զ. 12):

Աղփում բառով ՆՀԲ-ն դարձյալ բերում է մեկ օրինակ՝ ուշ գրաբարից. «Ի դեռաբողբոջ և յաղփում հասակին»:

Ծիղմ բառն էլ եզակի վկայություն ունի. «Թող աճեսցի մանուկս և զարգասցի փոքր մի ճիղմ և մատաղ հասակն»: Բնագրային օրինակը Ոսկեբերանից է: Արմ.-ում բառը ստուգաբանված չէ: Աճառյանը այս արմատի հետ է կապում ճղճիմ «փոքրոգի բառը, նաև Ղարաբաղի բարբառում գործածվող ճղմաղենք (ճիղմ + աղիք) «նրբաղիք, բարակ աղիքներ»:

Ծիգ-ը ՆՀԲ-ն չունի, Արմ.-ն էլ քաղել է. Երեմիա Մեղրեցու բառարանից. թեև գրավոր վկայություն չկա, բայց բարբառային ճիժ-ը կարող է հաստատել դրա գոյությունը. այլ հարց է գրաբարում դրա ավանդված լինելը կամ գրաբարյան փուլում օգտագործվելը, մանավանդ, որ այն ստուգաբանված չէ:

Խորշ-ը ՆՀԲ-ն չունի: Մագիստրոսի քերականության մեջ որպես հոմանիշ թվարկվում է փոքր տարիք նշանակող բառերի շարքում. «Տղայ դիեցիկ, ստնդեայ, տարրա. խորշ»: Ինքը՝ Մագիստրոսը, նշում է, որ վերոհիշյալները սեռային տարբերակվածություն չունեն: (Տես Արմ. խորշ բառահոդվածը):

Տարրա. (տես վերի օրինակը):

Կրտսեր տարիքի տարբերակումները իրականացնում են և այլ բառերի ու բառակապակցությունների միջոցով: Առկայանում են դեռ, մոր, ծին, մատաղ, հասակ բաղադրիչները: Օրինակ՝ ամենափոքրահասակները՝ դիեցիկ, դեռահասակ, ստնդեայ, կաթնակեր, նորածին, նորահասակ, նորատիք, արդատունկ, նորատունկ, մանկամարդ, մատաղածին,

արդածին բառերով: Գրաբարում կա և ստեճահատոյց բառը: ՆՀԲ-ն բերում է ստեճահատոյց ձևը՝ Ոսկեբերանից վկայված եգակի օրինակով: Ստեճահատոյց նշանակում է «կրծքից կտրած, այլևս մոր կրծքից չսնվող»: Եփրեմ Ասորու գործերից մեկում կա ստեճահատոյց ձևը. «Ձի որ արար զնոսա յղիս, արասցէ զնոսա մանկունս, որ արասցէ զնոսա, ստեճահատոյցս, արասցէ զնոսա սլատանիս» («Միոն», 1928, էջ 187):

Նոր ծնված հասկացությունը արտահայտվում է և՛ ախօրածին բառով: Վերջինս հաճախական չէ, բայց V դարից ունենք վկայված օրինակ. «...զայսարածին մանուկն նշանակէ» (Ագաթ. 197): Կա և երեկածին «երեկ ծնված, նորածին» (տե՛ս ՆՀԲ):

Գրաբարի բառարաններում «մանկահասակ», ծաղկահասակ բառը բառը վկայված չէ, բայց կա ծաղիկ հասակ «մանկահասակ»:

Բ) Միջին տարիքի խումբ

Այս խմբի հիմնաբառերն են պատանի և երիտասարդ: Եթե ժամանակակից հայերենում այս երկու բառերի ժամանակային տահմանները որոշ չափով հստակ են, ապա գրաբարում վիճակն այլ է. պատանին մի դեպքում ներառվում է կրտսեր տարիքային խմբի մեջ, մեկ այլ դեպքում՝ միջին: «Պատանի մի մանուկ եբրայեցի» (ՆՀԲ): «Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Գնել հանդերձ իրով կնամ...» (Բուգ. 99):

Մի վկայություն կա և կիսապատանեակ բառով. «Զանգի ահա կիսապատանեակ էր...» (Փիլ. ՄՆ. 436):

Պատանի-ն նաև սեռային տարբերակվածություն ունի՝ նշելով միայն արական սեռ: Այդպես է և պարման ին, որը վաղ գրաբարում նվազ հաճախական էր:

Երիտասարդ-ը միանշանակ մատնանշում է արական սեռ: Նույն տարիքի իգական սեռի դեպքում հանդես է գալիս այլ բառ, որոշ դեպքերում էլ օգտագործվում է երիտասարդուհի-ն: «Եվ զայս ոչ միայն զերիտասարդաց ասեմ, այլ և զկանանց և զաղջկանց» (Ոսկ. Մտք. 710): «Պատանիք ոմանք իբր առ երիտասարդուհեօք ճեմիցին» (Խոր. 39): «Երթային երիտասարդք և կուսանք և ամենայն բազմութիւն արանց և կանանց» (Եղիշ. 124):

Գրաբարում «երիտասարդուհի» իմաստը արտահայտվում է օրիորդ բառով: V դարից բազմաթիվ վկայություններ կան, և ենթադրելի է նրա հաճախական գործածությունը նախազրային շրջանում: Եթե ճիշտ է՝ Ղևտիանցյանի ստուգաբանությունը՝ ուրարտ. eun «տեր» + օրդի, ապա նախապես բառը քերևս ունեցել է սոցիալական տարբերակվածություն,

ինչպես տիկին-ը՝ տի «մեծ» + կին: V դարում օրիորդ-ը ավելի հաճախ տարիքային ցուցիչ է, իսկ տիկին-ը՝ դասային: Հմմտ. «Ե հաճոյ թուեցեալ Սմբատայ, յդէ առ արքայն Ալանաց տալ զտիկին օրիորդն Ալանաց զՍաթենիկ ի կնութիւն Արտաշիսի» (Խոր. 178):

Երիտասարդ-ը իրանական փոխառություն է: Պատանի-ն և պարմանի-ն հավաստի ստուգաբանություն չունեն: Ամենայն հավանականությամբ սրանք էլ իրանական փոխառություններ են. Պատանի-ի արմատը թերևս իրան. լոռ «մարմինն» է՝ բառացի «մարմին առած»:

Պարման-ի համար առաջարկվել է տարբեր ստուգաբանություններ (տե՛ս Արմ.), սակայն բառածևը, նաև իրանագիտական որոշ նոր տվյալներ խոսում են բառի իրանական ակունք ունենալու օգտին: Սողդերենում վկայված է բրո՛ո բառը, որի իմաստի հարցում արևելագետները համակարծիք չեն: Ըստ Ա.Փերիխանյանի՝ իրանական համատեքստում այդ բառին հարիր է այն իմաստը, որը առկա է հայերենում (А.Периханян, 1983, 76-77): Եթե դա այդպես է, ապա V դարից վկայված պարմանի բառը պետք է համարել իրանական փոխառություն (թերևս պարթևական որևէ բարբառից անցած):

Որոշ վերապահությամբ այս ենթախմբի մեջ կարելի է ընդգրկել այլ բառը: Արմ-ը տեսնում է միայն «տղամարդ», «ամուսին» իմաստները: Ավելի ճիշտ է ՆՀԲ-ն՝ ճշելով նաև «չափահաս կամ կատարեալ. հարբունս հասեալ. երիտասարդ և լի ատուրքք» իմաստները: Եթե այլ-ի տարիքային սահմանը հստակ չէ երիտասարդ-ժեր շրջայում, ապա այն որոշակիորեն հակադրվում է «անչափահաս» ենթախմբի բառերին: Հմմտ. «մինչ տղայ էի, իբրեւ զտղայ խորհէի, այլ իբրեւ եղէ այր զտղայութեանն խափանեցի» (Եզն. 232):

Այդ հակադրության հստակությունը հաճախ արտահայտվում է և այն հանգամանքով, որ այլ-ը ունի և «ամուսնացած տղամարդ» իմաստը. «կին երկն չիցի յառնէ իւրմէ»: «Արք, սիրեցէք զկանայս ձեր» (ՆՀԲ):

Տարիքային այս խմբի մեջ ներառվում են նաև այլ կարգի բառեր: Այսպես՝ իգական սեռի դեպքում օգտագործվում է առնակոյս-ը՝ ի հակադրություն առնակին-ի (առնակոյս ճշանակում է «նշանված, չամուսնացած աղջիկ», իսկ առնակին՝ «ամուսնացած կին»): «Իսկ առնակոյսն որ ի խօսման կայ ... (Եփր. Մատ. II, 275): Առնակոյս, առնակին-ը գրաբարում հաճախական չեն: Նվազ հաճախական է և աղջկամարդ-ը. այն ՆՀԲ-ն մեկնում է «մանկամարդ, կին մանկահասակ կամ ծաղկահասակ»: Տարիքային այս մույն խմբի մեջ է մտնում և մանկամարդ-ը՝ մատնան չելով իգական սեռ՝ պատանի-երիտասարդ տարիքային

սահմաններում. «Լամիմ մանկամարդացդ ամուսնանալ»: «Չպառաւունս իբրեւ զմարս, զմանկամարդս իբրեւ զքորս» (ՆՀԲ):

Վերոհիշյալ երկու օրինակները Աստվածաշնչից են՝ (Ա. տիմ. Ե, 2, 14). ռուս. МОЛОДЫХ, МОЛОДЫЕ ВДОВЫ: Քանի որ մանկամարդ ը հանդիպում է և ինքնուրույն գրականության մեջ, ուրեմն՝ ենթադրելի է, որ իգական սեռի երիտասարդ տարիք նշելու դեպքում գրաբարում օգտագործվել է մանկամարդ ը՝ հոմանիշադիշի ին:

Աստվածաշնչում «պատանի, երիտասարդ» իմաստով գործածվել է և գօտիաժու բառը. «...եւ իլին յամենայն գօտիաժուաց եւ ի վեր եւ կացին առ սահմանան» (Դ.Թազ. Գ. 21): Բառը փոխաբերացված իմաստ ունի և հարազատորեն ներկայացնում է բնագիրը. այդպես է և ռուսերենը. "начиная от носящего пояс": Փոխաբերացված է և ջրթափեմ «արքունքի հասնել» բառը: «Բայց ծնաւ ապա Փառանձեմ ուստր մի և կոչեցին զանուն նորա Պապ և սնուցին և ի չափ հասուցին: Եւ իբրեւ ջրթափեաց և եղեւ հոռիկու, ետուն զնա պատանդ ի դռն կայսերն յերկիրն Յունաց» (Բազ. 104):

Տարիքային այս ենթախումբը համարվում է և որոշ կապակցություններով (հարադրություններով). «Չդա իսկ հարցցէք, ինքնին ի չափ հասեալ» (Յովհ. Թ, 21): «Բայց յարքունս հասակի հասեալ մանկանն՝ փեսայացուցանէ...» (Խոր. 220): «Իսկ ի հասակ և ի միտս հասեալ որդոց նորա՝ յիշեցուցանեն մնա զայս» (Խոր. 55):

Գրաբարում չափահաս բառը չի գործածվել: Այդ նշանակությամբ հանդիպում ենք հասակաչափ, իսկ ուշ գրաբարում նաև չափահասակ բառերին:

Նշված իմաստն ունի և կատարելահասակ բառը (տես ՆՀԲ): Իսկ Բուզանդի վկայած բարեհասակ ը նույնպես կարելի է թարգմանել չափահաս: «Ապա երէց որդին Գրիգորիս եհաս, յեպիսկոպոսութիւն ... վասն հոգեկիր առաքինի արգասեացն, բարեհասակ և զգիտութիւն աստուծոյ յանձին կրելով» (Բազ. 10):

Գ) Ավագ ծեր) տարիքային խումբ

Այս խմբի հիմնական անդամներն են ծեր և պառաւ, բառերը՝ երկուսն էլ հաճախական Վդարից: Ծեր ը հ. -ե. ծագում ունի, իսկ պառաւ ը իրանական փոխառություն է: Գրաբարից վկայված բազմաթիվ օրինակներով հաստատվում է ծեր պառաւ սեռային տարբերակվածությունը. պառավ գրաբարում նշանակում է «ծեր կին»: «Չծերն մի պատուհա-

սիցես, այլ մխիթարեսցիր իբրեւ զհայր ... զսլառատունս իբրեւ զմարս... » (Առ. Տիմ. Ե. 1):

Կարող ենք ենթադրել, որ նախքան պառաւ-ի փոխառելը ծեր-ը գործածվել է և «պառավ կին» իմաստով: Այս ենթադրության օգտին է խոսում այն փաստը, որ ծերանալ, ծերութեան կիրառվում են և՛ «պառավ տղամարդոս», և՛ «պառավ կնոջ» համար: Բերենք օրինակներ վերջին կիրառությանը. «Եւ նա յղի էր ի ծերութեան իւրում» (Ղուկ. Ա, 36): «Դարձարութ, դստերք իմ, ... զի ես ծերացեալ եմ» (Հովոթ. Ա. 12): (Սա ասում է Ելիմելէքի կինը՝ Նոոմին) Գրաբարում միայն եզակի դեպքեր կան, երբ կանանց ծերանալը, ծեր լինելը արտահայտվում է պառաւել բայով: «Թէ արդարեւ ծնանիցիմ, զի ահա ես պառաւեալ եմ» (Մենդ. Ժ. 13): Աստվածա չնչում այլ դեպքերում օգտագործվում է ծերանալ-ը: «Եւ Աբրահամ և Սառա ծերացեալք էին անցեալք զատրբք» (Մենդ. ԺԸ. 11): Ս. զրքում պառաւել գործածված է 1 անգամ, իսկ ծերանալը՝ 38:

Ծերունի-ն վկայված օրինակների գերակշիռ մասում գործառում է արական սեռի իմաստով, սակայն կա և հակառակը. «Ահաունիկ Եղիսաբեթ ազգական քո՝ ծերունի ամուլն հղի է» (Եփր. Ճառք. 17):

Ծեր հասկացությունը, կապված տարիքի, փորձառության հետ, ենթադրում է բարություն, բարոյականություն և այլ առաքինի հատկանիշներ. «Իսկ եթէ ծերութեանն նոյնպէս անառակ իցէ, զիարդ արժանի լինիցի այնպիսին ծեր անուանել, որ ոչ ի հասակէն և յալեսցն ակն ածիցէ» (Ոսկ. Պօղ. II, 493):

Վերջում բերենք քննարկ խոսքի արժեք ունեցող մի օրինակ ծեր բառով, որտեղ նաև հստակ հսկադրվում են տարիքային շրջանի հիմնական միավորները: «Ծերն փառասիրէ, երիտասարդն հպարտանայ, մանուկն չինազանդի: Ծերն կամի առնել և ոչ կարէ, երիտասարդն կարէ առնել և ոչ կամի, մանուկն ոչ կամի և ոչ առնէ» (Օրինակը Մանդակունուց է): (Տեր-Մկրտչյան, 1998, 266):

Ծեր ծերունի պառաւ հոմանշային շարքը լրացնում են նաև աւարդ, գրայիդա, սաքա բառերը, որոնք ըստ բառարանային տեղեկությունների վկայված են մեկական անգամ:

Աւարդ-ը ըստ ՆՀԲ-ի և Արմ-ի ունի «պառավ կին» իմաստը՝ նկատի առնելով Փիլոնի միակ վկայությունը. «Եւ ոչ աղջկունս միայն, այլ զաւարդս» (ՆՀԲ): Բառի եզակի վկայությունը հիմք չի տալիս հաստատապէս պնդելու, թե աւարդ-ը միայն «պառավ կին» է (այդ չի հաստատվում նաև ստուգաբանական տվյալներով): Նկատենք, որ 12-րդ դ. վկայված մի օրինակում աւարդական-ը նկատի ունի ոչ թե կնոջը, այլ

տղամարդուն: «Եւ իբրեւ հասանէր ի տիս ասարդական հասակին ... տենչայր կարգի քրիստովնէից» (Տեր-Մկրտչյան, 1998, 64):

Մաքս-ն ասորական փոխառություն է, իսկ գրայիդա-ն՝ հունական. վերջինս ՆՀԲ-ն չունի:

Բնիկ հայերեն արմատներով կազմված զառամ և ալևոր բառերը նույնպես լրացնում են ծեր բառի հոմանշային շարքը: Զառամ-ը վաղ գրաբարում հաճախական չէր, սակայն բառակազմական կադապարը՝ գառ-ամ, հուշում է, որ բավականին հին կազմություն է:

Ծեր տարիք հասկացությունը արտահայտվում է նաև մի շարք հարադիր ձևերով. «Ահաադիկ դու ծերացար և հասէր ի չափ ատուրց քոց» (Եվր.մեկն. 367): «Այլ ի մանկութեան ծերացելոց ադոքս առնել և ի բուն իսկ ի խոր ալիս հասանել» (Ոսկ. Մտք. II, 711): «Եւ Դաւիթ էր ծեր և լի ատուրք» (Ա. Մն. ԻԳ, 1): «Ձի ես ծեր եմ և կին իմ անցեալ զատուրքք իրովք» (Յեսու., ԺԳ. 1): «Վախճանեցաւ Յոք ծերացեալ և լցեալ ատուրքք» (Յովք. ԽԲ, 17): Աստվածա չն չում բազմիցս հանդիպում ենք հին ատուրց բառակապակցությանը՝ «ծեր» իմաստով: «Նա և՛ ի մեզ և՛ ծեր և՛ հին ատուրց գոյ» (Յովք. ԺԵ, 10): ՆՀԲ-ն մեկ օրինակ է բերում նաև ծերատուրց բառով: «Պատկառէր Եղիսաբէթ զի ծերատուրցն դարձաւ յամուսնութիւն»:

Պետք է կարծել, որ վերոհիշյալ ոճերը հայերենին բնորոշ չեն եղել. սրանք հիմնականում քարզմանական գործերից են՝ պատճենում – քարզմանություններ:

Ամփոփենք. գրաբարում մարդկային տարիք մատնանշող խմաստային խումբը ներկայանում է մի շարք բառերով ու կապակցություններով. հոմանշային անդամների թվի տեսակետից ավելի բազմազան է «կրտսեր տարիք» իմաստային ենթախումբը, որի հիմնաբառն է մանուկ-ը: Գրաբարում ավելի հստակ է կրտսեր տարիք-ծեր տարիք տարբերակումը: Միջին օղակի միավորների՝ տարբերակումը միմյանցից, ինչպես նաև նախորդող և հաջորդող շրջայի անդամներից այնքան էլ որոշակի չէ: Կարելի է կարծել, որ վաղնջահայերենում տարիքային շրջայի միջին օղակը տարբերակված չի եղել. սա կողմնակիորեն կարելի է փաստարկել նաև այն հանգամանքով, որ շրջայի բոլոր միավորներն էլ իրանական փոխառություններ են, որոնք հայերեն են մուտք գործել ավելի ուշ:

Գ. ՄԱՀ/ՄԵՌՆԵԼ ՀԱՍԿԱ ՅՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ
ԼԵԶՎԱ ԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ԸԳՐԱԲԱՐՈՒՄ

*Պետք է վախենալ ոչ քե մահից,
այլ դատարկ կյանքից:
Բրեխտ*

Մահ հասկացության ընկալումը, նրա գիտակցական և զգայական իմաստավորումը, հետևաբար և լեզվական արտահայտությունը նույնական չեն տարբեր հանրությունների լեզվամտածողության մեջ: Հասկացության դրսևորման և արտահայտության յուրահատկությունը տվյալ հանրության աշխարհընկալման ու կենսափոխակերպության արգասիքներ են՝ կապված միջավայրի, բնակլիմայական պայմանների, կրոնական-հավատալիքային պատկերացումների, ուրիշ հանրային խմբերի հետ ունեցած շփումների ու ազդեցությունների և բազմազան այլ գործոնների հետ: Ավելին, հասարակության զարգացման տարբեր ժամանակահատվածներում որոշակի փոփոխություններ են արձանագրվում մի շարք հիմնական հասկացությունների, այդ թվում, ծնունդ, կյանք, մահ հասկացությունների ըմբռնման, արժևորման, սրանց հետ կապված զանազան ծիսային, պաշտամունքային, լեզվամտածական և այլ համակարգերում: Օրինակ, երե մինչև մ.թ. IV դարը հայերի՝ մեզ հետաքրքրող հասկացության ընկալման հիմքում հերանոսական աշխարհայացքն էր՝ էթնիկական յուրահատկություններով ու հարևան ժողովուրդների (Պատկապես իրանական) ազդեցությամբ, ապա քրիստոնեության ընդունումով կատարվեց որակական խոր տեղաշարժ, աշխարհընկալման էական փոփոխություն, որն, իհարկե, աստիճանաբար, նոր ուսմունքի յուրացման ու կիրառման գործընթացում արմատավորվեց՝ ցարդ պահպանելով հերանոսական որոշ դրսևորումներ:

Գրաբարյան մատենագրության մեջ մահ ձեռնել հասկացությունն արտահայտվում է մի շարք բառապաշարային-քերականական միջոցներով: Այդ վկայություններն օգնում են նաև պատմության, ազգագրության, մշակույթի որոշ հարցերի պարզաբանմանը:

Եթե հնաբավոր լիներ ի մի բերել հայոց լեզվի բոլոր փոփոխությունները, ապա որոշակիորեն կարելի կլիներ ուրվագծել մահ ձեռնել իրողության ըմբռնման և լեզվական արտահայտության փոփոխությունների ընթացքը և առանձնահատկությունը, իսկ բարբառային տվյալներն էլ կնպաստեին տարածքային էթնիկական յուրա-

հատկությունների գոնե որոշ գծերի բացահայտմանը: Բոլոր դեպքերում գրաբարյան տվյալները հարցի պարզաբանման հիմքերն են, համեմատության գլխավոր եզրերը:

Մեզ հետաքրքրող հասկացության արտահայտության բազմազանության մեջ որպես հիմնաբառ ակնհայտորեն առանձնանում են մահ և մեռնել միավորները: Այս երկու բառերը, ծագած լինելով հ.ե. նույն արմատից, հայերենում դրսևորում են իմաստա-գործառական յուրահատկություն. *mer-արմատը՝ հայ. մեռ միայն բայական գործառույթ ունի՝ մեռանիմ: Մեռ տարբերակով անվանական-գոյականական կիրառություն չկա: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մեր նախնիները մահը ընկալել են, նախ և առաջ, որպես գործողություն: Հնարավոր է նաև, որ եղել է *mer-ով գոյականական ձև (թեքև *mor տարբերակից, որն առկա է հ.ե. այլ լեզուներում), բայց մեզ չի ավանդվել:

Մահ բառն էլ վկայված է V դարից: Նշված դարից մահ բայական ձևի (մահել, մահանալ) վկայություն չկա²: Կիրառական այս առանձնահատկությունը հուշում է, որ մահ-ը՝ որպես գոյական, հայերենը հնդեվրոպականից չի ժառանգել, այլ փոխառություն է իրանական լեզուներից: Այդ հաստատում է նաև մարհ ավելի հին ձևը, որի արտաքին-հնչյունական կողմն իսկ խոսում է հոգուտ իրանականի: Մի խոսքով, ժամանակային առումով ավելի հին է մեռանիմ-ը, քան մահ-ը, իսկ վերջինս էլ նախորդում է իր բայական ձևին:

Անդրադառնալով մահ/մեռնել հասկացության ըմբռնմանն ու լեզվական արտահայտություններին:

Ա) Մարդը որպես մահկանացու կամ մահը որպես բնական երևույթ:

Սա մահվան հիմնական ընկալումն է: Մյուս ընկալումներն ածանցյալ են՝ կապված տարբեր գաղափարախոսությունների, մահվան ու կյանքի տարբեր հարաբերակցումների ու արժևորումների հետ: V դարում, օրինակ, հայերին ծանոթ էր նաև մահվան աստվածաշնչային ընկալումը: Նկատենք նաև, որ հայերին ծանոթ գրադաշտական ուսմունքում մահը աստվածաստեղծ չէ, այն արարել է Զրվանի որդի Արիմանը:

² Նոր հայկազյան բառարանը V դարից վկայություն չունի: Անվերապահորեն չժխտելով մահանալ բառի առկայությունը V դ. մատենագրության մեջ՝ կարելի է հաստատապես ասել, որ այն լայն գործածություն չունի: Ինքնուրույն գրականության մեջ, օրինակ, բառն ավանդված չէ: VII դ. վկայված է Մ. Կաղանկատվացու գործում «Արտաւագդ՝ սպարապետն Հայոց... մահանայ » (Կաղնկ. 29):

Ի դեպ, այդ ուսմունքը քննադատում ու երգիծում է V դարի մատենագիր Եզնիկը: Մահվան աստվածաստեղծ կամ այլաստեղծ ընկալումները, ի վերջո, չեն ժխտում մահվան՝ որպես բնական երևույթի փաստը:

Այն, որ հայերիս մոտ նախնականն ու հիմնականն է եղել մարդ - մահկանացու ըմբռնումը փաստարկվում է մարդ և մեռանիլ բառերի հ.-ե. նույն *mer- արմատից ծագած լինելով: Ի դեպ, հիշյալ արմատի նշված յուրահատկություններն առկայանում են նաև հ.-ե. այլ լեզուներում. հ.հնդ. mārta «մարդ» - mārtya «մահկանացու», ավեստ. maša «մարդ» - marəta «մահկանացու», հ. պրս. martya և այլն: Մահ իմաստով հ.-ե. *d^[h]ey «կորչել, մեռնել» ձևը պահպանված է մի շարք լեզուներում: Հայերենում նույնպես պահպանվել է այդ արմատը դի, դիակ բառերում (Гамкреладзе, Иванов, 475):

Մարդ մահկանացու ընկալման արտահայտությունն ենք գտնում գրաբարյան բազմաթիվ օրինակներում. «... ժամանակ մահկանացուսց սուղ և անյայտ»: (Խոր. 28), «Ի լուսնոյ և ի վեր զամենայն ինչ որ է՝ անմահ համարել և որ ինչ նորա ի ներքոյ՝ մահկանացուս»: (Եզն. 204): «Մեր մերով մահկանացու մարմնովս կարիցեմք չարչարակից լինել անմահ մեծութեանն»: (Եղիշ. 148):

Ապականացու «մահկանացու» իմաստն արձանագրում են գրաբարի բառարանները:

Բ) Մահը որպես երկնային կյանք: Մահվան այս ընկալումն ակունքվում է վաղ հեթանոսությունից և իր նոր զարգացումը ստանում քրիստոնեական ուսմունքում. հաճախ մեռնել (երկնային կյանք) հասկացություններն աղերսվում են Քրիստոս անվան հետ՝ լեզվական արտահայտության տարբեր միջոցներով. «Կիսօրեայ ելին յաճարիէ՝ երթալով առ յոյսն իրեանց Քրիստոս», «Ընդ նմին յիսչեսջիբ ... և զ դստրիկն իւր ..., որ յայս ամի փոխեցաւ ի Քրիստոս»³:

Վերոբերյալ օրինակները հիմնականում ուշգրաբարյան են, իսկ վաղ գրաբարում նման կարգի վկայումները հաճախական չեն, որը պետք է բացատրել այն հանգամանքով, որ V դարում դեռևս լեզվական այլևայլ արտահայտություններով Քրիստոսի մոտ այլաբերացումը լայն տարածում չուներ. եղած օրինակներն էլ հիմնականում վերաբերում են

³ Վերոհիշյալ օրինակները բաղել ենք Դ.Գյուրջինյանի «Քրիստոս անունը հայերեն կայուն բառակապակցություններում» հոդվածից, «Էջմիածին», 1993, Դ-Ձ, էջ 80-87:

բարձրաստիճան կրոնավորներին: Ահա մի հատված Կորյունի գրքից. «...երանելոյն Սահակայ լցեալ ատուրքք երկայն ժամանակօք ... ի Զրիստոս աւանդեալ ...»: Սա Սահակի մահիվան նկարագրությունն է, իսկ ներքոնիշյալը՝ Մաշտոցի «... յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ ... և նովին հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն Զրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ ատուրց հիւանդութեանն, յերեքտասաներորդում ամսեանն Մեհեկանի...» (Կոր. 1994, 103-105):

Ուշ գրաբարում նման կարգի օրինակներում հաճախական է Աստուած կամ տէր բառը. «Վախճանէ և յավելու ի Տէր» (Դ-աւրժ. 29): «Այլ Մաշտոց այրն Աստուծոյ կացեալ ամի մի ի հայրապետութեան փոխի առ աստուած»⁴: Համեմատենք այս վերջին նախադասության իմաստի արտահայտման եղանակը V դարի մատենագիրների վկայության հետ. «Եւ երանելին Մեսրոպ յաշխարհէ փոխեցաւ» (Խոր. 356): «Եւ վախճանեցաւ երանելին Մաշտոց ի Վաղարշապատ քաղաքի» (Փարպ. 38):

Երկնային կյանքը, երկրայինի վախճանը ենթադրում է նրա հավիտենության խորհրդանիշը. «Զյաւիտենիցս գտցէ զկեանս», «կորուսին զանձինս, այսինքն զկեանս աշխարհի, զի զյաւիտենիցն գտցեն զկեանս» (Ածբ. 292):

Երկնային կյանք հասկացությունը արտահայտվում է նաև վերին աշխարհ, հանդերձեալ աշխարհ, երբեմն նաև այն աշխարհ կապակցություններով. «Յամեալ մոռանայցէ զերկիւղ հանդերձելոյ աշխարհին» (Փարպ. 118):

Գ) Մահը որպես կյանքի հակադրություն. Այս ըմբռնման լեզվական արտահայտությունը սովորաբար դրսևորվում՝ կյանք (կենցաղ) գոյականի և որոշ բայերի հարադրությամբ՝ մեռնել, կյանքից հեռանալ նշանակությամբ: «Բանգի հիվանդացեալ Վաղենտիանու ... վճարի ի կենցաղոյս» (Խոր. 291): Մորթագերծ մահուամբ պակասեցաւ ի կենաց» (Եզն. 117): «Բարձցէ զնոսա ի կենաց» (Փարպ. 88): «Եթէ որպէս Պապայ դեղ մահու արբուցեալ սրբոյն ելոյժ ի կենցաղոյս» (Խոր. 305): Ի կենաց արկանել, ի կենդանութենէ արկանել բառակապակցություններն ունեն «մեռնել, սպանել» իմաստը: «Ի կենաց արկանին զմա յեզիպտոս» (Եւ. քր., ՆԲՀ):

⁴ Օրինակը քաղված է Ասողիկի Պատմությունից (տե՛ս Հայկական համաբարբառ. 18, Գիրք 2-րդ, էջ 548):

Օրինակների այս շարքն ավարտենք Դավիթ Հարքացու մի հարց ու պատասխանով.

- հարց- Չի՞նչ է մահ
- պատասխան- Ի կենաց լուծումն (տե՛ս Տեր-Մկրտչյան, 1998, 239):

Դ) Մահը որպես հոգու՝ մարմնից անջատում: Երկրային կյանքի հոգու ու մարմնի միասնությունը հակադրվում է երկնային կյանքի՝ հոգու մարմնից անջատման: Հին հայերենում հոմանիշներ են հոգի, ոգի, շունչ բառերը: Շունչ-ը հաճախական չէր և քերևս բարբառային կիրառություններ ուներ, Եզնիկն, օրինակ, շունչ կիրառում էր հոգի իմաստով: «Ոչ տեւեր մարմինն ընդ շնչոյն յերկար ժամանակս կեալ» (Եզն. 72): «Որք զշունչն անարար անմահ և աստուածեղէն յԱստուծոյ բնութենէ անտի ասեն» (Եզն. 209): «Չմարմին իբրեւ զայլսն կորստական համարին և զշունչսն փոփոխելի ի մարմնոց ի մարմինս» (մ.տ. 228): Այդ բառին հանդիպում ենք նաև ոսկեդարյան քարգմանություններում. «Շունչ ոչ մեռանի ... եւ եթէ մարդ ի յորոշել շնչոյն մեռանի, ոչ ի կորուստ, այլ ի դադարս մեկնի շունչն» (ՀԱ, 1956, 410-411):

Հոգի + բայ մի շարք հարադրություններ գրաբարում ունեն «մահանալ» իմաստը: Ուշագրավ օրինակ է Քրիստոսի մահվան նկարագրությունը՝ ըստ չորս Ավետարանների:

«Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ և արձակեաց զոգին» (Մտք. ԻԷ. 50): «Եւ Յիսուս արձակեաց ի ձայն մեծ և եհան զոգի (Մարկ. ԺԵ. 37): «Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ. Հայր, ի ձեռս քո աւանդեն զհոգի իմ. զայս իբրեւ ասաց եհան զոգի» (Դուկ. Իգ. 46): «Իբրեւ առ Յիսուս զքացախն հանդերձ լեզուվն ասէ. Ամենայն ինչ կատարեալ է և խոնարհեցուցեալ զզլուխն ավանդեաց զոգին» (Յովհ. ԺԹ. 30):

Բերենք այլ օրինակներ. «... վճարեալ հոգին սատակէր անխոստովան» (Փարսլ. 152): «Ամմիտ, յայսմ գիշերի զհոգիդ քո պահանջեն հրեշտակք» (Վկայք... 194-195): «Եւ եղև հանել ոգոցն, քանզի մեռաւ» (ՆՀԲ): «... կործանի յերկիր յարուցեալ. եւ փչէ զոգին» (Խոր. 36-37):

Ե) Մահը որպես կորուստ: Լեզվական արտահայտությունն իրականանում է կորուստ, կորնչիմ բառերով: ՆՀԲ-ն կորուստ-ը մեկնում է «կորնչիմ, կորուսանելն, սատակումն. մահ, եղծումն ...»: Այսինքն՝ մահ

նշանակությունը կորուստ բառի հիմնական իմաստներից մեկն է դիտվում:

Պետք է արձանագրել, սակայն, որ այդ իմաստը երևակվում է համատեքստում, նախորդ կամ հաջորդ մտքի կապով, հաճախ էլ մահ բառի առկայությամբ:

«Աստուած ... ոչ խնդայ ընդ կորուստ մարդկան» (Եզն. 75): «Երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում և յանգիտ կորուստն յողարկի ի մահտան իւրում» (Եղիշ. 14): «Գոյժ արկանէր մնա զիւրոյ առնն տարապարտ կորուստն» (Բուզ. 101):

Չ) Մահը որպէս հանգիստ: Լեզվական արտահայտությունն իրականանում է հանգչիմ, հանգիստ բառերով: Հանգչել, ըստ ՆՀԲ-ի, ունի «մահանալ, վախճանվել» իմաստները: Գրաբարում մնան կարգի բազմաթիվ օրինակներ կան, որոնք հուշում են, թե մահվան այլաբանական այդ ընկալումը տարածված է եղել հին հայոց մեջ. այդ է հաստատում գերեզման բառի հանգստոց, հանգստարան հոմանիշների առկայությունն ու հաճախականությունը:

Հանգիստ, հանգչիմ բառերով մահ իմաստի մեջ առկա է վերաբերմունքային շեշտադրում, այն է՝ նկատի է առնվում միայն դրական անձնավորությունը, ինչպէս սատակեմ-ի դեպքում՝ բացասականը: Բերենք մի քանի օրինակներ. «Եւ փոխանակ սակաւ աշխատութեանս մերոյ՝ բազմապատիկ հանգիստ ընդունելոց ենք» (Եղիշ. 154): Մինչեւ ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ հանգստեանն» (Բուզ. 5): «... և կատարեալ զընթացս մահատակութեան իւրոյ հանգչէր» (Փարս. 5): «Եւ յետ հանգստեան սրբոյն Ներսիսի զմաց չոգաւ ի գաւառն Կորդուաց» (Բուզ. 185):

Այլաբերացման (տաբուացման) մույն ընկալումով մահանալ իմաստով գործածվում է և նմջել-ը: Որ այս իմաստով նմջել-ի գործածությունը բավական հին ու հաճախական է, վկայում է և այդ բայի անցյալ դերբայի՝ նմջեցեալ «մահացած» իմաստով կիրառությունը (սակավ դեպքերում է արտահայտում «քնած» իմաստը): Բերենք մի քանի օրինակ նմջել բառով. «Կին կապեալ է, ցորքան ժամանակս կենդանի է այր մորս, ապա եթէ նմջիցէ այր մորս, ազատ է, ում կամիցի ամուսնանալ, բայց միայն Տերամբ» (Ա. Կորնթ. Է. 39): «Իսկ արդ որ նմջեցինն ի Զրիստոս կորեա՞ն արդեօք (ն.տ. ԺԵ. 18): «Որում դյուրին է միսսնգամ մորոգել զմեզ ի հողոյն և զամենայն զյառաջագոյն գնմջեցեալն» (Եղիշ. 68):

Ստուգապես դժվար է փաստարկել, թե նախաքրիստոնեական շրջանում հայերը մեջել-ը «մահանալ» իմաստով օգտագործել են, թե ոչ, հաստատ է մի բան, որ այդ ընկալումն ավելի արմատավորվել է Աստվածաշնչի շնորհիվ, որտեղ մի շարք վկայություններ կան մեջել «մահանալ» նշանակությամբ: «Դազարոս բարեկամ մեր մեջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա» (Յովհ. ԺԱ.11): «Երանի մեռելոցն, որք ի Տէր մեջեցին» (Յայտ. ԺԴ. 13):

Թերևս ճիշտ է այն ենթադրությունը, որ «մեջել բայը միանգամայն որոշակի գատում է ցոյական և ոչ ցոյական ձևերի իմաստները: Յոյական ձևը նշանակում է մեռեալ, մեռել, իսկ մեջեալ ձևն անցյալ դերբայ է՝ քնել իմաստով» (Առաքելյան, 1981, 183):

Գնացական բառի «վախճանած» իմաստը նշում է ԱԲ-ն: Անցատը բառի «մահականացու» կիրառությունը ՆՀԲ-ն չի արձանագրում:

Է) Մահը որպես ավարտ, վերջ: Այս ընկալման դեպքում նկատի է առնվում կյանքի՝ որպես գոյության մի ձևի՝ երկրայինի ավարտը: Գրաբարում վերջ բառին հոմանիշ մի շարք միավորներ արտահայտում են մահ, բայական ձևով՝ մահանալ հասկացությունը:

Վախճան- և՛ ՆՀԲ-ն, և՛ Արմատական բառարանն առաջին հերթին նշում են «վերջ», ապա «մեռնել» իմաստը: Բառը Արմատական բառարանում ստուգաբանված չէ, թերևս այն իրանական փոխառություն է՝ նախնական «վերջ, ավարտ» նշանակությամբ (տե՛ս Հովհաննիսյան, 1990, 260): Վախճան «մահ» - վախճանիմ «մահանալ» իմաստն ամենայն հավանականությամբ ձեռք է բերվել հայերենի հուլի վրա: Ահա մի բանի վկայություն նշված բառով: «Հասանէ վախճան Արտաշիսի» (Խոր. 190): «Եւ մինչ դեռ պատասխանի այսց թղթոց ոչ էր ընկալեալ՝ վախճանի Արգարիտս» (ն.տ. 156):

Ջրա- Ըստ ՆՀԲ-ի՝ ունի «եզր, կատարած, վախճան, յանգ, սպառուած, ..., վնաս, մահ» իմաստները: V դարի մատենագրության մեջ այս բառը հաճախական չէ: Եղած հատուկեմտ օրինակներում էլ զրա ունի «վերջ» իմաստը. հմմտ. «Ապրեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն և զրաւ պատերազմին արարեալ» (Խոր. 184):

Մահ իմաստով վկայություններն ու շրջանից են: «Հրամայեաց դահճացն տալ ի վերայ նոցա զվճիռ մահու, փութով զրաւ առնել նոցա ի սատակումն սրոց» (Արծր. 266): «Նոյն ժամ հրաման հասեալ զրաւ առնել կենացն նորա» (ն.տ.):

Վճարել-բազմաթիվ իմաստներից զատ ունի նաև «մեռնել» իմաստը: «... որպէս Եսեբիոս վճարէր ի բանդին» (Բուզ. 81): «Իսկ նա մեծաւ խնդութեամբ կարկառեալ զպարանոցն, վճարէր ի սուտերէն» (Բուզ. 149): Ավելի հաճախական է կեանք կենցաղ բառերի հետ գործածությունը: «Քանզի հիւանդացեալ Վաղենտիանոս ... վճարի ի կենցաղոյս» (Խոր. 291): «... քէ քանիք և ոյր ոմանք ի նոցանէ որք աստուածապաշտութեամբ վճարեցին զկեանս ...» (Խոր. 68): «Մորթազերծ մահուամբ պակասեցաւ ի կենաց» (Եզն. 117):

Կատարել- իմաստալին բազմազանության մեջ ունի և «վերջացնել, մահանալ» նշանակությունը: «Եհաս ժամ կատարման մերոյ» (Եղիշ. 177): «Ե կատարեցան սոքա վեցեքեան սուրբ և ցանկալի մահուամբն իրեանց» (Եղիշ. 182): «Ե այս անուանք են քաջ մահատակացն, որ կատարեցան» (Եղիշ. 119): Բառի հիշյալ կիրառությունների դեպքում դարձյալ նկատելի է վերաբերմունքային (դրական) մոտեցումը:

Վերջանալ- ՆՀԲ-ն «մահանալ» իմաստով վկայում է միայն մեկ օրինակ. «Թագաւորեցելոյ քաղաքին առաջնորդ յաղագս ծերութեան վերջանալոյ»: Վերոգրյալ օրինակը V II դարի թարգմանություն է. ըստ երևույթին, թարգմանչի նորաստեղծություն կամ հումարենից անհաջող թարգմանություն: V դարի մատենագրությունից վերջանալ «մեռնել իմաստը մեզ չի հանդիպել: Վերջանալ ին հումանիշաւաբառել բառով նույնպէս «մահանալ» նշանակությամբ կիրառություն չկա: Ավելացնենք նաև, որ վերոգրյալ բառերից միայն վախճանել-ի հիմքն է, որ գոյականաբար գործածվում է «մահ» իմաստով: ՆՀԲ-ն քեպետ զրաւ բառահոդվածում նշում է և «մահ» իմաստը, սակայն վկայված օրինակում իսկ զրաւ-ը հանդես է գալիս բայական հարադրության կազմում: Օրինաբ. ՆՀԲ-ն մեկնում է «օր վախճանի ի վերայ հասեալ, մահ, պատահարք մահոս»

Ելքենմ «կյանքի վերջ, վախճան» իմաստն արտահայտվում է ժամանակ բառով: ՆՀԲ-ն ժամանակ գլխաբառի բազմաթիվ իմաստների շարքում նշում է նաև «օրհաս, կատարած կենաց»՝ հղելով Սուրբ գրքի հետևյալ օրինակները. «Եթե հասեալ իցէ ժամանակ մեր, մեռցուք քաջութեամբ», «մերժեցուցեր զաւուրս քո և ածեր զժամանակ ամաց քոց»: Ինչպէս նկատելի է, այս կիրառությունը հայերենում հաճախական չէ, և իմաստը հասկացվում է համատեքստից, իսկ այդ կիրառության ակունքն ու պատճառը թերևս կարելի է տեսնել Եվսեբիոս Եմեսացու մի հաղորդման մեջ: Եվսեբիոսը, մեկնելով Ծննդոց գրքի «Ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ» (Զ. 13) հատվածը, բացատրում է. «իսկ հեբրայեցին և ասորին զժամանակն վախճան ասեն կամ կատար-

րած» (Եւս. մեկն. 44): Այսինքն՝ առկա է աստվածաշնչյան ասորա-
բանության գործոնը⁵:

Ը) Մահը որպէս գաղափարախոսություն: Այս դասակարգումը և անվանումը խիստ պայմանական է, սակայն քանի որ ներքոհիշյալ օրինակներում մեռնել-ն անպայման ենթադրում է «մահանալ որևէ գաղափարի, համոզմունքի համար», տվյալ դեպքում քրիստոնեական վարդապետության և վերջինիս հաղթանակի համար, ուստի նպատակահարմար գտանք ներկայացնել առանձին դասակարգմամբ:

Հայ մատենագրության մեջ քրիստոնեական ուսմունքի ջատագովների կյանքի վախճանը հաճախ արտահայտվում է մարտիրոսանալ, վկայել, մահատակել (ըմ) բայերով: «Պետրոս և Պօղոս առաքեալքն ի Հռոմ վկայեցին», «ոյր վկայեաց Գայիանէ», «Անտիոքացոց եպիսկոպոս մարտիրոսացա», «բազում հայրապետք մարտիրոսացան», «մահատակեցան ի յերկրի և յերկինս պսակեցան»: (Օրինակները քաղված են ՆՀԲ-ից):

Անկախ այլևայլ ընկալումներից՝ հայերը, անշուշտ. նաև մահվան ճակատագրապաշտական՝ կյանքի տևողությունը վերուստ սահմանված լինելու գաղափարին են ծանոթ եղել: V դարում Եզնիկն առարկում է ճակատագրապաշտությանը և քննադատում քաղղեաներին, որոնք կարծում են թե «...ծննդոց պատճառս և զմահուանց՝ յատեղաց իբրև ի կենդանեաց դնեն: Որպէս թէ յորժամ ծնանիցինն, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրոյր անվրէպ սահմանիցին և ըստ այն ոչ յառաջել ումէք մեռանել հնար իցէ և ոչ յամենալ» (Եզն. 154):

Եզնիկի այս քննադատությունը հուշում է, որ մահվան այդօրինակ ըմբռնումը հնում և իր ապրած ժամանակաշրջանում կար, իսկ իր ժխտողական վերաբերմունքն անպայման խարսխված է քրիստոնեական գաղափարախոսության վրա:

Ինչքան էլ մահվան՝ որպէս բնական երևույթի ընկալումը արմատավորված լիներ մարդկանց գիտակցության մեջ, այդուհանդերձ մահը՝ որպէս կորուստ, բաժանում, երկրայինի ավարտ և վերջապէս որպէս միստիկա՝ խորհրդավոր ու անմեկնելի երևույթ. ապրողների մեջ առաջացնում է վախի, բացասական վերաբերմունքի զգացում: Գրաբար մատենագրության մեջ բազմաթիվ օրինակներ կան, երբ մահ, մեռանել

⁵ Աստվածաշնչի այս հատվածի ժամանակ բառը, մի շարք լեզուներում վերջ, վախճան է. հնմտ. "конец всякой плоти пришел пред лицо Мое".

բառերն ուղեկցվում են այդ բացասական վերաբերմունքն արտահայտող բառերով: Ահա օրինակներ V դարի մատենագրությունից. Եղիշեից՝ գղառնութիւն մահու (76, 86, 104, 173), Բուզանդից՝ չարութեամբ, դառնութեամբ մահուան (77), դառն մահ (102), Եզնիկից՝ մահ տարածամ (79, 20), Կողոյունից՝ ամենակող մահ (84), Փարպեցուց՝ դառն մահ, անպիտան մահ, չար մահ (35, 83, 90). այլ գործերում՝ բռնամահ, ճաղճամահ, նեղամահ... (տե՛ս ՆՀԲ):

Հաճախ ենք հանդիպում մահ, մեռանել բառերի կողք-կողքի գործածությանը. «Մատենցաւ ի ձեռս խաչահանուացն, մահու մեռաւ և եղաւ ի գերեզմանի» (Եղիշ. 148): «Ասլա և ինքն Մանուէլ մահու մեռանէր» (Բուզ. 154): «Ասէ Ադամ գիտասջիւր զի մահու մեռանիցիս» (Եզն. 254):

Գրաբարի քերականություններում մահու մեռանիլ կապակցությունը դիտվում է որպես ռճական հմարանք: Սակայն կարելի է արձանագրել մեկ այլ երևույթ ևս. վկայված օրինակների մեծ մասը թույլ է տալիս ենթադրելու, որ նման կապակցություններն արտահայտում են ոչ բնական մահ հասկացությունը: Երևի ռճական երանգ ունենալուց առաջ նախապես մահու մեռանել կապակցությունն ունեցել է նշված իմաստը: Այդ ենթադրության օգտին է խոսում և այն, որ հնդեվրոպացիները բնական մահ հասկացությունը տարբերակում էին: (Гамкрелидзе, Иванов, 830): Հին իռլանդերենում մահ իմաստն արտահայտող տօն բառույթն առաջին հերթին նշանակում է «բնական մահ»: (տե՛ս БЯ, 1998, 1, 128):

Մահ հասկացությունն արտահայտվում է մահ արեւ. արիւն աշխարհ բաղադրիչներով բաղդություններում. (արևը դիտվում է որպես կյանքի խորհրդանիշ). «Ձոմն յընչից և յարեւ արկանիցեն» (Եզն. 161-162): «Փոխանակ կեանս առնելոյ, զարեւ հատէք» (Եղիշ. 198): «Մի հեղցուք արիւն», «... զի արիւն մեծ անկեալ է ի վերայ», «արիւն մորա խնդրի» (ՆՀԲ): «Յանցանելն յաշխարհի թագաւորին Խոսրովայ» (ՆՀԲ): «Յաղագս թագաւորելոյն Տիրանայ, եւ փոխելոյ յաշխարհէս մեծին Վրթանայ...» (Խոր. 269):

Յաւելոյ առ հարս մույնպես գործածական է. հմմտ. «... զի Վահան յաւելեալ առ հարս իւր՝ մեռանի (Մատենագիրք. 1122): «Ընդ ժամանակս ընդ այնոսիկ ապա եւ երջանիկ քահանայապետն Մեծ Կուռնից Դաւիթ յաւելաւ առ հարս իւր... (մ.տ. 864):

Մահ/մեռնել հասկացության գրաբարյան արտահայտամիջոցների՝ հետգրաբարյան փուլի լեզվավիճակների հետ թուուցիկ համեմատությունն իսկ թույլ է տալիս եզրակացնելու, որ վերջիններում այդ միջոցներն ավելի բազմազան ու տարաբնույթ են: Այդի ժողովրդախոսակցական լեզվում մեզ հետաքրքրող հարցին վերաբերող շատ ոճեր, դարձվածային միավորներ գրաբարը չի ավանդել. հմմտ. այն աշխարհը գնալ, այն աշխարհը գլորել (ճամփել, ուղարկել), աշխարհի հետ հաշիվները մաքրել, աչքն աշխարհի վրա փակել, աստղը ծովն ընկնել, աստղի լույսը խավարել, արևը հանգչել, արևը մայր մտնել, արևը խավարել, արևդ թաղեմ (անեծք), կյանքի թելը կտրվել, ոտքերը տնկել (մեկնել)....:

Հասկացության արտահայտման գրաբարյան ձևերի սակավությունը կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով.

1. Բնականաբար ժամանակի ընթացքում փոխվում է իրականության ընկալումն ու համապատասխան լեզվական արտահայտությունը:

2. Հետգրաբարյան փուլում գործառուղ որոշ արտահայտություններ անշուշտ եղել են և հնում, սակայն գրաբարը դրանք չի վկայել, որովհետև. ա) գրաբարյան հեղինակները, ձգտելով պահել գրական լեզվի չափանիշները, հաճախ խուսափել են ժողովրդական բառ ու բանից, խոսակցական-բարբառային տարրերից, բ) գրաբար մատենագրության ժանրային ու բովանդակային առանձնահատկությունները սահմանափակ հնարավորություն են ընձեռում մեզ հետաքրքրող հասկացության զանազան փոխաբերացված արտահայտությունների արձանագրման համար:

3. Գրաբարի (հատկապես վաղ շրջանի) մատենագիրները, լինելով քրիստոնեական ուսմունքի գիտակներ ու քարոզիչներ, ժխտական վերաբերմունք ունենալով հեթանոսության ու հեթանոսական մշակույթի հանդեպ, խուսափել են քրիստոնեական ուսմունքին անհարիր ընկալումների ու դրանց լեզվական արտահայտության շատ իրողությունների արձանագրումից:

Ե. ԹԱՂՈՒՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թաղման ծիսական արարողությունները և այդ երևույթի զանազան կողմերն արտացոլող բառապաշարը, առնչվելով մահ, մեռնել հասկացությանը. արտացոլում է մարդու անդրերկրային ճակատագիրը ոչ թե հոգու (անշոշափելիի, աննյութականի), այլ մարմնի՝ նյութականի տեսանկյունից:

Տարբեր լեզուներում, այդ թվում նաև հայերենում, մեռնել հասկացությունը հաճախ արտահայտվում է թաղել և հումանիշ այլ բառերով ու բառակապակցություններով, որոնք մահվան ընկալման յուրատեսակ արտահայտություններ են՝ դրսևորելով լեզվամտածողական հնագույն ակունքներ: Հմմտ. թաղել (բոյը, գլուխը, որևէ մեկին), գեաիհը մտնել, գերեզման իջնել, պատամքը կարել, դագաղը մտնել և այլն:

Ուսումնասիրողները նկատել են, որ «թաղման ծեսերին վերաբերող հնդեվրոպական ավանդությունների առանձին տվյալներ թույլ են տալիս ենթադրելու դիակի թաղման երկու հիմնական ձևի առկայություն՝ դիակիզում ու մնացորդների թաղում և թաղում հողի մեջ» (Гамкрелидзе, Иванов, 830)

Ուշբուրգեդարյան շրջանին վերաբերող պեղումների տվյալները թույլ են տալիս առանձնացնելու թաղման հետևյալ եղանակները. ա) դիաթաղում, բ) դիամասնատում, գ) գլխի թաղում, դ) երկրորդվող դիաթաղում (վերահուղարկավորում), ե) դիակիզում, զ) հուշադամբարանային թաղում (տե՛ս Գ.Թումանյան, 2007, 139):

«Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում բավականաչափ տարածված էր հուշադամբարանների (կենոտաֆ) կիրառությունը թաղման ծեսում: «Կենոտաֆ» բառը փոխառություն է հունարենից և նշանակում է «դատարկ դամբարան, այսինքն՝ աճյուն չպարունակող, որը կառուցվում էր այն դեպքում, երբ մահացածի դիակն անմատչելի էր թաղման համար» (ն.տ., էջ 143):

Հայ մատենագրության մեջ հայ իրականությանը վերաբերող դիակիզման վկայություն մեզ չի հանդիպել, սակայն հնագիտական պեղումների արդյունքները հաստատում են Հայաստանի տարածքում դիակիզման գոյությունը: «Դիակիզումը Հայաստանում նորություն չէր... 1970 թ. Սիսիանում բացված իշխանական դամբարանի և 1971 թ. Արտաշատի դամբարանադաշտերի պեղումները ցույց են տալիս, որ անտիկ շրջանում թաղման այլ ձևերի հետ միասին տարածված են եղել

դիակիզումը և դիակի թաղումը, որը ուղեկցվել է թաղման հանդիսավոր արարողություններով և ծիսական ճաշկերույթով՝ հոգեհացով» (Խաչատրյան, 1975) :

Դիակիզման վերաբերյալ թերևս մտորելու տեղիք է տալիս նաև հայերեն ածին բառը, որը գրաբարում ունի *մո/սիր* իմաստը՝ հ.-ե. -as- «այրել, վառել»-ից: Գրաբարի ածին և արդի հայերենի ածյուն «դիակ» բառերի միջև իմաստային կապ, անշուշտ, կարելի է տեսնել:

Հիշենք, որ դիակիզման արարողությունը տարածված է եղել գրադաշտ պարսիկների շրջանում*:

Հին հնդեվրոպացիների դիակիզման արարողությունն ինքնին ենթադրում է բարդ տեխնոլոգիայի առկայություն և պետք է ունենար որոշակի խորհրդապաշտական նշանակություն: Այդ սիմվոլը կրակն էր, որը մաքրագործում էր մարդուն, ազատում նրա «հոգին», որը գնում էր «այն աշխարհ» (Гамкрелидзе, Иванов, 381):

Թաղում իմաստային խմբի բառաշերտում առկայանում են այլաբերացման տարրեր՝ իրականության հետ կորստի, չգոյի հաղաբերակցումը մեղմելու, կյանքի անընդհատությունը զգալու միտումով. հմմտ. գերեզմանի «հանգստոց, հանգստարան» անվանումները, արևելասլավոնական լեզուներում домовка «դագաղ», зимовище «գերեզման» և այլն (Седакова, 204):

Տարբեր լեզվամտածողություններում ի հայտ են գալիս որոշ խորհրդանիշներ, որոնք կապվում են թաղման էության ընկալման և ծիսակարգի հետ: Հայերենի տվյալները թույլ են տալիս առանձնացնելու մի քանի բառ-խորհրդանիշներ:

Թաղման արարողակարգում, առաջին հերթին սա ճանապարհին է դեպի «այն կյանք»՝ տանից (դիակը գտնվելու վայրից) դեպի գերեզմանոց իրական ճանապարհով: Այս հատվածում էլ իրականանում են տարբեր ծեսեր՝ դանդաղ ընթացք, ճանապարհին ծաղիկներ շաղ տալ, նույն ճանապարհով տուն չվերադառնալ և այլն: Նկատենք, որ դեպի գերեզ-

* Հայտնի է, որ գրադաշտ պարսիկները դիակը դնում էին մի տեղ, որ թռչունները հոշոտեն, այնուհետև ոսկորները թաղում էին հողի մեջ, դրանով իսկ «խուսափելով» հողի կեղտոտումից: Դիակի հոշոտման սովորությունը, սակայն, որոշ ուսումնասիրողների կարծիքով. հին իրանական, առավել ևս հնդեվրոպական ավանդույթ չէ: Արեմենյան պարսիկները, օրինակ, դիակը թաղում էին, հետագայում միայն՝ Փորր Ավեստայի պահանջներին համապատասխան՝ կատարվում է մարմինը չրաղելու արարողությունը: (Տե՛ս В.Г.Луконин, 1980, с. 321):

մանոց ճանապարհի ծիսային արարողությունները տարբեր հանրություններում տարբեր ձևերով ու բովանդակությամբ են ներկայանում:

Գրաբարյան ի ուղի արկանել-յուղարկել-ը, իր բուն իմաստից զատ, գործառում է և «քաղման արարողություն, քաղում» նշանակությամբ, որն անշուշտ, «յուղարկել, ճանապարհի գցել» իմաստային հենքի վրա կատարված այլաբերացում է՝ անշուշտ վաղնջական ակունքներով՝ վկայված V դարից: Բերենք որոշ օրինակներ. «Առատապէս սրտացատութեամբ հանդերձեցին զնոսա և յուղարկեցին» (ՆՀԲ): «Ձղոստրիկն իմ յուղարկեցի ի գերեզման» (ՆՀԲ): «Ոչ կամիմք զբանն մարմին լինել, զի մի նովաւ և միջնորդ մեզ եղիցի վերնաճանապարհորդութեանն⁶ և զառ ի յերկինս բնակութեան օթեամնացն» (Աքանաս.129):

Եթե կա ճանապարհ, ապա կա և հանգրվանը՝ տունը, օրևանը, դեպի ուր տանում է այդ ճանապարհը: «Բազում օթեամբ են ի տան արքայութեանն Հօր» (Փարպ.32): «Պատեցին զպարկեշտ մարմինն արդարոյն ըստ արժանի կայանի ճշմարտիցն» (ն.տ.38): Մոցա պատրաստեցին տեղիք բնակութեան և արժանի եղեալ շիրիմք հանգստեան» (Բուգ.6): «Վաղիւ երթալոց ես ի հայրենիսն, անդ հանգիք» (Եզն.307): Հայրենիք այս համատեքստում նշանակում է «երկինք, գերեզման»:

«Այնկյանքային» օրևանն է խորհրդանշում քերևս և դագաղը, տապանը, ապա և գերեզմանին կից կառուցված խորանը, տաճարը: Ահա Կորյունի վկայությունը Մաշտոցի գերեզմանի վերաբերյալ. «Իսկ յետ երկից ամաց անցանելոց յաջողեցան Վահանայ Ամատունտյ գՔրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելովք և ի ներքսագոյն խորանին զարբոյն հանգիստն յօրինեալ» (Կոր.94):

Ոչ երկրային կյանքն են խորհրդանշում նաև խաւարը, մութը՝ ի հակադրություն լոյս-ի, արեւ-ի, որոնք և երկրային կյանքի խորհրդանիշներ են: «Ի վաղիւն վախճանեալ յուղարկի ի խաւարն արտաքին» (Փարպ.140):

Որոշ նկատառումներով ու դիտարկումներով անդրադառնանք քաղում իմաստային խմբի հոմանշային շարքերին: Հասկացության հիմնաբառերն են քաղել, քաղում-ը: «Վախճանեալք քաղեցան ի դիրս հարց իրեանց» (Փարպ.110): «Ի նմին աւանի ի Կուսշ քաղեցաւ» (Խոր.283): «Եւ զմեռեալն ի հող քաղելով գերկիր ապականէք» (Եղիշ.46):

Թաղել հասկացությունն արտահայտվում է նաև հող + որևէ բայ կապակցությամբ. «Կամեցան հողոյ տալ զքրիստոնէին մարմինն»

⁶ Վերնաճանապարհորդութիւն բառը ՆՀԲ-ն չունի:

(Ասող.254): «Ի հող իջանել» (ՆՀԲ): «Վախճանեսցի ամենայն մարմին ի հող դարձցի ուստի և ստեղծաւ» (Յոր. ԼԴ.15): «Հողոյ և պատանաց չլինել արժանի» (ՆՀԲ):

Ծածկել նույնպէս կիրառվում է «թաղել» նշանակությամբ. «Այլ տարցին... և ծածկեսցին ընդ հողով» (Բուգ.37): «Իսկ իբրեւ գնեռեալն ծածկեցին անդէն ի տեղտջն յորում սպանաւն» (Բուգ.130): «Յիւրաքանչիւր շիրիմս առ հարսն իւրեանց ծածկեցեն» (Բ. Մակ. ԺԲ.39): ՆՀԲ-ն մարմնածածուկ բառը մեկնում է «մակդիր գերեզմանի, որ է ծածկօղ գմարմին մեռեալ»: «Վազելով շնչովն առ դժոխաբնակ մարդկան շունչսն և մարմնովն առ մարմնածածուկ ներքսագոյն դժոխս»:

Հասկացությունն արտահայտվում է նաև գերեզման + որևէ բայ կառույցով. «Երբ ի մահիճսն ելանես, համարեա քէ ի գերեզման ես իջեալ» (Եզն.305):

Հանգուցանել բայն էլ «թաղել» իմաստն ունի. «Բայց զպատուական մարմին... տարեալ հանգուցին յիւրեանց գիւղն յԱշտիշատ» (Խոր. 356): «Եւ ի հրամանէ նորին տարեալ հանգուցանեն ի գեօղն Թորդան» (Խոր. 262):

Գրաբարում խորել և թաղել հոմանիշներ են, բայց մատենագրության մեջ խորել «մահացածին թաղել» գործածություն մեզ չի հանդիպել: Երևի չպետք է անվերապահորեն ժխտել խորել/խորանալ նշված իմաստով գործածությունը գրաբարում (այլ բան է, որ չի վկայված), մանավանդ որ որոշ բարբառներ ունեն խոր խորանալ «մեռնել». «Փաղվել» անեծքը:

Վերը անդրադարձել ենք յոտարկել բային. այս բայահիմքով կազմված յոտարկատրութիւն գոյականի հոմանիշներն են դիախանէք/դիախանութիւն: Վերջիններս նվազ հաճախական են և, ըստ երևոյթին, բարբառային տարբերակներ են եղել: Նվազ հաճախականությունը կարելի է փաստարկել նաև այն հանգամանքով, այդ բառերի դեպքում այլաբերացում չկա, և ժողովուրդը խուսափել է բառի հաճախական օգտագործումից: Հայկազյան բառարանները դիագարություն բառի համար նշում են և «թաղում» իմաստը՝ նկատի ունենալով Արծրունուց վկայված օրինակը. «Փոխի թագաւորական շքեղ և երևելի դիագարութեամբ»: Նկատենք, որ V դարի ինքնուրույն գրականության մեջ դիախանութիւն վկայված չէ:

Թաղման ծիսակարգի հետ սերտորեն առնչվող դագաղ հասկացությունը ներկայանում է արկղ, դագաղ, թափուտ, տապան հոմանշային շարքով: Պայմանականորեն այս շարքի մեջ կարելի է ընդգրկել և

պատան-ը: Գրաբարի բառարաններն արկղ և տապան բառերի՝ մեզ հետաքրքրող իմաստները նշում են որպես երկրորդական, իսկ դաճաղ-ի դեպքում՝ ընդհակառակը: Նկատված է, որ վերջինս վաղ գրաբարում հաճախական է հատկապես հոգնակի թվով: Դաճաղատը «դաճաղը տանող» ՆՀԲ-ն չունի. բառը վկայված է V դարից. «դաճաղատրացն հրեշտակ յերկնից եկեսցեն» (Ոսկ. Պօղ. II, 852):

Արկղ-ը, իր հիմնական նշանակությունից գատ, գործածվում է նաև «դաճաղ» իմաստով. «Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սրբոյն հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եղեալ և կնքեալ քրիստոսական կնքովն» (Կոր. 88): «Չսուրբ աստուածընկալ արկեղօքն երանելի մարմնոցն» (ՆՀԲ):

Այս և այլ կարգի օրինակները հաստատում են, որ մատենագրության մեջ արկղ «տապան» կիրառվում է հատկապես այն ժամանակ, երբ խոսվում է սրբերի, հեղինակավոր անձանց թաղման մասին: Արմ-ն արկղ-ը մեկնում է «մեռելների ոսկորները պահելու սնդուկ»։ ավելի ստույգ է ՆՀԲ-ի մեկնությունը. «տապան մարմնոց սրբոց»:

Վերոհիշյալ հոմանիշային շարքերի անդամներից արկղ-ը լատիներենից կատարված փոխառություն է: Արդեն լրացուցիչ փաստեր կան տապան-ի իրանական ծագումը հիմնավորելու համար, մանավանդ սողդ. րթո, պրս. tabangoy բառերի առկայության դեպքում (տե՛ս Լ. Հովհաննիսյան, 1990, 262): Դաճաղ-ի ծագումը պարզ չէ:

Ինչպես տեսնում ենք, իմաստային այս ենթախմբում բնիկ հայերեն բառ չկա. հնարավոր է, որ եղել է, բայց դուրս է մղվել օտար փոխառությունների կողմից (այսպես դուրս են մղվել, օրինակ, հայերենի գունանվանական համակարգի բոլոր հիմնական անվանումները՝ բացառությամբ դեղինի): Տապան իմաստով կարելի է ենթադրել նաև բառի գործածությունը, որի մասին քիչ հետո:

Թապուտ «դաճաղ» վկայված է միայն Ալեքսանդրի պատմության մեջ՝ նաև թապութ ձևով: «Եւ հրամայեաց թապուտով բառնալ զմարմին և թաղել զնա որպէս պարտ էր զքազաւորն թաղել պարսկական օրինօք... Բայց ինքն իսկ արքայն, զուսն մածուցեալ՝ ինքնին բառնայր ընդ նախարարսն զթապութն Դարեհի» (Պատմ. Աղեքս. 240-241): Հատվածը վերաբերում է Դարեհի թագավորի թաղմանը: Ըստ երևույթին. բառը գործածական է եղել իրանական լեզուներում, թեև ենթադրվում է այլ ծագում և թարգմանիչը կիրառել է օտար բառ՝ օտար հասկացությունը ներկայացնելու համար, եթե բացառենք բառի՝ ուշ շրջանի նորամուծություն լինելը:

Թաղման տեղ հասկացությունը գրաբարում արտահայտվում է գերեզման, շիրիմ, դամբան, դիր(ք), հանգստոց, հանգստարան, տապան, տապանատեղ, տապանատուն բառերով: V դարից փոխաբերական իմաստով վկայված է և քնարան «գերեզման» բառը (տե՛ս ՆՀԲ): Թաղման նախնական ըմբռման մեջ, ինչպես նշել ենք, առկա էր «քնակարան», «օթևան» գաղափարը՝ «անկյանքային» մի քնակատեղի, որ կյանքի յուրատեսակ շարունակությունն է, և պատահական չէ, որ հնում հանգուցյալի հետ, դնում էին բազմազան կահ-կարասիներ, անձնական օգտագործման իրեր, զանազան կենդանիներ (հատկապես ձի և շուն):

Հնդեվրոպական պատկերացումներում «այլերկրային» կյանքը նաև արոտավայր է, որն իրական աշխարհից անջրպետված է ջրով և հոգիներն այնտեղ հասնելու համար պետք է ուղևորվեն նավով (Гамкрелидзе, Иванов, 825):

Հ.-ե. **nau-s* «նավ» բառը երկրորդաբար կարող է ձեռք բերել նաև «մահ» իմաստը: Հմմտ. գոր. *naus* «ղիակ», հ.անգլ. *nē(ō)* «ղի», հ.ռուս. *навъ* «ղի», հ.չեխ. *nav* «գերեզման» և այլն (մ.տ.):

Բնականաբար, հայերը. ջրային մեծ տարածություններ չունենալով, թաղման այդպիսի վայր չէին ընտրի⁷:

Անդրադառնալով թաղման վայր հասկացության հոմանշային շարքի անդամների իմաստագործառական քննությանը:

Գերեզման- հաճախական կիրառություն ունի հայերենի բոլոր փուլերում. բառն իրանական փոխառություն է. եթե վստահելի է Արմատական բառարանի ստուգաբանությունը՝ փոխառու լեզվում բառին վերագրելով «երկինք», «գովեստի տուն», «մագդեզականների արքայական օթևանը», ապա իրանական լեզուներում այն այլաբերացված էր:

Գերեզման՝ «մահվան. զոհվելու տեղ» իմաստը գրաբարի բառարանները չեն վկայում: Այդ իմաստը գտնում ենք Խորենացու Պատմության Հայկի և Բելի կովի նկարագրության մի հատվածում. «Բայց զտեղի ճակատուն շինե դաստակերտ և անուն կոչե Հայք, վասն

⁷ Նորվեգիայում 1880 թ. պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի հսկա նավ՝ 2 մ երկարությամբ և 5 մ լայնությամբ. նավի խցերից մեկում մարդու կմախք էր, այդ նույն խցում բազմաթիվ իրերի հետ կար նաև 12 ձիու և 6 շան կմախք: Ենթադրվում է, որ վիկինգները իրենց մեռելներին թաղել են նավերում: (Տե՛ս А.С.Амальрик, А.Л.Монгайт, В поисках исчезнувших цивилизации, М., 1966, стр. 56):

Ուշագրավ է Մակաբայեցուց գրքի հաղորդումը. «Եւ անդ շինեաց շինուած ի վերայ գերեզմանի... եւ եդ զկողիւք վանդակին գործ քանդակի նաւաց նմանութեան: (Ա.Մակ. ԺԳ. 27-30):

յաղրութեան պատերազմին... իսկ բլուրն, ուր քաջամարտկօքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին գերեզմանակք: ...բայց զղիակն Բէլայ պաճուճեալ դեղովք... հրամայէ Հայկ տանել ի Հարք և քաղել ի բարձրաւանդակ տեղոջ... (Խոր.37):

Գերեզման բաղադրիչով V դարից վկայված են գերեզմանաբուրքին, գերեզմանական, գերեզմանախոր, գերեզմանակրկիտ, գերեզմանատեղի: Գերեզմանել և գերեզմանատուն վկայված են ուշ շրջանից (Գանձակեցի, Ուռհայեցի):

Շիրիմ «գերեզման, գերեզմանաբար» բառի ծագումը ստույգ չէ: Այդ արմատով այլ կազմություններ քիչ կան. շիրիմակից, շիրիմատր հետևի գերորդարյան վկայություններ են:

Դամբան քեն հ.-ե. ծագում ունի՝ *dhebn- «փորել» արմատից, սակայն զրաբարում հաճախական չէ, և ըստ բառարանային տվյալների V դարից վկայություն չկա: Դամբանական, դամբանեն հետին վկայություններ են:

Դիր հաստատապես հ.-ե. ծագում ունի՝ *dhe- «դնել», որից հայ. դնել և *դի արմատից ք-ի հավելմամբ դիր տարբերակը: Վկայված է V դարից: Դիր(ք) «գերեզման» գործածվում է հիմնականում «սրբերի, առաքինի մարդկանց գերեզման» նշանակությամբ, այսինքն՝ առկա է վերաբերմունքային գործոնը: Միա մի քանի բնագրային օրինակներ. «Պատահէ նմա տեղի օրարանին մօտ առ դիրս սրբոյ Առաքելոյն» (Խոր.212): «Յաղագս այնր ոչ արժանի համարեցան ի դիրս սրբոցն քաղել ի Վաղարշապատ քաղաքի» (Խոր.289): «Ի դիրս հարցն ձերոց հանգուսցէ զոսկերս ձեր» (Փարսլ.93):

Դիր բառի ծագման վերաբերյալ կա և մեկ այլ վարկած, որը նույնպես արժանի է ուշադրության. իր հոդվածներից մեկում Ս. Պետրոսյանը, խոսելով դիր(ք)-ի մասին, բերում է Վ. Բդոյանի և Ս. Երեմյանի կարծիքը, ըստ որի, դիր-ի նախնական տիր տարբերակը ծագում է հերանոսական Տիր աստծու անունից, իսկ Տիրը ոչ միայն դպրության աստվածն էր, այլև «առել է մարդկանց հոգիները և ուղեկցել անդրաշխարհ» (Ս. Պետրոսյան, 2006, էջ 8): (Չակերտների մեջ առնվածը Ս. Պետրոսյանը մեջբերում է Ս. Հարությունյանի «Հին հայոց հավատալիքները» գրքի երկրորդ հատորից):

Հանգստոց/հանգստարան – Հան(գ) արմատով և իստ + ոց(անոց) ածանցներով կազմություն է: Արմ.-ում հանգ-ը չի ստուգաբանված, իսկ Գ. Ջահուկյանն այն համարում է բնիկ հայերեն՝ հ.-ե. *kai-ից: (Ջահուկյան.

1987, 134): Հանգիստ/հանգստոց բառերը նույնպես այլաբերացված են, որը բնորոշ է մահ, թաղում իմաստային խումբը ներկայացնող շատ միավորների: Հիշյալ բառերը դրսևորում են իմաստային մի նրբություն՝ վերաբերելով դարձյալ ոչ բոլոր, այլ բառօգտագործողի կողմից դրական, առաքինի համարվող մարդկանց գերեզմաններին: «Արդ՝ առեալ թագաւորին փայտատ և բահ՝ հատանէր զղլիրս հանգստոցաց սրբոցն» (Ագաթ. 394): «... անդ կազմեալ զհանգստարանն սրբոյն՝ պատեցին զպարկեշտ մարմինն արդարոյն» (Փարպ.36): «... ուր էր հանգստարան եղբօր նորին Արիստակէայ» (Խոր.258):

Հանգստոց/հանգստարան բառերն ամենայն հավանականությամբ կենսունակ են եղել նախագրային շրջանից: Այսօր էլ հանգիստ «գերեզման», հանգստարան «գերեզմանոց» գործածական են Ղարաբաղի բարբառում:

Շատ ժողովուրդների, այդ թվում և հայոց մեջ ընդունված էր ի հիշատակ հանգուցյալի որևէ կոթողի, շինության կառուցումը: «Բայց Արտաշիսի յիշեալ, թէ խառնուած Արշակունսյ է Երուանդ՝ հրամայէ զղի նորա թաղել մահարձանօք» (Խոր.173): «Ձմարմին խաչակրան վկային Զրիստոսի ... ի հանգիստ խորանին փոխէր» (Կոր.94): «Ուր նախ էր զեկեղեցին շինեալ ի Գրիգորէ և զվկայարանն սրբոցն վկայիցն» (Բուգ.97): Այս երևույթն ակունքվում է հեթանոսական շրջանից՝ քրիստոնեության ընդունումից հետո պահպանելով նոր կրոնին բնորոշ կառույց-խորհրդանիշներով:

Ուրեմն՝ մահարձան, վկայարան, վկայանոց, մատուռ, խորան ... բառերը նույնպես կարելի է ներառել թաղում իմաստային խմբի բառերի շարքում:

Գերեզման հասկացությունն ու զրաբարում ոչ հաճախական կիրառությամբ արտահայտվում է ակեղդամայ բառով. «Բազում պատուով պատեալ զմարմին աղջկանն եղին յակեղդամայ հարցն» (ՆՀԲ):

Մահ, թաղում հասկացությունները անպայմանորեն աղերսվում են սուգ հասկացության հետ: Մահացածի կորուստը սգում են նրա հարազատները, ճանաչողները: Թեպետ քրիստոնեությունն արգելում էր սգո հեթանոսական ծեսերն ու արարողությունները, սակայն հեթանոսությունից ակունքվող շատ երևույթներ շարունակում են գոյատևել: Ավելորդ չենք համարում մեջբերել հեթանոսական այդ արարողության մի նկարագրություն Խորենացու Պատմությունից՝ կապված Արտաշեսի մահվան ու թաղման հետ. «...եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն

Արտաշիսի, սիրելի կամայք և հարճք, մտերիմ ծառայք. և որպիսի շուր քազմադիմիս արարին առ ի պատիվ դիտյն... Դագադքն էին, ասէ, ոսկեղենք, գահոյքն և անկողիքն բեհեզեայ և պատմունան որ զմարմնովն՝ ոսկեքել. քազ կապեալ ի գլուխն և գէնն ոսկով առաջի եղեալ ... և առաջի պղնձիս հարկանելով փողոս և զկնի կուսանք ծայնարկուք, սևազգեստ և աշխարող կամայք, և զհետ քազմութիւն ռամկին... և շուրջ զգերեզմանան լինէին կամատր մահունք, որպէս վերագոյնն ասացաք» (Խոր. 190-191):

Ահա մի հատված էլ մեկ այլ գործից, որի թարգմանիչը, ամենայն հավանականությամբ Խորենացին է: Ալեքսանդրը սպանված Դարեհի դին ուղարկում է հարազատներին և հայտնում նրանց «զի դուք, որպէս սովորութիւն է լացջիք և ողբասջիք զնա» (Պատմ. Աղեքս. 409):

Հայ մատենագրության մեջ բազմաթիվ տեղեկություններ կան ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ հայերի որոշ սովորությունների ու սգո ծեսերի վերաբերյալ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի.

ա) սգո արտահայտության նյութական, շոշափելի ձևեր

բ) սգո արտահայտության խոսքային ձևեր

Առաջին խմբի մեջ ներառվում են մարդու արտաքին տեսքի հետ կապված փոփոխությունները (մազերի կտրում, փետում, զգեստի գույն և այլն): Յայսօր էլ սև շոր հագնելը դիտվում է որպէս սգո նշան: Բերենք տարբեր կարգի օրինակներ V դարի ինքնուրույն և թարգմանական գրականությունից. «Մազեղէնս և մաշկեղէնս եթէ կամիցիս ի ներքո ազանիջի, քէ սգաւոր իցես և մի մաշկեղէն հանդերձի շրջի, զի մի փառաւորիցիս» (Եւագր. 140): Մաշկյա (կաշվե) հագուստը պատվական հագուստ է համարվել. «զմաշկեայ պատմունան պատուականագոյն համարելի է» դրա համար էլ սգավորները այն որպէս վերնահագուստ չպետք է հագնեն: «Իբրեւ ի վերայ մեռեալ եղբարց ձերոց թուխս սգոյ զգեցաք, բայց ոչ հանդերձ թուխս, զոր զգենուն սգածք վասն մեռելոց, խորզ զգեցաք վասն սգո մաւրն» (Շփր. Ասորի. ՀԱ. 1930, 55)⁸: Սգո հագուստը կոչվում է նաև տխրական զգեստ. «Եւ նոյնժամայն հրամայէր փոխել ի նմանէն գոխրականն զգեստ, զոր սոս կա մահուան ամուսնոյն որ իւրոյ էր զգեցեալ» (Մատենագիրք, հտ. Ե. 820):

Ներքոհիշյալ օրինակում հեղինակը՝ Մանդակունին, հանդես է գալիս որպէս քրիստոնեական մշակույթի գաղափարախոս՝ ժխտելով հեթանոսականը. «...արիամարհեցէք զեղանակամարս լալկանաց, անար-

⁸ Դարաբաղի բաբբառում կա սըվաք'իր «սևակիր» բառը, որն ունի նաև «այրի» նշանակությունը:

գեցէք զփետիւն վարսից և զխզել հերաց, հալածեցէք զարիւնահանսն և զմոխրացանսն» (Մանդ. 181):

Սգո նկարագրություն կա և Բուզանդի Պատմության մեջ՝ Գնելի սպանության հատվածում: «Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձս պատառեալ զգէսս արծակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր» (Բուզ. 102):

Այո՛, քրիստոնեությունը մերժում է սուզը՝ իր հեթանոսական ակունքներով ու արտահայտման եղանակներով: Այդ միտումը գտնում ենք և Գրիգոր Լուսավորչի կանոններում «Որք կոծ դնեն և զհերս խզեն և կամ զճակատ հարկանեն՝ նզովեալ լիցին ի կեանս և ի մահ (Կանոնագիրք հայոց, Ա, 247):

Սակայն քրիստոնեության այդ պահանջը այնքան էլ դյուրին չէր իրականացնում. երբեմն միայն ուժեղ, բարձրաստիճան հոգևորականներն էին կարողանում կիրառել տալ քրիստոնեական ուսմունքի այդ դրույթը: Բուզանդի հավաստմամբ այդպիսին էր Ներսեսը, որի օրոք «ուչ ոք իշխէր արտաքոյ կարգի կանոնի եկեղեցոյ լալ զմեռեալն և կոծօք դնէր կամ աշխարանս մեռելոյն, և ոչ ձայնս ոք արկանէր ի վերայ մեռելոյն յատուրսն Ներսիսի, այլ լոկ արտասուօք և ըստ արժանի սաղմոսիւք և օրհնութեամբ, կանքեղօք և մոմեղինօք լուցելովք զմեռեալսն յուղարկէին»: Իսկ Ներսեսի մահից հետո նորից գլուխ է բարձրացնում հեթանոսականը. «զմեռեալսն լային, փողովք և փանդողովք և վնօք զկոծսն պարուցն կաքաւելով, զտիզսն հատեալս, զերեսս պատառեալս արք և կանայք պղծութեամբ ճիւղողութեամբ պարուք դնն ընդ դնն հարկանելով ... զմեռեալսն յուղարկէին» (Բուզ. 193):

Փաստորեն Բուզանդի այս հատվածում ներկայացված են թաղման և սգո հեթանոսական արարողությունների հիմնական գծերը⁹:

Սգո արարողության մերժումը քրիստոնեության դիրքերից բազմիցս ակնարկում է V դարի մատենագիր Մանդակունին: Ահա մի հատված «Թուղք մխիթարութեան վախճանելոց յաշխարհես» ճառից, որտեղ պատժելի են համարվում հեթանոսությունից ժառանգված սգո որոշ արարողություններ:

⁹ Երկար մագերը որպես ուրախության խորհրդանշն պահպանվել են որոշ առաձններում. «ուրախությունից մագերն է երկարում՝ դարդից եղունգը», «մագը սրտիցն է ջուր խմում»: (Ա. Ղանալանյան, Առաձանի, Ա. 1960, էջ 61-62): Հերոդոտի վկայությամբ բոլոր մարդիկ, որպես սգո նշան խուզում են իրենց մագերը, միայն եգիպտացիներն են երկարեցնում իրենց գլխի մագերը, այն դեպքում երբ մինչ այդ սավրվում էին (տես Հերոդոտ, Պատմություն, Ե. 1986. էջ 102):

«Իսկ որչափ սաստիկ պատժոց արժանի համարիցիք որք ի սուգս եւ ի կոծս եւ յողբս մտանիցեն. զի արգելեալ է ի քրիստոնէից հաւատացելոցն՝ որք լուսաւորեցան սուրբ աւագանան ... եւ ոչ չարաչար խզել եւ փետել եւ մոխիր ի վերայ նուիրեալ գլխոյն արկանել այլ ամենեւին ի բաց հեռանալ յանաւրէն եւ ի սատանայական վայիցն եւ յողբոցն եւ անաւրէն ձաղանայի: Ոչ զհերս փետել հրամայեսցէ քրիստոնէիցն, ոչ զայտս ցտել... ոչ զաղիզածն ածել, ոչ զուսովքն մերկանալ, ոչ զճակատն հարկանել, ոչ քուրձ զգեմուլ, ոչ մոխիր ցանել և ձայնս արկանել և ոչ աշխարհաւսք ողորդանել» (Մատեն. հայոց. Ա. 1253):

Քրիստոնէութեան անհարկի թաղումները դատապարտելի են համարվել. և սահմանվել են նաև տույժեր: Ահա մի հատված Աթանաս Աղեքսանդրացու կանոններից:

Հարցումն – Եթէ որ անուանեալ քրիստոնեայ է եւ մահուան որդւոյ իւրոյ կամ դստեր կամ զինչ եւ է մերձաւորի կոծ դնէ հեթանոսաբար անյուսութեամբ և անառակութեամբ, փախով և լկտութեամբ, պարտք զճակատ հարկանել արիւն հանել և ոչ լսել ձայնի խրատու քահանայիցն... զ՞ինչ պարտ է առնել:

Պատասխանի – Ի բաց կալ ի նոցանէ և զնոսս արտաքոյ եկեղեցոյ առնել, մինչև ի զոջումն եկեալ ... իսկ յիշատակ մեռելոյն քահանայքն արասցեն: (Կանոնագիրք հայոց, 1964, էջ 305):

Սուգ հասկացության իմաստային ենթախմբի հիմնական անդամը սուգ բառն է, որն առկայանում է նաև որպես մի շարք կապակցությունների բաղադրիչ. սուգ մեծ, ատուր սգոյ, հանդերձ սգոյ, տուն սգոյ ... և այլն: Այն հանդես է գալիս որպես բայական հարադրության անդամ. սուգ առնուլ, սուգ ունել, սուգ դնել ...

Սուգ բառի հոմանշային շարքի անդամներն են աշխար, աշխարանք, գեր, կոծ, ողբ, լաց, լալիւն, լալումն, կական, հեծեծանք, քուր: Այս շարքի մեջ թերևս կարելի է դնել ձայնարկու, եղերամայր բառերը:

Գեր, քուր բառերը նվազ հաճախական են:

Բնիկ հայերեն են լալ, ճիչ, ողբ, քուր, իրանական փոխառություններ են աշխար, գեր, սուգ բառերը: Կոծ-ի ծագումը հստակ չէ, կական-ը համարվում է անստույգ բառ:

Սգից հանել, սգահան անել սովորությունը վաղ ակունքներ ունի, որն արտահայտվում է լուծանել գտուգ կապակցությամբ: Ահա մի օրինակ «Ս. Շուշանիկի վկայաբանությունը» վավերագրական հուշարձանից (Զ դար): «Իսկ մարգարանն և նախարարքն վրաց գային առ բղեաշխն՝ մխիթարել զնա վասն մանկանն եւ լուծանել գտուգն» (Մատենագիրք հայոց, հատ. Գ. էջ 38-39):

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Բժշկագիտությունը, զարգացման խոր ակունքներ ու բարձր մակարդակ ունենալով Արևելքում, ազդեցության իր հետքերն է թողել նաև Հայաստանում: Սակայն առկա է նաև զուտ հայկական բժշկագիտության գործոնը, որը նկատված է այդ գիտության պատմությանը վերաբերող մի շարք աշխատություններում:

Հայ մատենագրության սկզբնավորման շրջանից զգալի տեղեկություններ կան զանազան հիվանդությունների, բժշկության, դեղերի վերաբերյալ: Հիվանդության անվանումների հանդիպում ենք և՛ ինքնուրույն, և՛ քարգմանական գրականության մեջ (տե՛ս Оганесян, 1946, Վարդանյան, 1982): Իսկ XIV դարի փիլիսոփա, բանասեր Գ.Տաթևացին տալիս է հիվանդության բնորոշումը:

Հարց. – Ձի՞նչ է հիւանդութիւն:

Պատասխան. – Սահման դնեն վարդապետք, եթէ հիւանդութիւն է անչափութիւն տարերսց: Եւ յայտ է, որպէս չափաորն առողջութիւն է, նոյնպէս անչափն հիւանդութիւն: Դարձեալ՝ հիւանդութիւն է նուագութիւն առողջութեան, որպէս առողջութիւն նուագութիւն է հիվանդութեան: Եւ դարձեալ՝ հիւանդութիւն է փոփոխումն որակութեան, եւ այս նոյն է, զի առողջութիւն և հիւանդութիւն որակութիւնք են փոփոխականք: (Տաթևացի, 2005, 451):

Վաղ բժշկագիտական պատկերացումների մասին տեղեկություններ են հաղորդում ոչ միայն հայ մատենագրությունը, այլ ժողովրդական հավատալիքները, ավանդույթները, բանավոր պատմությունները: Հայտնի է, օրինակ, որ Աստղիկ դիցուելին նաև հղի կանանց հովանավոր էր: Ջանազան ալքերի, չարքերի, վիռլկների, արալեզների վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները, որոշ դեպքերում առնչվում են նաև բժշկական-բժշկագիտական պատկերացումների հետ:

Ջրիստոնեության ընդունումով հին բժշկական և բժշկագիտական ըմբռնումները համարվում են անընդունելի կամ հարմարվում են նոր գաղափարախոսությանը, նոր աշխարհայացքային կադապարներին: Ջրիստոնեությանն առնչվող մեզ հասած բժշկական առաջին տեղեկություններից է, այսպես կոչված, հիվանդների օծման խորհուրդը, որն ամրագրված է Նոր կտակարանում: Իսկ Լուսավորչի ժամանակներից մնացել է 50

մի հիշատակություն. Երուսաղեմի հայրապետ ս. Մակարը գրում է Վրթանես կաթողիկոսին. «Ձիտ օծման մեռելոց և հիվանդաց մկրտելոց առանձնակ օրհնեսցեն քահանայք և եպիսկոպոսոսնք (Բագմավեյ, 1939, էջ 8):

Մեր մատենագիտության մեջ վկայված այս կամ այն կարգի հիվանդություններին, բուժումներին վերաբերող տեղեկությունները կրերենք հիմնաքս քննության, այստեղ մեջքերենք Եզնիկի մի հատվածը՝ զանազան խոտաբույսերի ու դեղամիջոցների օգտագործման մասին. «Նոյնպէս և բանջարս և ինչ. որ առանձինն սատակիչ է և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցատց լինի: Ձմանրագորն եթէ լոկ ուտիցէ՝ սատակիչ է և խառնեալ ընդ արմատս՝ քնածու լինի քնահատաց: Եւ գիսագար՝ եթէ ի սօր ժամանակի ուտիցէ որ, քանզի զովացուցիչ է, գտապս ի փոքոյն փարստէ, և եթէ ի հոլ ժամանակի ուտիցէ որ վնասէ... և եթէ գտերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ որ, ի ցանկութենէ արկանէ: Եւ կանկովուն քով ինչ է, որոյ սերմն նորա դեղ է և նոյն դարձեալ կասեցուցիչ ցանկութեան և մոլախիմտդ. որ առանձինն ի յայտնի ժամանակի սպանող է, նովինք զմաղծս հնացեալս հնարին բժշկք հատանել: Եւ կաղանչանան ազգ ինչ՝ առանձին սպանող է և խառնեալ ընդ այլ դեղոյ, մաղձադեղ է բուժիչ ի մահուանէ (Եզն. 66, 67):

Թվում է՝ հետաքարական կլինի նաև ներքոհիշյալ հատվածը՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայից», որտեղ խոսվում է դարձյալ դեղաբույսերի մասին, որով բուժվում են կենդանիները: «Ձի արջ յորժամ վերս առնուցու յանձին... երբայ իւլէ զարմատ մի, որ անուանեալ կոչի-փղոմոս. և բնութիւն արմատոյն այնորիկ ցամաքեցուցիչ զարութիւն ունի ուր և դիցի: Վաղվաղակի դնէ ի վերայ վիրացն, զի ատցէ բժշկութիւն ի ցամաքեցուցանել դեղովն զքարախ վիրաց իրոց: Դարձեալ և աղուէս ըստ մմին արիւնակի իմն առնէ և բժշկէ զվերս իւրոց ... Դարձեալ և ջրային կրիայ եթէ կերիցէ ի մսոյ իժի և տագնապ ինչ հասանիցէ մմա ի կերակրոյն, երբայ ուտէ դաղձն և այնու անցուցանէ գտապ նեղութեան ի մարմնոյն, զի մի՝ վնասեսցի ի գիշոյն, զոր կերաւ: Աւժից աչք յորժամ ցաւիցեն, երբայ ուտէ շումրայ, այսինքն սամիք վայրենի և ողջանան» (Ճառ. Թ, 297):

Այստեղ կենդանական բնագոյների (քնածին բարուց) մասին է խոսքը, իսկ դրանց ուսումնասիրությունը միշտ էլ նպաստել է գիտական հարցադրումների լուծմանը:

Գրաբարում հիվանդություն ընդհանրական հասկացությունն արտահայտվում է մի շարք բառերով՝ ախտ, աղաւաղութիւն «թուլություն», արատ, գատոյ, գար, խեղ, խիթ, խօթ, հաշմ, հիւծ(իւմ), հիւանդ, տկար, ցաւ...

Նշվածներն ունեն գործածության տարբեր հաճախականություն, տարբեր են և բառակազմական հնարավորությունները: Հաճախական են ցաւ, հիւանդ, ախտ արմատներով կազմված բառերը. հիւանդ արմատով ՆՀԲ-ն վկայում է հետևյալ բառերը. հիւանդ, հիւանդաբար, հիւանդաբեր, հիւանդագոյն, հիւանդագործ, հիւանդական, հիւանդակից լինել, հիւանդակցութիւն, հիւանդաձայն, հիւանդամտութիւն, հիւանդանամ, հիւանդանի, հիւանդանոց, հիւանդատէս, հիւանդարար, հիւանդարարութիւն, հիւանդացուցանեմ, հիւանդացուցիչ, հիւանդաբայլ, հիւանդոտ, հիւանդութիւն:

Հիւանդ հետադաս բաղադրիչով կազմություններ չկան:

Արատ- որպէս բժշկական տեքմին ունի «խեղություն, քերություն» իմաստը. հմմտ. «Ի քաթից ոտից խրոց մինչեւ գլուխ ոչ գոյր նմա արատ» (ՆՀԲ):

Գար «ցալ» առանձին չի գործածվում, այլ միայն բարդության մեջ. աչագար, գլխագար, գարաղութիւն, խելագար, մոլագար, ցաւագար:

Հաշմ- ըստ Արմ-ի՝ «խեղ, կոտրած անդամով, պակասատուր»: Գործառում է նաև անկախաբար. «Խեղ, կոյր, հաշմ և անդամալոյծ» (ՆՀԲ): Հաճախական են բառակապակցային գործածությունները. հաշմ ոտիւ, հաշմ անդամօք ... և այլն:

Խեղ-ը. ըստ ՆՀԲ-ի. ունի «Արատատուր կամ պակասատուր անդամօք, հաշմ» իմաստը. կա և խեղանդամ «հաշմանդամ». «Այդ եթէ որ, ասէ, ի քահանայիցն՝ աչաւք կամ ձեռօք կամ ոտիւք կամ այլով մասամբն խեղ իցէ մարմնոյն» (Փիլ. Ճառ. 189):

Խիթ-ը. ըստ բառարանների տվյալների. գործածվում է հիմնականում «ուտքի կամ փոքի ցալ» նշանակությամբ. «Դառնութեան խիթք ի փոր անկանէին» (Բ.Մկր. Բ, 5): Նարեկացին օգտագործել է հոգեկան խիթ կապակցությունը. «Մթերեալ ցաւոյս և հոգեկան խիթոյս» (ՆՀԲ):

Խօթ- ավելի ընդհանրական է՝ «հիվանդ, տկար» (տես ԱԲ): Այդ բաղադրիչով կազմություններից են խօթակից լինել «հիվանդին ցավակցել», խօթամիտ, խօթանալ «հիվանդանալ», խօթություն «հիվանդություն» և այլն:

Գատոյ «ցալ, տանջանք» ըստ Արմ-ի մեկ անգամ վկայել է Ոսկերեքանը. «Մի՛ ասիցես եթէ ի պատժոցն բռնադատեցաւ այսպիսի բան խօսել, որպէս որք տանջիցին և զանձանց ինչ վնաս ոչ գիտացին, այլ զանին գատոյս բերեալ, առնիցեն զանձինս վնասակարս»: Բառաձևի և բառիմաստի խտությունը հավաստի չէ:

Որոշ դասակարգումներով ներկայացնենք գրաբար մատենագրության մեջ վկայված զանազան կարգի հիվանդությունների անվանումները: Նշենք, որ ստորև բերվող դասակարգումներն ու ենթադասակարգումները մասամբ կարող են ընդունելի չլինել բժշկագիտության կողմից: Չմոռանանք, որ մեր աշխատանքը բանասիրական-լեզվաբանական բնույթի է:

Ա) Հոգեկան հիվանդություններ

Դժբախտաբար այս հիվանդություններն իրենց զանազան դրսևորումներով բանական մարդու ուղեկիցներն են եղել: Բանականության խանգարումներին վերաբերող որոշ հիվանդությունների անվանումներում առկայանում են միտք, խելք, հոգի, ուղեղ բաղադրիչները. խելագար, խելացնորութիւն, խելայեղութիւն, պակասամիտ, մտաքափ, քերամիտ, քերամտութիւն. կան նաև հարադրական կազմություններ: Բերենք օրինակներ: «Ձոր օրինակ և որ զխելացնորութիւնն ունիցի, յորժամ զինքն չճանաչիցէ» (Ռսկ. Պօղ. II. 302): (ՆՀԲ-ն ընդգծված բառը չունի): «Որպէս զխելայեղ ոչ զխտէ զինչ խօսի» (ՆՀԲ): «Իբրեւ խելագար դանդաչեն»: «Եւագորաս ի մտաց անկաւ» (ՆՀԲ): «Արձակեցեք ի բաց ... զամենայն սերմնակաթ և զամենայն պղծեալ ոգի» (Թիւր. Ե, 2): «Այլ ուղղոյ սնանալոյ և ի մտաց իսկ անկանի մարդ և խօսի ընդ որմս և կագի ընդ հողմս» (Եզն. 180): Թափեալ ուղեղ (ՆՀԲ): Հոգեկան հիվանդություններ են մատնանշում շամբուշ, քալանալ, մոլիմ, վարսամ, ցնորեմ, լուսնահար, լուսնեակ «լուսնոս» լուսնոտ, փռենիտ բառերը: «Տէր, ողորմեաց որսոյ իմում, զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ, բագում անգամ անկանի ի հուր և երբէք ի ջուր» (Մտք. ԺԷ, 14): «Եւ լուսնոտքն որք ասին, ոչ եթէ լուսնոյ վնասեալ՝ այնպիսիք կոչին, այլ դաս ինչ է դիւաց՝ որ ըստ լուսնոյ յայտնին» (Եզն. 180): «Ի շամբշանացն բուժի և ո՛չ ևս կրկին վրէժս առնու» (Ռսկ. Մտք. II. 735): «Ոչ շամբուշ մտացիք են» (ՆՀԲ): «Եւ ոչ ամենայն քալանալ և ցնորել մարդկան ի դիւէ է» (Եզն. 179):

Հոգեկան հիվանդություն է նաև ծիւրութիւն մտաց-ը. «Այնչափ յախտի կամք և չիմանամք զոգուցն ծիւրութիւն (ՆՀԲ):

Կարսամ-ը ՆՀԲ-ն մեկնում է՝ «ախտ մտաքափութեան, ցնորումն գլխոյ»: Անառչանն այդ բացատրությունը մերժում է: ՆՀԲ-ում քեւ բնագրային օրինակ չկա, բայց Կադանկատվացու գրքում հանդիպող վարսամնահար-ը բառը հավաստում է բառի առկայությունը: «Եւ ոմանք իբրև մոլեգին վարսամնահարք ելեալք յանկողնոցն մերկք և խայտառակք՝ ընդ որմս խօսէին և ընդ հողմս կոծէին» (Կղնկ. 165): Ի դեպ,

վարսամնահար ՆՀԲ-ն չունի, իսկ ԱԲ-ում կա՝ «խելացնորութեամբ հիվանդացող»:

Բախած բառի «հիմար» իմաստը նշում է ՆՀԲ-ն՝ բերելով մի շարք օրինակներ. «Որդի մի էր մորա Արտաւագդ անուն՝ բախած ի մանկութենէ, գոր շիդարն կոչեն» (ՆՀԲ): «Չարախօսեսցէ և բախած կոչեսցէ»: Արմատական բառարանում բախածի արմատ է համարվում բախ «հարված», որից՝ բախել «զարնել, ծեծել»:

Ժողովրդախոսակցական լեզվում այսօր էլ գործածական է խփմվել «խելքը պակասել, հիմարանալ»: Ի դեպ, բախ արմատի հետ հոմանշային եզր ունի և հար-ը «խփել, հարվածել», իսկ այդ հար արմատը՝ որպէս վերջին բաղադրիչ, առկայանում է հիվանդություն ցույց տվող դիւահար, այսահար բառերում:

Դանդաշել բազմիցս վկայված է մատենագրության մեջ և ունի մակ «ցնդաբանել, հիմարություններ դուրս տալ» իմաստը:

Շիդար «խենթ, խելագար»: Առաջին անգամ թերևս կիրառել է Մագիստրոսը: Բառը արաբական փոխառություն է: (Տե՛ս Արմ Շիդար բառահոդվածը):

Խենթ-ը նույնպէս հին շրջանից է վկայված:

Փռենիտ-ը փոխառություն է, նշանակում է խելագարություն:

Այժմ անդրադառնամք դիւահար, այսահար բառերին: Հոգեկան հիվանդությունները հնում դիտվել են որպէս դիվային ախտեր, դևերի, չար ոգիների գործ: Այս-ը չար ոգու արտահայտություն է, որը վկայված է դեռևս V դարից:

«Դարձեալ ածին առ մա պատանի մի, որ ունէր այս վերնոտ... իբրև ետես զպատանին, յաղաթս եկեաց և կնքեաց զմա յանուն Յիսուսի, ել ի մնանէ դէն վաղվադակի» (Աբր. Խոստ. վկ. 183): «Եթէ զայրոյ միոջ զորդի հարցուկ այս ունէր և հարուածքն այն երկայնեցան յոյժ և ինչ բժշկութեան հմարս ոչ գոյր» (Եւագր. 102): «Զանգի զոյգ մոցին շարժեն զծաղրն և ... և այսակիորք են որպէս մորա» (Ոսկ. Պօղ, II, 302): «Ողորմեա՛ ինձ, Տէր, որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի» (Մտք. ԺԵ, 23): «Զանգի դիւահարսն յորժամ տեսանենք, արտասուս արկանենք և ոչ թէ մեք փութայցենք դիւախանգարել» (Ոսկ. Մտք. I, 293): «... Եւ գղիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս և բժշկեաց զնոսա» (Մտք. Գ, 24):

Այս արմատի նախնական իմաստն է եղել «քամի», որից փոխաբերաբար՝ «ոյև, սատանա» (տե՛ս Արմ. այս բառահոդվածը): Այս «քամի» իմաստը պահպանվել է եզակի վկայություններում, որոնցից մեկը Եզնիկինն է, որը կարևորվում է մակ որպէս V դարի բարբառային տվյալ.

«... այլ գիտենք՝ եթե այսն հողմ է և հողմն՝ ոգի ըստ յառաջագոյնն ասացելոյ: Քանզի յորժամ մեք ասենք՝ թէ սիր շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ» (Եզն. 92):

Այսահար կազմութեան մեջ այս «ոգև» իմաստը թեև հստակ է, բայց կարելի է տեսնել և «քամի» նշանակութիւնը, հմմտ. ժողովրդախոսակցական գլուխը քամի է մտել և մման տիպի դարձվածային կառույցները:

Բժշկագիտութեան սրբ. Լ. Հովհաննիսյանը նկատում է, որ, ի դեպ, միջին դարերում Հայաստանում հոգեկան հիվանդներին ավելի մարդասիրաբար էին վերաբերվում՝ հետևելով դասական բժշկության հին ավանդույթներին: Եզնիկը, օրինակ, իր զրքի մի հատվածում (Ора-несян, 104) հոգեկան խանգարումը դիվային չի համարում, այլ տարբեր պատճառներով առաջացած սովորական հիվանդություն: «Եւ ոչ ամենայն քալանալ և ցնորել մարդկան ի դիւ է. այլ է որ ի մաղծոյ է, որ ի մաղասէ, և է որ յոսլոյն սնանալոյ և է որ ի ստամոքսէ խանգարելոյ և է որ յորովայնէ խստանալոյ մինչև ցփրփրել անգամ և զաչս յեղյեղոյ» (Եզն. Ի, 180): Ճիշտ է, հաջորդ՝ ԻԱ գլխում հոգեկան որոշ հիվանդություններ «աստծո» հետ է կապում, բայց այս դեպքում կարևորն այն է, որ նա ծանոթ է ժամանակի բժշկությանը: «Ուստի բժիշկ յամառին, թէ բնաւ չիք դև, որ ի մարդ մտանիցէ, այլ ցարք է այն» (մ.տ.): Նույն հիվանդության դիվային և ոչ դիվային բնույթի մասին վկայություն ունի և Ոսկեբերանը (Եզնիկը հավանաբար ծանոթ է եղել դրան): Իր գործերից մեկում Ոսկեբերանը գրում է. «Ոմանք գլխացաւութիւն իմն ասացին ի սատանայէ լեալ» (Ոսկ. Պօղ. II, 430): Մեկ այլ գործում՝ «Իսկ զսրտացաւութիւն զգլխածանրութիւն և զխելագարութիւնն, զջրգողութիւն ի շատակերութիւնէ լեալ ասեն» (Ոսկ. Ճառ. 62):

Պակասամիտ, տխմար, ախմար, կատաղութիւն, յիմար, մոլ(ի), մորոս, քերամիտ և սրանցով կազմված մի շարք բառաձևեր (մոլեկան, մոլեգին, մորոսամիտ, յիմարամիտ...) որոշ համատեքստում քննվող բնագավառին վերաբերող բառեր են: «Իբրև երաց նա զաչս կուրին, մոլեկան կոչեցին զնա» (ՆՀԲ): «Մոլեգին և մոլորեցուցիչ կոչին զնա, սամարացի և դիւսհար», «Յիմարեացին իշխանք Տայանու և խորհրդակցանք նոցա մորոսացին, զի՞նչ իցէ մորոսանալ, զի ոչինչ գտանիցեն հնարս իրացն դիւրութեան» (ՆՀԲ): «Ի պատճառէ իմեքէ կատաղութիւն ի խելսն անկանի» (ՆՀԲ):

Աղճատել, աղճատանք նույնպես այս ոլորտին վերաբերող բառեր են: Աղճատանքը, ըստ ՆՀԲ-ի. «ցնորք մտաց և բանից, զառանցանք, քանդագուշանք...»:

*

* *

Հոգեկան (մտային) ոլորտին վերաբերող հիվանդությունների անվանումները բնորոշվում են հետևյալ բառակազմական կաղապարներով.

ա) Պարզ (կամ այդպիսին գիտակցվող, բառերով. ախմար, այս, վարսամ, ցնորք), յիմար, շամբուշ: (Վերջին բառի դեպքում -ուշ ձևային ածանցային բնույթը հստակ չէ, հստակ չէ նաև շամբ- արմատի իմաստը): Բառն ամբողջապես իրանական փոխառություն է:

բ) Պարզ ածանցավոր. բախած, լուս-ն-ոտ, խելա-գար, մոլե-գին, այսա-հար: Գ-ար բաղադրիչը ավելի շատ ածանցակերպային արժեք ունի:

գ) Բարդ բառեր (հիմնականում երկարմատ). խելացնորություն, խօթամիտ, մորոտամիտ, յիմարամիտ, մտաթափ, խելայեղ, վարսամնա-հար, դիահար, այսահար: Այս տիպի կազմություններում հաճախական են խելք, միտ, հար բաղադրիչները:

Կան նաև հարադրավոր կազմություններ. ի մտաց անկանել, պղծել ոգի, գլխոյն թմբրութիւն:

դ) Բայական ձևեր. խենթանալ, յիմարանալ, քալկանալ, ցնորիլ...

Այս դասակարգման մեջ մտնող անվանումների շարքում բնիկ հայերեն բառեր ըստ էության չկան: Բաղադրյալ կազմություններում հ.-ե. ծագում ունեն լույս-, լուս-, հար, միտ բաղադրիչները:

բ) Մաշկային հիվանդություններ

Մատենագրությունը տեղեկություններ է հաղորդում նաև այս կարգի հիվանդությունների մասին: Այդ բառերից են՝

Արած «բորոտության նշան, կեղ», բիծ «բշտիկ մարմնի վրա, ախտ», բոր, բորոտութիւն, գողի, քարախ, խաղաւարտ «ուռուցք, պալար», խղիսայք «վերքի քարախ, ուռուցք», խոյլ, խոց, կայծակն «կեղ», մարմառոտ «քոս», շուտ/շիտ «պալար», որքին «վերք». պալար, պիսակ «բոր, քոս», ուրուկ «բորոտ. քոսոտ», վահր, վէր, ցամն «քարախ, նեխած վերք». քոս:

«Արած կանաչացեալ կամ կարմրացեալ ի մորք կամ ի հանդերձ» (ՆՀԲ): «Ծածկեաց բորոտութիւն զամենայն մորք» (Ղեստ. ԺԳ, 13):

Բորոտության մի տեսակն է եղեփանդական բորոտությունը (բառացի՝ փղական): «Ինքն եղեփանդական բորոտութեամբ ըստ բոլոր ընկալեալ մարմնոյն ապականեցաւ վասն յանդգնութեանն» (Խոր. 226):

«Ոչ խնայեաց ի գութս առնն իւրոյ զոր տեսանէր ջերմաջերմ խաղաւարտիցն իբրև բորբոք կայծակնեաց վառեալ այրեալ, կեղովքն շուրջ պատեալ և զամենայն մարմինս նորա յորդանց մաշեալ» (Ոսկ. Պօղ. II, 615):

Կեղ բաղադրիչով կազմվում են մի շարք բառեր. կեղանկ, կեղցաւ, քաղցկեղ, անկեղ, չարակեղ...

«Եւ եղիցի ի տեղի կեղոյն սպիտակ փայլուն, լսնացեալ կամ կարմրացեալ» (Ղեւտ. ԺԳ, 18): «Ձի էր նա կեղանկ և եղև ճարակ կեղոյ առանց բժշկութեան...» (Եւս. պատմ. Ը, 17): «Բանք նոցա իբրեւ զքաղցկեղ ճարակ գտանեն» (Բ. Տիմ. Բ, 17): «Սկսաւ հատանել զոր չարակեղն իմն կոչեն, իսկ այլ ժանգ անուանեն» (Բուզ. 95): «...և քանզի բազում անգամ հպարտութեամբ զարժանատրս և զանարժանս խաւօի, հարկանի շտովք և խաղաւարտիւք» (Յմես. Ճառ. ԺԲ): Շուտ/շիտ-ի ՆՀԲ-ի և Արմ-ի վկայությունները ուշ շրջանից են, այնինչ մեզ հանդիպած վկայությունը V դարից է: «Բորոտութեան մմանեցան որբիւնք և արածք և պաղպաջմունք և դժուարաւ զանազանելիք են ախտքս այս բազմաց, մանաւանդ ի սկզբան ախտին» (Ոսկ. Պօղ. II, 721):

Մաշկային հիվանդություն է և կայծակն (ըստ ՆՀԲ-ի՝ անուն պալարի, կեղոյ, խաղաւարտի, որ ունի այտուց): «Ախտ հիւանդութեան, որ էր նա կեղ, զի ըստ նմանութեան նմին վասն այրելոյն իւրոյ անուանէր կայծակն» (Եւս. պատմ. Բ. 8):

Ուրկությունը ՆՀԲ-ն համարում է բորոտության տեսակ. «Քանզի էր լուեալ, եթէ ենուտ յԱղրիանոս ախտ ուրկութեան: Բայց մերն Արտաշէս ոչ երկմտեաց ի նմանէ» (Խոր. 189):

Քոս- «Եւ Պաղիանոսաց, որ զնոյն քոս և մարմառ անձին յոգիս» (Յմես. Ճառ. ԺԳ): «Ձկոյրն կամ զկաղն կամ զբեկն կամ լեզուատ կամ զմարմառոտ կամ զքոսոտ կամ զորբինոտ, մի՛ մատուցանիցեն զայն տեառն» (Ղեւտ. ԻԲ, 22):

Կարելի է նրբիմաստային որոշ զանազանություններով առանձնացնել (քեև խիստ պայմանական) հոմանիշային հետևյալ շարքերը՝
ա) արած-բոր-բորոտություն-բիծ-պիսակ-մարմառ-որբին-քոս.
բ) կեղ-վեր(ք)-պաղպաջ, խոյլ-խոց-պալար-սպի-խաղսայթ.
գ) քարախ-շարաւ-ցամն-վահր:

Վերը օրինակներ բերել ենք ա) և բ) շարքի բառերից: Անդրադառնա՞նք մնացած բառերին՝ համապատասխան օրինակներով:

«Զիարդ քան զվիրածսն դառնագոյնս պաղատին» (Ոսկ. Մտք. I, 204): «Արկ և յերախակալսն ես զհետ վիրին և արգել ճարպն զվիրաբերանն» (Դատ. Գ, 22): «Զգուշանամք ի չար նետից նորա և խստավեր հարուածոցն» (ՆՀԲ): Վեր-ով կազմություններից են՝ դառնավեր, կարեմլեր, վիրել «վերք բանալ», վիրատր և այլն:

Խոյլ- «ոռուցք, պալար նակ՝ խաղաւարտ»: Այնքան էլ հաճախական չէ, բայց հ.-ե. ծագումը հավաստում է գործածության հին ակունքները: Բառը առկա է և բարբառներում. Ղարաբաղի բարբառում նշանակում է ոռուցք: ՆՀԲ-ում ժամանակագրային առաջին վկայությունը Շիրակացուց է. «...քէ խոյլք են խոռոչաց, որպէս յական յակնդի»:

Խղխալթ/խխալթ- ըստ Արմ-ի՝ «վերքի ոռուցք, վերքի թարախ»:

Վկայված է V դարից:

Խոցք «վերք». «Խոցով և վիրօք մեռանին» (ՆՀԲ): Նույն իմաստով ուշ շրջանից կա խոցուած. «Զանցեալ խոցուածսն բժշկեցէ դեղովք ախաշխարութեան» (ՆՀԲ):

Թարախ-շարաւ-ցամն հոմանիշները վկայված են V դարից: Այս շարքի մյուս անդամը՝ վահր գրաբար մատենագրության մեջ վկայված չէ: Եթէ ճիշտ է Աղայանի ստուգաբանությունը (հ.-ե. *(s)uer «քարախոտեր» արմատի ցarah ձևից, որի գուգահեռն է հին բարձր գերմ. warah «քարախ» (Աղայան, 1974, 136-137), ապա ուրեմն բառի հին գործածություն եղել է, որը, սակայն, մեզ հասած գրաբար մատենագրության մեջ չի ավանդվել: Բառը կա Ղարաբաղի բարբառում:

Ցամն բառով թերևս մի վկայություն կա, որը նշում է Արմ-ը. «Մեռեալք յետ միոյ և երկուց աուրց հոտին և ցամն և թարախ և որդունս ծնանին»: Վկայությունը V դարից է:

Թարախ բաղադրիչով են՝ թարախալից, թարախածոր, թարախածուծ, թարախել... Շարաւ-ից – շարաւ առնուլ, շարաւալից, շարավածոր, շարաւահոտ, շարատտել:

Գրաբարում ավանդված մի քանի բառեր ու բառակապակցություններ էլ վեներական հիվանդությունների անվանումներ են:

Սերմնակաթ – «Եւ արծակեացեն ի բաց զամենայն բորոտ ի բանակէ անտի և զամենայն սերմնակաթ» (Թխք. Ե, 2): «Ամենայն անկողին յորում ննջիցէ սերմնակաթն պիղծ եղիցի» (Ղեստ. Ե, 4): Բառի հունարեն հոմանիշը, ըստ ՆՀԲ-ի. γονοροση-ն է: Աթաշակ «սիֆիլիս» քեն

գրաքարում վկայված չէ, բայց ենթադրելի է, որպես իրանական փոխառություն:

Ըմփորտել-ը, ըստ Արմ-ի. մորազյուտ բառ է՝ վկայված մեկ անգամ, Ոսկեբերանի գործերից մեկում. «Ջամենայն մարմինսն ջրգողեալ տորոմեցուցեալ և գերեսս և զամենայն իսկ ըմփորտեալ...»

Տնտղիլ-ՆՀԲ-ն չունի, ըստ ԱԲ-ի՝ «ուտիլ»: Արմ-ը բերում է երկու վկայություն, երկուսն էլ V դարից. «Եւ նոցա ոգիք ջրգողեալք տնտղեալք տորոմեալք»: «Ելցէ ճարպն յուռուցեալ և ի տնտղեալ ըմդեբացն»:

Ելումդ, պուտ. հ.-ե. ծագում ունեն, բայց վկայված են միջին-հայերենյան շրջանից:

Գ.) Ծաղատություն մատնանշող բառերից են՝ կունդ, կնտութին, ճեղ, մաշտիմ «ծաղատանալ»...

Ծաղատ-ը միջինհայերենյան շրջանից է: Ծեղ-ը վկայված է V դարից. «Ապա թէ լինիցի ի կնտութեան մորա կամ ի ճեղութեան արած սպիտակ կամ կարմրացեալ, բորտոթին թաքուցեալ է ի կնտութեան մորա կամ ի ճեղութեան» (Ղեստ. ԺԳ, 12):

«Եւ եթէ մաշտեսցի գլուխ ուրուք կումտ է... եւ եթէ յերեսաց կողմանէ մաշտիցի գլուխ մորա ճեղ է» (Ղեստ. ԺԳ, 40):

Խորենացու Պատմության մեջ կունդ բառը Արամազդին տրվող մականունն է. «Ոչ Արամազդ որ, այլ ի կամեցողսն լսին լինել Արամազդ չորից ևս այլոց անուանեցելոց ոմանց Արամազդ. յորոց մի է և կունդ ոմն Արամազդ» (Խոր. 85): Աճառյանը ընդգծվածը համարում է իրանական փոխառություն՝ «քաջ, արի»: Ավելի հավաստի է Ստ. Մալխասյանի բացատրությունը, թե դեռևս Կղեմես Ալեքսանդրացին է նշում Արամազդի հինգ արձան, որոնցից մեկին տրված է հուն. φάλαγρος «ծաղատ» մականիքը: (Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմություն հայոց. քարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Ե., 1968, էջ 337, կամ 1981, էջ 475):

Որոշ վերապահությամբ գերծ(անել), հերատ(ություն) բառերն էլ կարելի է համարել ճաղատություն (որպես հիվանդություն) թեև վկայված օրինակներում՝ հատկապես գերծ-ի դեպքում այն հստակ չէ՝ գերծ ՆՀԲ- չի նշում, այլ գերծանմ (գերծեմ) գերծում, գերծումն՝ «սափրել, մազերը կտրել», ԱԲ-ն ունի գերծ «ածիլած»:

Դ.) Ծնչառական օրգանների հիվանդությունների անվանումներից են՝ դասալինա, որթոփնիա, թասել, պարտասել, հինինալ, հեւալ, մաև շունչ

բաղադրիչով կազմված շնչարգել, շնչասպառ, շնչակապ, շնչախտ, դժվարաշնչություն ...:

Առաջին երկուսը հումանկան փոխառություններ են: Ըստ Արմ-ի՝ դասալինան վկայված է մեկ անգամ: Բնագրում էլ դրանք դիտվում են որպես օտար (հունարեն) բառեր՝ թասել-ի բացատրություն. «Եւ դարձեալ ի թասել ոգոցն, որ ասի ի յոյն անդր որթոփնիա և դասալինա և ճգնութիւն նեղութեան զամենայն անդամն մորա» (Եւս. պատմ. 46):

Թասեմ-ն իրանական փոխառություն է: Իրանական փոխառություն պետք է համարել և պարտասիմ-ը, ըստ Արմ-ի, «հոգնել, թուլանալ»: Արմատականում բառը ստուգաբանված չէ: Արմատը, անշուշտ, թաս-ն է (թաս-իմ) (ստուգաբանությունը տե՛ս Լ. Հովհաննիսյան, 1990 էջ 259): Բառն ունի «շունչը կտրվել» իմաստը: «Մայրն թողոյր (գոյուստրն) անդրէն ընդոստ ի տանն անկեալ, պարտասեալ» (ՆՀԲ):

Իմաստային այս խմբի մեջ են ներառվում նաև բնիկ հայերեն հազ(եմ), հինինալ «հևալ» բառերը: Հևալ-ը բնիկ հ.-ե. բառ է, բայց գրաբարյան վկայություն առայժմ չկա, և գործածական է միջինհայերենյան շրջանից: «Անհնարին ցաւօք հազելոյ կոտորեալ լինէր» (Եւս. պտմ. Ա, 8): «Հինինալով և հոգի կլանելով ընթանան», «Կրթումն հինինման այրեցելոյն ջերմամբն յաճախագոյն լինի» (ՆՀԲ):

Ուշ շրջանից են վկայված շնչակապ, շնչարգել, ծանրաշնչություն:

Շնչախտը ՆՀԲ-ում վկայված չէ: Այդ վկայությունը գտնում ենք Դ. Հարթացու մի գործում: «Տապ մարմնոյ ի շնչախտ» (Մատենագ. հայոց, Ե, 1133): ՆՀԲ-ն չունի և շնչատիմ-ը:

Ե) Ջերմություն- հումանիշային շարքի անդամներն են՝ ջերմ, տապ, տենդ. «Ձոքանչ Սիմովնի դնէր ջերմացեալ» (ՆՀԲ): «Եւ եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի, ետես զի զոքանչ մորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ մորա և եթող զնա ջերմն» (Մտթ. Ը, 15): «Ջերմոտ ոք որչափ ըմպէ, ծարաւէ»: «Անկանի ի մահիճս իւր և զախտ մահու ջերմանէր» (Ա.Մկր. Ա.6): «Ձտապս ի փորոյն փարատէ» (Եզն.67): «Ունէր զնա տենդ տապագին» (ՆՀԲ): «Անկեալ լինէր տապացեալ և եթող զնա ջերմն» (Մտթ. Ը, 14): «...զի և այժմ բագումք այսու ցաւովս տենդոտին» (ՆՀԲ):

Ղարաբաղի բարբառում գործածվում է ճըրմըտենդ բառը, որը գրաբարյան կազմություն է, թեև վկայված չէ:

Զ) Որկրամոլությունը, ինարկե, որոշ վերապահությամբ միայն կարելի է հիվանդություն համարել, բայց բոլոր դեպքում այն շեղում է բնական վիճակից:

Գրաբարում այս հասկացությունն արտահայտվում է որկոր, որովայն, ստամոքս, փոր բառերով՝ համապատասխան այլ ձևությների հետ. որկորաժետություն, որկորեա, որկորուստ, որկորստություն, որկորամոլ (ուրբին):

Որովայն- որովայնաժետություն, որովայնամոլ, որովայնասեր... «Հալածեա՛ տէ՛ր զքուն ի գլխոյ և զյագումն յորկորայ (ՆՀԲ): «Ի յորկորամոլ ճակահանայ, որ պատունն զպորտս» (ՆՀԲ): «Պահե զօրէնս որդի իմաստուն, իսկ որ արածէ զորկրստութիւն..., անարգէ զհայր իւր» (Առակ. ԻԸ, 7): «Ոչ գոյ ինչ վատթարագոյն քան զորովայնաժետութիւն և ոչ ինչ քան զորկրամոլութիւն» (ՆՀԲ): «Ձարախօսէ զմմանէ իբրեւ զորովայնամոլէ» (ՆՀԲ): «Ոչ ասաց, ով որկրամոլը և որովայնասէրք»: «Որկրամոլութիւն է անսահման բաղձանք ուտելոյ եւ ըմպելոյ (ՆՀԲ):

Որոյնամոլություն իմաստը արտահայտվում է և շատակերութիւն, անյագութիւն բառերով. «Չորդի զյոլովածին և շատակեր» (Խոր., ՆՀԲ): «Տանջանք անյագութեան սակաւապիտութիւն» (ՆՀԲ):

Այս ենթախմբում կարելի է ներառել և սուր բառը, որից՝ սրածութիւն. «Եւ ի մարմինս է ինձ այնպիսի դժնդակ ախտ, զոր սուրն կոչեն բժիշկ, յորժամ ի բազում կարօտութեան սովիցի և սրայգէ և չյագիցէ» (Ոսկ. Ես. 21): «Սրածութեան ախտ կալաւ և մինչև ի Հռոմ եհաս (Ես. քր. II 290): «Ախտ սրածութեան ի բազում կողմանս տիեզերաց տարածեալ» (ն.տ.):

Սուր-ին հոմանիշ նաժ-ը վկայել է Գ. Տաթևացին. «Նմանի հիւան-յութեան, որ կոչի նաժ, որ քարզմանի ստամոքս շնութեան, որ բնաւ ոչ լիանայ կերակրով» (տե՛ս Արմ., Նաժ բառը):

Որկրամոլությունը համարվել է պախարակելի երևույթ: Ահա որոշ դատողություններ Մանդակունու «Թոտթ վասն պահոց պնդութեան» ճառից. «Որովայնք բանձրացեալք խորիւորդս սուրբս ոչ ծնանին»: «Որք որովայնին ծառայեն, անհնարին է լինել հաւատարիմ ծառայ Աստուծոյ»: «... և զուրոյմելի ոգիսն միշտ նեղէ և չարչարէ իբրեւ զքշնամի ... յորժամ մթերք կերակրոցն և ըմպելեացն ի ներքս ամբարիցին ... զաղբաբոյն որովայնն փտեալ ապականիցէ»:

*

* *

Մեր մատենագրությունը բազմաթիվ տեղեկություններ է հաղորդում մարմնի մասերի հիվանդության վերաբերյալ: Այդ կարգի անվանումները կարելի է դասակարգել հետևյալ կերպ. ա) անվանումներ, որոնց բառի իմաստն է հուշում տվյալ մարմնի մասի հիվանդության մասին, ինչպես՝ կաղ, կույր, կակազ ..., բ) անվանումներ, որոնք բաղադրյալ կազմություններ են՝ մարմնի մաս + որևէ բառ (ծնոյթ) կաղապարով, ինչպես՝ աչացաւ, ականջատ, ոտնաբեկ, ծանրախօս, աչացն շլութիւն ... և այլն:

Գլուխ բաղադրիչով են՝ գլխագարութիւն, գլխածանրութիւն, գլխացատութիւն, ծանրագլխութիւն, գլխոյ թմբրութիւն... «Ուտնացատութիւն և ծանրագլխութիւն և անբժշկելի ցաւք» (ՆՀԲ): «Արբեցութենէ գլխածանրութիւն» (ՆՀԲ): «Ուրպէս արբեցութիւնք և գլխագարութիւնք ունիցին զոք» (Ոսկ. Ճառ. 331): «Գլխոյ թմբրութիւն և աղեաց ցաւք» (Ոսկ. Մտք. II, 649):

Գլխացավ, գլխի ջարդվածք իմաստն ունեն մաս կառաւի «գլուխ» բաղադրիչով մի քանի կազմություններ: «Չոմանս վիրատոքս, զոմանս կառաւինատս արծակէին» (ՆՀԲ): «Կառաւինաբեկ և ոտնաբեկ արարին արս բազումս» (ՆՀԲ):

Աչքի հիվանդություն, արատ են մատնանշում կոյր, շիւ, բիծ բառերը, մաս ակն, աչք բառերով և «ցաւ, արատ» իմաստն ունեցող մի շարք բաղադրյալ կազմություններ՝ աչագար, աչացաւ, զաչացու, պղտորութիւն աչաց, կալ աչաց, աչացն շլութիւն, գիջակն, ակնայրատ, ակնհար, ակնատ բժուտ ... մաս՝ թերատես, ճայրոտ, պտղակն: «Ուրպէս բիծ զակամբ եկեալ ոչ բողացուցանէ տեսանել զայտոշածն» (ՆՀԲ):

Ճայրոտել ունի «շլանալ տեսողությունը վատանալ» իմաստը. «Որք զերեսս զհարկատրագոյն զգայութեանց (իմա՝ զաչս) ճայրոտեալք շլացան» (ՆՀԲ): «... և որք մնայցենն՝ աչագարք լինիցին, զի այն է նուաղել աչացն և ծիրել անձանց...» (Եմես. մեկն. 162): «Ի սկզբան աչացաւին դարման տար աչաց...»: «Կուրացուցանէ և արեզակնս զգիծակունս և աչացաւքն վնասին ի լուսոյ կուրացեալք» (Կիրոդ. կոչ. 19, 114), «որ զորացոյց զնա վաղվաղակի, որ և զաչացն շլութիւն փոփոխէր ի տեսանել» (Կիրոդ. կոչ. 385): «Կամ սապատողն կամ շիւ կամ զպտղակն» (Դեւ. ԻԱ.30):

Բերենք այլ օրինակներ մարմնի մասերը նշող բառերով կազմված հիվանդությունների անվանումներով:

Ականջ- ականջատ, ականջացաւ, գէջն ականջաց: «Այր կաղ, կամ կոյր կամ ականջատ» (Ղեւտ. ԻԱ, 18): «Քանզի արտասուք մորա և աղտ ռնգաձև և գէջն ականջաց յերկիր անկեալ և անդէնք որդունք լինցին» (Աթանաս, 579): «Յաչացն վնասեալ՝ կոյր կոչի և յականջացն՝ խուլ» (ՆՀԲ):

Ունշ/քիթ - ունջատ, կարճունշ, քթատ, պնջատ:

«Ձի ամենայն այր յորում իցէ արատ... կաղ կամ կոյր, կամ կարճունշ..., » (Ղեւտ. ԻԱ, 18): «Խեղէին, ծռէին, պնջատէին զպաշտօնեայս իւրեանց» (ՆՀԲ): Ունջատ և քթատ ուշ վկայություններ են:

Լեզու- լեզուատ, լեզուագար, հատկապես լեզու, լեզուակապ, կազ լեզու: Լեզվական (խոսքային) արատ նշող բառերից են կակազոտ, ծանրախօս, ծանրալեզու, քերխօս, քոթով, քոթովախօս, քաղթնատ, «թլվատ, բոթովախոս», համր բառերը:

«Ձբեկն կամ զլեզուատ ... մի մատուցանիցեն զայն տեառն» (Ղեւտ. ԻԲ. 22): «Աւելորդ է ապա լեզուագարիցն մոլորութիւն» (ՆՀԲ): «Կւայ զխարկեալ և լեզուակապ» (ՆՀԲ): «Ձօրէն քաղթնատաց քոթով բարբառքդ մոցա» (ՆՀԲ): «Անոճ իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակազէ» (Խոր. 69): «Որ առ քաղթնատութեան քոթովէին, սսէպ կրթութիւն զկազ լեզու մոցա էած յուղորթին (ՆՀԲ): «... զի նրբաձայն և ծանրալեզու են ես» (Ելք, Դ, 10): «Ծանրախօսութիւն մորա և կապանք լեզուի մորա ոչ արձակեցան» (Եփր. Մատ. I, 140): Կիրեղ Երուսաղեմացու գործերից մեկում վկայված է հազիւախօս (1727 թ. հրատ. մեջ՝ ծանրախօս, որը ՆՀԲ-ն չունի. «Յայնմ ժամանակի վազս առնուցուն կաղք իբրեւ զեղջերոս և պարզ լինին լեզուք հազիւախօսաց» (Կիրիլ. Կոչ. 210): Ծանր բառն էլ, ըստ ՆՀԲ-ի, ունի և «համր» հմաստը. հմմտ. «Եղիցի ամենայն մարդ արագ առ ի լոել, և ծանր առ ի խոսել»: Կազ «կակազ» բառը որպէս բառախաղված ՆՀԲ-ն չի նշում, չի նշում և Արմ-ը: Վերջինս կակազ համարում է կազ արմատի կրկնությամբ կազմված բառ: ՆՀԲ-ի՝ Ոսկեբերանից վկայված օրինակը կազ արմատի անկախ կիրառության մնուշ է (տես քաղթնատութիւն-ի օրինակը):

Համր բաղադրիչն է համրանալ, համրեմ, համրութիւն բառերում:

Ոտքի արատ, հաշմություն իմաստով՝ ոտնացատություն՝ խեղ, կաղ, խոշտալ/խոշտանալ, կթոտ սողուն(ք), պատազրոս, գոսացեալ ոտք. «Արդ եթէ որ ասէ ի քահանայիցն աչօք կամ ձեռօք կամ ոտիւք կամ այլ մասամբն խեղ իցէ մարմնոյն» (Փիլ. ճառ. 189): «Խոշտացաք, կաղացաք»,

«Կադ երկուց ոտից» (ՆՀԲ): «Ձօրացարուք ձեռք լքեալք և ծունկ կրոտք» (ՆՀԲ): «Ուտնացաւորինք, գլխագարտինք և անբժշկելի ցարք» (ՆՀԲ): «Այր մի սողուն ցաւով գոսացեալ ոտիւք կամեցաւ գնալ առ սուրբն» (ՆՀԲ): «Եւ եթ ծնգաց կքատելոց քաջալերութիւն զգեցուցէր ...» (Իսիք. Է. 204):

Սողուն-ը, բացի իր հիմնական նշանակությունից, որոշ համատեքստերում ունի «սողացող, կադ» իմաստը. (տե՛ս վերի օրինակը), մակ՝ «Անդ ի նմին գեղջէ ածին առ մա պատանի մի սողուն յորովայնէ մոր... եւ անդէն վաղվաղակի հաստատեցան ոտքն և ուղղեցան ծունկքն, ողջացաւ յարեաւ և սկսաւ գնալ...» (Արք. խոստ. վկ. 125):

Պատագրոս «ոտնացալ»-ը փոխառություն է X դարից. «Եւ Աբդիու որդի Աբդիի իբրև ետես զի բժշկեցաւ Աբգար թագաւոր, մատոյց զոտս իւր առ մա, զի պատագրոս էր եղեալ զձեռն իւր ի վերայ նորա և բժշկեաց գնա...» (Լաբուր. 9):

Ոտքի, ձեռքի կոտրվածք, ջարդվածք իմաստն արտահայտող բառերով օրինակներ՝ «Մայրակոտոր առնին զոտսն եւ զձեռն» (ՆՀԲ): «... այր ձեռներէ կամ ոտներէ...» (Ղեստ. ԻԱ, 19-20):

Կան վկայություններ ներքին օրգանների հիվանդությունների վերաբերյալ: Ներքին օրգանները (գրաբարում փորոտիք), ըստ Փիլոնի մի վկայության, հետևյալ բառերն են. «փորոտիք եօրն - ախոնդանք, սիրտ, փայծաղն, լեարդ, թոքք, երիկամունք երկու» (ՆՀԲ): Իհարկե, այս թվարկումը լրիվ չէ:

Ախոնդ- «ստամոքս, փորոտիք» բաղադրիչով կազմված անվանումներ մեզ չի հանդիպել:

Սիրտ բաղադրիչով նույնպես քիչ կան: Նկատելի է, որ մի շարք կազմություններ գրաբարում փոխաբերացված են. ինչպես՝ սրտաբեկ «ահաբեկված, ճնշված», սրտաթափ «անսիրտ, անհույս», սրտակոտոր «լքված, անհույս», սրտացաւ-ը թերևս բուն իմաստով է ներքոբերյալ օրինակում. «Էր ոմն ծեր սրտացաւ ի սենեակսն» (ՆՀԲ):

Կարելի է ենթադրել, որ մախագրային շրջանում (գուցեև գրաբարում) վերոհիշյալ բառերը գործածվել են մաս որպես սրտի հիվանդության անվանումներ:

Փայծաղն բաղադրիչով են կազմված փայծաղնացաւ, փայծաղնացաւորին բառերը:

Լեարդ-ով կազմություններ, բացի լերդացաւ-ից, բառարանները չեն վկայում: Լերդաբեկել-ը փոխաբերացված է:

Թոք արմատով կա թոքացաւ, թոքացաւորին (միջինհայերենյան շրջանից):

Երիկամն- գրաբարում հանդես է գալիս միայն հոգնակիաձև՝ երիկամունք. մեզ հետաքրքրող ձևեր բառարանները չեն վկայում:

Աղի արմատով կա գաբադութին «աղիքների ցավ» և ողորկադութին (ղիզիմտերիա), որը վկայում է և ՆՀԲ-ն. «... ի մարմնոյն արտաքս անկեալ գաբադութին և ողորկադութին հոսմամբ որովայնին»: Աղէխարշ, աղէկոտոր, աղէկէզ հիմնականում փոխաբերական իմաստով են գործածվում:

Բերենք ներքին օրգանների հիվանդություն նշող այլ կարգի օրինակներ. «Պայթեցին երակք սրտի իմոյ» (Իսիք. 492), «Եւ զլխոյն քմբրութին և աղէաց ցաւք ստիպեն զայնայիսին» (Ոսկ. Մտք. II, 649), «... կոծին և աշխարեն և խորովիմ, զի աղիքն իմ յինեն կոտորատին» (Ոսկ. Պօղ. 796): «Ձթոքոցն մեծանալ և անցանել զթոքառաջսն զպորտին» (Եւագր. 23): «... ոչ գոյ ինչ վատթարագոյն քան զորովայնաժէտութին» (ՆՀԲ): «Որովայնն ուտոյց իցէ» (ՆՀԲ): «Որպէս թէ տեսանիցես փայծաղնացաւ չարախտեան այտումն» (Ոսկ. ճառ. 538): «Քանզի որպէս ոմանք ծանրաստամոր ի մարդկանէ յորժամ կամիցին ըմպել ...» (Ոսկ. Ճառ. 43): «... որ ի մաղձոյ է ... և է՝ որ ի ստամոքսէ խանգարելոյ և է՝ որ յորովայնէ խստանալոյ» (Եզն. 180): «Յաւ ստամոքսի և լերդի այտումն» (Եւագր. 231):

Ստամոքսի, աղիքների ցավ են քանչը «փոքիարություն», ործալ «կերածը հետ տալ, փսխել»:

Մեզ հանդիպել է մի հետաքրքիր վկայություն, երբ հիվանդությունների պատճառներն ու դեղերի ազդեցությունը որոշելու նպատակով կատարվում է հերձում և փորձարկում: Վկայության մեջ շոշափվում է և այլ գործողության բարոյական կողմը և հիմնավորումը: Շիշտ է, վկայությունը քարզմանական գրականությունից է, բայց հմարավոր է, որ հայկական բժշկության մեջ այն կիրառվել է:

«Եւ ինձ ուշ եղեալ անասաջիք, մինչեւ բերիցեմ ի մէջ զարիմակ առաջնոցն, զի թէպէտ և հին է, սակայն ճշմարիտ է, բժշկական արուեստն, որ է հնոյն նախնեաց, որ զբնութին մարմնոց մարդկան կամեր հաստատեաւ ճշգրտել, թե ո՞ր ինչ դեղ յո՞ր վայրաստիս անդամոցն ազդիցէ: Չայլոց աղիսն հերձելով, այլոց պաճարանս փրկութեան հնարէին:

Եւ թէպէտ անիրաւագոյն իրաւքն երեւեցին, զկենդանիս այլոց կենդանեաց, հայթայթանս այլոց ապրանաց յաւշել, սակայն զմահապարտ որ վասն աւագակութեան կամ վասն կախարդութեան կամ վասն անառական շնութեան: Չայնպիսիս որ առնուին հերձուին ո՛չ առ ինչ մեղանչել, այլ գորս զամ մի ի տանջանս և ի մահ մատնեալ էր, արքուցեալ

դեղս կենդանոյն հերձուին, զի մինչ դեռ աղիքն խլրտիցեն, խնայցեն զազդուածս դեղոյն» (Եւս. Ճառ. ԺԱ. 1959, էջ 23):

Այս հատվածում հետաքրքիր է մաս վայրաստիս անդամք կապակցությունը, որը կարելի է թարգմանել ներքին օրգաններ:

*

* *

Անդրադառնալով բժշկություն, հիվանդություն հասկացություններին առնչվող այլ անվանումների:

Դեղաբույսերի անվանումներն են. դեղ, դարման, արմատ, խայտաղան, շուփայ, սպեղանի:

Դեղ-ն այս իմաստային շարքի ամենագործածական բառն է, որը վկայված է V դարից. բնիկ հայերեն բառ է՝ անկասկած գործածական է եղել նախագրային շրջանից: Նախնական իմաստն է եղել «խոտ», քանի որ վերջինիս որոշ տեսակներ վաղնջական ժամանակներից հիմնական բուժամիջոցներն էին:

Բերենք դեղամիջոցների անվանման բնագրային օրինակներ. «Միքէ դեղ ոչ գուցէ ի Գաաղաղ կամ բժիշկ ոչ կայցէ անդ» (Երեմ. Ը, 22): «Եւ դիր դեղ յաչս քո զի տեսցես» (Յայտ. Գ, 18): Այդ արմատից է կազմված և դեղնեղի, որը թերևս «դեղ, դարման» իմաստն ունի: «... զի կիսոցն մորթքն պատսպարան մերկութեան մերոյ լինին և կիսոցն ճրագուն դեղնեղի լինի» (Եզն. 65): «Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինի ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց» (Խոր. 149):

Դեղ արմատով են կազմված դեղագիտութիւն, դեղագործ, դեղագործութիւն, դեղաթափ «հակաթույն», դեղախումկ, դեղակուր լինել «թունավորվել», դեղատու, դեղել: Դեղ մասն նշանակում է թույն. «Իսկ Փառանձեմն խնդրէր սպանանել զնա դեղովք» (Բուգ. 107):

Որպես հակաթույն հայտնի էր թերակիւէ-ն. հմմտ. «Իսկ մեծամեծք նախարարացն մատուցանէին թիրակէս և անդեղեայս վասն ապրելոյ» (Բուգ. 183): Անդեղեայ-ն նույնպես հակաթույն է (թարգմանվում է դեղ-թափ):

Դարման «դեղ»: Իրանական փոխառություն է, բազմիմաստ բառ, որի «դեղ» իմաստը վկայված է արդեն V դարից. «այլ ցաւք են այն եւ մեք դարմանովք կարենք բժշկել» (Եզն. 180): Այդ արմատով ունենք դարմանեն, դարմանիչ, դարմանոց:

խայտաղան «Դեղ»։ ՆՀԲ-ում վկայված չէ։ Արմատականում համարվում է նորագյուտ բառ։ «Մի՞ խայտաղան ոչ է ի Գաղաաղ և կամ բժիշկ ո՞չ է անդ»։ Հմմտ. Երեմ, Ը, 22, որտեղ խայտաղանի փոխարեն դեղ է։

Շուփայ- Այս բառն էլ թերևս եզակի վկայություն ունի. հանդիպում է «Գիրք ատաքինութեանց»-ում (XIV դար), որտեղ – Յայտ Գ. 18-ի եւ դիր դեղ յաչս-ի փոխարեն՝ եւ դիր շուփայ է։

Սպեղանի- գրաբարի բառարանները մեկնում են «վերքի օժանելիք» (Արմ), «դեղ սպեաց՝ օժանելի, իբր իւղ ի վերայ վիրաց, կակդիչ, մեղմիչ, բուժիչ» (ՆՀԲ)։ «Ոչ դեղը և ոչ սպեղանիք բժշկեցին զնա» (ՆՀԲ)։ «Յոտից մինչև ցգլուխ չիք ի նմա առողջութիւն. ոչ վերք, ոչ այտումն ոչ հարուածք խղիւայթեալք, չիք սպեղանի ի վերայ դնել, ոչ ձէք և ոչ սլատանս» (Ես.Ա. 6)։

Ճար «հնար, միջոց, դարման»։ Իրանական փոխառություն է։ Վաղ շրջանում «դեղ» իմաստով գործածությունը հստակ չէ։ Այդպես է ՆՀԲ-ի վկայած օրինակներում։ Ըստ երևույթին, այդ իմաստը հստակացել է միջինհայերենյան շրջանից. և արդի որոշ բարբառներում ճար «դեղ» շատ գործածական է։

Ինչպես հաստատում են մատենագրական տվյալները գրաբարում բացի դեղ-ից մյուս հոմանիշները գրքային ճանապարհով անցած բառեր են՝ գործածության ոչ մեծ հաճախականությամբ, մասամբ նաև ժամանակագրորեն ուշ մուտք գործած։

Բժիշկ- բառի հոմանիշներն են ախտաբոյժ, ախտաբաղ, դարմանիչ։

Առավել հաճախական է բժիշկը։ Այդ բառով կազմված են բժշկական, բժշկականություն, բժշկանոց, բժշկանք, բժշկապետ, բժշկարան, բժշկեն, բժշկություն։

Ախտաբոյժ-ը հաճախական չէ. թերևս բարբառային ձև է. «Ձթարախածուծս ի կենդանեացդ իբրև զախտաբոյժս մեծարեալ» (ՆՀԲ)։

Դարմանիչ «պահող, խնամող, սնուցիչ»։ Այս իմաստները ենթադրում են նաև «բուժող», որը սակայն այնքան էլ հստակ չէ։ Բերենք մեկ օրինակ այդ բառով. «... այլ և մերձակայիցն, որ զնոսս մարգիցեն և դարմանչաց, որ զնոսս դարմանիցն» (Ոսկ. Պող. I, 357)։ Բուժել-ի հոմանիշներն են բժշկել, ապաքինել, աւաքել։

Հիվանդանոց բառի հոմանիշային շարքն են կազմում բժշկանոց, բժշկարան, դարմանոց, գողենոց, տկարանոց...

«Վիրավորք յորժամ ի բժշկանոցս մտանն, չեն պետք այլ և այլ խորհրդոց, բայց սխայն դեղ վիրին որոնել» (Մանդ. Դ)։ «Որ ի բժշկանոցն

զման, զի ընալիցեն դեղս» (ՆՀԲ): «Ի մէջ անցուցեալ զամենակար
բժշկարանն՝ բժշկել զամենայն ախտս» (ՆՀԲ):

Դարմանոց բառով ՆՀԲ-ն բերում է մեկ օրինակ՝ Բուզանդից.
«Կարգեցին դարմանոցս և ոռճիկս»:

Գողենոց- կազմված է գողի «բորոտ, ուրուկ» բառից: Վկայու-
թյունը հետհինգերորդարյան է, նշանակում է ուրկանոց, բորոտների
հիվանդանոց. «Երթալ ի գողենոցն և վաստակել» (ՆՀԲ):

Ուրկանոց-ը ևս հետհինգերորդարյան վկայություն է. «Գան
արբցեն և յուրկանոց տացին» (ՆՀԲ):

Վ. Կ.
: *
* *

Համառոտակի անդրադառնանք իմաստային այս ոլորտի մեջ
ներառված բառերի ծագմանը:

Բնիկ հայերեն բառեր. Այս շերտն ամենաընդգրկունն է: Յընթացս
շարադրանքի առիթ ենք ունեցել խոսել որոշ բառերի ծագման մասին:
Այստեղ ներկայացնենք հ.-ե. ծագումով բնիկ հայերեն բառերի ցանկը.
այտնույ, արած, արատ, դալուկն, դող, ելունդն, երկն, քանչ, քարախ,
թոթով, թաւնիւմ, թօպ «վտիտ, տկար», լորցք, լուսն, խաղաւարտ, խնդ,
խօթ, խոյլ, խուլ, կայծակն, կեղ, հազ, հիմիմալ, հիւանդ, հեալ, ձմեթ
«աչքացալ», մարմաջ «եռք», մարմառ «վերք», մոլիւմ, շիւ, նիգ
«ջղածգում», ործալ, պալար, ջերմ, սուր, ստնգալ «ջղածգել», վահր, տեռ
«կոշտուկ», ցաւ, քաղցկեղ: Նշենք, որ այս ցանկն ավելի ծավալուն է, քան
Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ բերվածը (ՀԼՊ, I. 109),
որովհետև հաշվի են առնվել նաև հետաճառյանական՝ հիմնականում Գ.
Ջահուկյանի ստուգաբանությունները:

Ներքոբերյալները Արմ-ում ստուգաբանված չեն:

հիւանդ – (142), ցաւ – (133), մարմաջ (210)- գրաբարից
վկայություն չկա, մարմառ (210), ձմեթ – (124) օգտագործվում է
բարբառներում, ստնգալ (210), թօպ (210) - «վտիտ» իմաստը վկայված
օրինակում պտուղների համար է. խուլ – (148), դող – (120), քանչ «փո-
րահարինք» (152), հազ – (134), նիգ «ջղածգություն» (140) - բարբառային
գործածություն ունի: (Այս բառերի հայերեն արմատների մասին տե՛ս
Ջահուկյան 1987: Փակագծերում նշված են էջերը):

Իրանական փոխառություններ. ախտ, բիծ, բժիշկ, բոյժ, բորոտ, գար, գոնջ, գոսակ, դարման, քասել «հևալ», ժահր, ժէտ, կոյր, ճար, շամբուշ, պիսակ, պարտասիլ:

Ժահր «բույն» – առաջին վկայությունը. ըստ Արմ-ի. Մագիստրոսից է: Գոնջ – վկայությունը հետգրաբարյան շրջանից է, բայց V դարից կա գոնջանալ «հիվանդանալ, բորոտանալ»:

Ժէտ- անկախաբար չի կիրառվում, բայց առկա է ախտաժէտ, ախտաժէտութիւն, դեաժէտ, լուսնաժէտ կազմություններում:

Գար «ցավ, հիվանդություն» նույնպէս առանձին անգործածական է, բայց առկա է հիվանդություններ նշող մի քանի բառերում. գլխագար, խելագար, աչագար, միզագար, գարաղություն...:

Արմատական բառարանում գար-ը ստուգաբանված չէ: Բառի իրանական ծագումը կարելի է հավաստի համարել (Աղայան, 1974, 50-51, Ջահուկյան 1987, 520):

Սեմական փոխառություններ. (հիմնականում ասորերենից) դասպինա «շնչարգելություն», մաշարայ «թոքախտ», սպեղանի:

Դասպինա-ն հունարեն բառ է, որը կարող է անցած լինել և ասորերենի միջոցով, սակայն այն կարող ենք դնել և հունական փոխառությունների շարքում. մանավանդ, որ վկայված միակ օրինակում քարգմանիչը այն համարում է հունարեն. «Եւ դարձեալ ի քասել ոգոցն, որ ասի ի յոյն անդր որթովնիա և դասպինա» (տե՛ս Արմ):

Մաշարայ «քարակացավ, թոքախտ», V դարից վկայված է մաշարայական:

Հունական փոխառություններ. Հ. Աճառյանն առանձնացնում է հունարենից փոխառյալ հետևյալ բառերը. անդիտիտոն, ափիմեռինոս, գալլոս, ելեփանդական, եպիդեմիական, քերիակէ, իմեռիական, լեպո, լիպլիրիայ, կարկինոս, կափոս, մանիա, մեղանպոդական, միթրիտոս, որթովնիա, պատագրոս, սինէհիս, սինիքոսական, տոքսական, տոխտոն, փոենիտ, քրիզմայ (ՀԼՊ, II, 35):

Բնագրային համեմատությունները ցույց են տալիս, որ բացառությամբ մեկ-երկու բառերի, նշվածները կամ ուշ շրջանից են, կամ մեկական (պատահական) կիրառություն ունեն, կամ էլ բնագրում դիտվում են օտար միավորներ: Թերևս այդ է պատճառը, որ ՆՀԲ-ում այդ բառերի մի մասը վկայված չէ (անդիտիտոն, եպիդեմիական, իմեռիական, լեպո, լիպլիրիայ, մանիա, մեղանպոդական, մեթրիտոս...):

Անդիտիտոն (կա միայն Երեմիայի բառարանում):

Էպիդեմական, իմեռիական «ջերմ», մանիա «զառանցանք», մեղանպոդական «ջերմ, տենդ», սինիքոսական «ջերմ», տռիտոն «եռօրյա ջերմ» բառերը վկայել է միայն Մագիստրոսը:

Լիպիրիա, կափսոս, միթոիտոս (դեղաթափ), սինեհիս-ը վկայել է Միսիթար Հերացին:

Լեպո(տ), փռենիտ եզակի վկայություններ են ուշ շրջանից:

Կարկինոս (քաղցկեղ հիվանդությունը) վկայել է Լամբրոնացին:

Որթոփնիա «շնչարգելություն» թեև վկայված է V դարից (Ես. պատմ), բայց բնագրում դիտվում է որպես օտար բառ. «... որ ասի ի յոյն անդ որթոփնիա»: «Ալեքսանդրի պատմության» մեջ վկայված են տոքսական «թունավոր», գալլոս (ըստ Արմ-ի՝ ներքինի) բառերը: ՆՀԲ-ն գալլոս-ը մեկնում է «աքաղաղ կամ հաւ կոտոտ»: «Գալլոս եղիցի կամ բացակտուր ծնունդն»: «Պատմութիւն Ալեքսանդրի» գրքի բնական բնագրում Հ. Սիմոնյանը գրում է. «Գալլոսը թարգմանության հունարանություններից է: Այսօրվա ընթերցողին միանգամայն պարզ չէ, թե որոշակի ինչ նկատի ունի վերոբերյալ դարձվածը, և մանավանդ ինչ պետք է հասկանալ «գալլոս» բառի տակ: ... Ներկա դեպքում գալլոսն ունի «թերի, պակասավոր» իմաստը: (Պտմ.Ալեքս, 522):

Փաստորեն այս բնագավառին վերաբերող հունարեն բառերը (անկախ թվից) գրաբարում լայն տարածում չունեին. դրանք պատահական կիրառություններ են, և շատ հաճախ հայ թարգմանիչը համատեքստում մեկնում-բացատրում է համապատասխան հոմանիշով: Այդ միավորները նույնիսկ կարելի է փոխառություններ չհամարել՝ այլ համատեքստի յուրահատկությամբ պայմանավորված օտար բառեր:

Ակնհայտորեն այս բնագավառին վերաբերող բառապաշարում մեծ թիվ են կազմում բնիկ հայերեն բառերը: Բնիկ հայերեն բառերի գերակշռությունը (նկատի ունենք նաև բաղադրյալ կազմությունների բաղադրիչների բնույթը) պետք է բացատրել նաև այն համազամանքով, որ մարմնի մասերի անվանումները հայերենում մեծ մասամբ հ.-ե. ծագում ունեն, իսկ հիվանդություն նշող շատ բառերի բաղադրիչներ են մարմնի մասերի անվանումները:

Մի շարք բառերի ծագումը պարզ չէ. այս, ախմար, բախած, բիծ, գողի, խայտաղան, խղոյաթ, կակազ, համր, շարաւ, շուտ/շիտ, տորոմ(ել), ցամն, ուռ(չիլ), քոս... Սրանց մեջ նույնպես կարող են լինել բնիկ հայերեն բառեր: Իսկ եթե բոլորն էլ փոխառություններ են, ապա ավելի հին են, քան ասորերենից, հունարենից անցած բառերը: Կարող ենք արձանագրել, որ

գրաբարը (հատկապես վաղ գրաբարը) խիստ զգուշավոր է եղել հիվանդություն (բժշկություն) նշող բառերի փոխառության հարցում: Այդ սկզբունքը փոխվում է ուշգրաբարյան և միջինհայերենյան շրջանից՝ պայմանավորված հատկապես արտալեզվական որոշ գործոններով:

Աշխատանքի տարբեր բաժիններում այս կամ այն առիթով անդրադարձել ենք բառակազմությանը: Բաղադրյալ ձևերից ամենատարածվածը որևէ խոսքի մաս + ցավ կամ ախտ կաղապարն է:

Ախտ բաղադրիչով կազմված բառերն են. ախտաբար, ախտաբեկ, ախտաբեր, ախտաբիծ, ախտաբոյժ, ախտաբոյծ, ախտաբորբոք, ախտագործ, ախտաժեռ «հիվանդ», ախտալի, ախտալից, ախտախոնարածին, ախտանք «ախտ», ախտական, ախտակիր, ախտակից, ախտակրել, ախտակրություն, ախտակցաբար, ախտակցել, ախտանալ, ախտակցություն, ախտահալած, ախտահասակ «հիվանդության պատճառ», ախտամոլ, ախտամոլություն, ախտային, ախտանալ, ախտանկեալ «հիվանդացած», ախտաշարժ, ախտաչար, ախտապաշար, ախտասեր «ցանկասեր», ախտասիրություն, ախտապան, ախտարար, ախտարծարծ «ցավեր գրգռող», ախտացոյց, ախտացուցանել, ախտառ, ախտառաբար, ախտառագոյն, ախտառական, ախտառություն, ախտաքաղ, ախտունակ...:

Վերջադաս- ախտ բաղադրիչով բառերը քիչ են. ժանտախտ (մառ ժանտախտական), չարախտ (ՆՀԲ-ն չունի, ըստ ԱԲ-ի՝ «հիվանդ»). չարախտական, չարախտակցություն, չարախտառ, չարախտավար, շնչախտ:

Ժամանակակից հայերենում վերջադաս բաղադրիչով բառերը անհամեմատ շատ են. հմմտ. խլախտ, ջլախտ, գեղձախտ, ռոմախտ, ոսկրախտ: Ինչպես նկատելի է գրաբարում մարմնի մաս + ախտ կազմություններ չկան:

ցաւ բաղադրիչով՝ ցաւաբեր, ցաւագար, ցաւագին, ցաւագնագոյն, ցաւագնական, ցաւագնել, ցաւագնոտ, ցաւագնոտել, ցաւագնութիւն, ցաւալից, ցաւած, ցաւածութիւն, ցաւական, ցաւակիր, ցաւակից, ցաւակցաբար, ցաւակցական, ցաւակցել, ցաւակցութիւն, ցաւահալած, ցաւասեր, ցաւացածոյց, ցաւացում, ցաւեցուցանել, ցաւեցուցիչ, ցաւոտ, ականջացաւ, անցաւ, անցաւ(աբար), անցաւ(ակից), անցաւ(ելի), աչացաւ, ատամնացաւ, բերանացաւ, զլխացաւ, զլխացատութիւն, լերդնացաւ, քիկնացաւ, քոքացաւ, կերցաւ, կրծացաւ(ութիւն), կողացաւ, ստամոքացաւ, սրտացաւ, փայծաղնացաւ, փողացաւ «պարանոցի ցավ»:

Նկատելի է, որ այս կազմություններում գերիշխում է մարմնի մաս + ցաւ կադապարը:

Բառարանները չեն վկայում դեղնացաւ, յօղացաւ, որովայնացաւ, բայց ավանդում է դեղնացաւորին (ուշ շրջանից), յօղացաւորին, որովայնացաւորին: ՆՀԲ-ն չունի կրծացաւ, իսկ ԱԲ-ն ունի:

Բեկ «ջարդված, կոտրված» բացառիչներով են՝ բեկանել, բեկբեկել, ախտաբեկ, լերդաբեկ, հարուածաբեկ, ոսկրաբեկ, ողնաբեկ, ոտնաբեկ, ցրտաբեկ:

Որոշ օրինակներում բեկ-ը «ջարդված իմաստով չէ, այլ հոմանիշ է հար-ին: Հմնտ. «Յօդահար և ցրտաբեկ լինիցին» (ՆՀԲ): «Որդնալից տրորեալ, ախտաբեկ և սովաբեկ» (ՆՀԲ):

Հար բաղադրիչով. ակնհար «չար աչք կաւած». դիւահար, լուսնահար. խայթահար, խորշակահար, կսկծահար, մարմնահար, շանթահար, ցրտահար, ցօղահար, օծահար, ..., տոբահար: Մարմնահարություն ՆՀԲ-ն չունի: Բառը վկայված է V դարից: «Ձոր ինչ ցաւոց ասիցեն՝ բազում տանջանք էին, եւս չար քան գկուրութիւն կարետր, քան զմարմնահարութիւն» (Ոսկ. Պօղ. 439: (Կարելուրը ուղղելի է՝ կարեւէր – Լ.Հ.):

Ատ/հատ ձևայքով կազմությունները ունեն «պակասավոր, քերի, մարմնի մասը վնասված» իմաստները (ատ-ը հար- արմատի տարբերակն է): Ականջատ, արատ, գլատ(ել), գունատ, քաթահատ, քլփատ, լեզուատ, ծայրատ(ել), հերատ, շնչատ(ել), շրթնատ, պնչատ, քնահատ:

Այլ կարգի բառերից կարելի է նշել քեր, ծանր, կարճ բաղադրիչներով որոշ կազմություններ. քերածին, քերակատար, քերամիտ, քերատես(ութիւն), քերխօս, քերութիւն... գլխածանրիլ, ծանրախօս, ծանրաշարժ, ծանրաշնչութիւն, ծանրաստամոր...

ԺԱՄԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Ժամանակ հասկացության մախազբաբարյան (վաղմջահայերեն-յան) որևէ անվան հետքեր չկան:

Գրաբարում արդեն գործառում էին ժամանակ և ամանակ բառերը: Ամանակ-ը հաճախական չէ. այն չկա, օրինակ, Աստվածաշնչում և V դարի շատ երկերում: Բառարանային օրինակներից էլ զգացվում է, որ այն գիտական ոճին է բնորոշ՝ ներառելով մահ «քերականական ժամանակ» իմաստը:

Արդեն V դարի լեզվական տվյալներով ակնհայտ է ժամանակ բառի բազմիմաստությունը՝ տարի, հասակ, վերջ, տարվա եղանակ...

Ժամանակ, ժամանակի որոշ հատվածներ նշվում են մահ նկարագրական եղանակով՝ մկատի ունենալով տարաբնույթ իրողություններ՝ սլատմական իրադարձություններ, կրոնական տոներ, բնական երևույթներ, նշանավոր անձանց հետ կապված դեպքեր և այլն: «Երեւելի լինէր յաշխարհին Հայոց ի սկզբան տէրութեանն Շապիոյ արքայից արքայի մինչեւ յամն երկրորդ Յագկերտի արքայից արքայի» (Եղիշ.6): «Յատուրս սորա (իմա՝ Երուանդայ) փոխին արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ» (Խոր.165): «Իսկ յետ լնոյ հնգետասան ամաց եպիսկոպոսութեան մեծին Վրթանայ՝ փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ» (Խոր.269): «Իբրեւ հասին ի դոտն արքունի, ի մեծի շաբաթու զատկին յանդիման լինէին թագաւորին» (Եղիշ.43): «Յառաջ քան զբորզն, ասէ, և զբազմաբարբառն լինել ձայնի ազգի մարդկան...» (Խոր.23): «Եւ եկին ի Բեթիեղեմ ի սկզբան հնձոց զարոյ» (Հռութ. Ա.22):

Ժամանականշության այս եղանակը բնորոշ է ոչ միայն հայ մատենագրությանը, հայերի մտածողությանը, այլ թերևս բոլոր ժողովուրդներին՝ հատկապես հնում: Այսօր էլ, երբ գոյություն ունի ժամանակի գիտական՝ օրացուցային հստակ տարբերակում, հաճախ, հատկապես ժողովրդական խոսքում հանդիպում ենք ժամանականշության հիշյալ եղանակին. հմտ. «երկրաշարժի տարին», «ՀՀՀ-ի ցուրտ և մութ օրերին», «Ղարաբաղյան շարժման ժամանակ» և այլն:

Ելքեմն «ժամանակ, ժամկետ» իմաստով՝ գործառում է կէտ բառը. «Ի լնու կիտին եղելոյ պաւոցն կատարելոյ ... զաշխարհաբնակ զօրացն... յալին Եփրատ գետոյն մատուցանէր» (Ագաթ. 433):

Ժամանակային տարբեր բաժանումներ է արտահայտում և պահ բառը: Ըստ Արմ-ի՝ այն ունի «գիշերային պահպանութեան մեկ հերթը, որ է երեք ժամ, ժամանակ, մեկ ժամ իմաստները»: Այդպիսի օրինակներ վկայում է և ՆՀԲ-ն:

Ուշագրավ է Ս. Գրքի հետևյալ հատվածը. «Վասն զի եւ ժամանակն իւրեանց բարբառովն ասի Պահր... Եւ զամիսն ոչ այլափոխեն, եւ ատուրքս այս յիշատակ լինին յազգս ազգս... եւ ատուրքն այն պահոց պատուեսցին...» (Եսթեր. Թ, 26-28): Եբրայերենում պահ-ի համապատասխանակը փուրիմ, փուր է, որն առկա է և ռուսերեն Աստվածաշնչում. «Потому и называли эти дни Пурим, от пур ... чтобы дни эти Пурим не отменялись...»

Ժամ բառը գրաբարում նույնպես բազմիմաստ է: Ըստ ԱԲ-ի՝ 1. մասն ժամանակի, 2. ատեն, 3. մասն թույլի յաստեղաց շարժման և վայրկեան ծննդեան ըստ առասպելաց ախտարաց, 4. բաժանմունք թույլից ըստ տոմարագիտաց՝ արև ցաթելու և մտնելու ատենները, 5. տարւոյն եղանակները, 6. ժամերգութիւն: Նշվածներից 1, 3, 4 իմաստները ժամ-ի գիտական, աստղաբաշխական ըմբռումներն են, և բնական է, որ գրաբարում հաճախական չեն, հանդիպում են որոշ կարգի գիտական ոճի համատեքստերում, հիմնականում բարգմանական գրականության մեջ, կամ վերջիններիս ազդեցությամբ: Ժամ բառի «եկեղեցի, ժամերգություն» իմաստներն ուշ շրջանի կիրառություններ են, և իմաստային այդ անցումները բավարար չափով բացատրված են (տե՛ս Արմ.):

Ժամ հասկացությունը՝ որպես օրվա 1/24 մասը, բնականաբար գրաբարյան շրջանում (և դրանից էլ վաղ) ծանոթ էր հայերին. վաղնջահայերենում՝ նախքան ժամ բառի փոխառելը, այդ հասկացությունը կարող էր արտահայտված լինել այլ բառով, գրաբարում կա և ժամ-ի մասերի՝ թույլ, վայրկեան անվանումները: Նկատելի է, որ ժամ, թույլ, վայրկեան բառերը՝ որպես ժամանակի չափման միավորներ, գրաբարում հաճախական չեն, բավական է նշել, օրինակ, որ թույլ V դարի ինքնուրույն գրականության մեջ չկա: Իսկ վայրկեան բառն էլ օգտագործել է միայն Խորենացին (երկու անգամ) և Բուզանդը՝ վայրիկ ձևով (մեկ անգամ), որտեղ բառիմաստը թույլի 1/60-ը չէ, այլ՝ «կարճ ժամանակամիջոց, պահ»: «Արդ թուլացո՛ւ ինձ ղօղել ուրեք վայրկեան մի ժամանակի» (Խոր. 298): «Անցար ի սուրբ տեղիսն երկրպագել և մնալ՝ վայրկեան ի պաղեստինացոց հրահանգս» (Խոր. 344): «... զի ասէին վայրիկ մի ևս սակաւիկ մի ևս կալցիս յոյժ և ահա հասեալ է օգնականութիւն» (Բուզ. 145):

Այս բառերի նվազ հաճախականությունը պետք է բացահայտել մի կողմից V դարի ինքնուրույն գրականության ժանրային-բովանդակային յուրահատկությամբ, հասկացությունն արտահայտելու անհրաժեշտությունը չլինելու փաստով, մյուս կողմից այդ հասկացությունների նկարագրական (բառային այլ միջոցներով) արտահայտելու հնարավորությամբ:

Վայրկյանն ու թույեն հստակ տարբերակված չեն որպես ժամի 1/3600 և 1/60 մասեր: Դրանք հիմնականում հոմանիշներ են «կարճ ժամանակահատված» ընդհանրական իմաստով: Պատահական չէ, որ գրաբարի բառարանները վայրկեան-ը մեկնում են «Դուզմաքեայ մասն կամ բաժին ժամու. թույէ» (ՆՀԲ): «Վայրիկ կամ պահեկ ժամու, թույէ, ակնթարթ» (ԱԲ): Բերենք բնագրային օրինակներ. «Իսկ նա ի միտմ վայրկեան ժամու դիւրաւ ծախի և չքաւորի» (Ոսկ. Պօղ. II, 303): «Եւ ո՞ր իցէ երազընթաց ժամն յիւրաքանչիւր վաթսուն վայրկենիցն, յորոց լինի վաթսնիցն վաթսուն թույէք» (Վեց. Ջ, 186): «Արդ զայնչափ ժամանակն քանի՞ արդեալք թույէս համարիցիք անցանել ի մասանց թույէից միոյ միոյ վաթսնիցն, զի մի ի վաթսուն մասանցն ունի վաթսնից վաթսուն թույէ, այսինքն 6 ական թօթափել» (Վեց. 185):

Իհարկէ, որոշ օրինակներում զգացվում է վայկյան-թույէ իմաստային տարբերությունը: Հմմտ. «Քանզի ընդ վայկենիսն և ընդ թույէս յաճախեալ բազմաման ի վերայ նոցա փոփոխմունք ժամուցն...» (Վեց. 186-187): Այդ տարբերակումն առկա է հատկապես ժամ և նրա միավորներին վերաբերող թարգմանական գրականության համատեքստում:

Ժամանակի կարճ հատված (ժամից փոքր՝ թույէ, վայրկյան) հասկացությունները գրաբարում արտահայտվում են և հարադրական կազմություններով, որոնցից առավել հաճախական է ական թօթափել-ը. հմմտ. «Կամ քէ արդեալք զի արագ է արարչութիւն նորա, քան զական թաւթափելն ...» (Վեց. Ա. 17): «Ջհարկ քնոյ յոտնաւոր տքնութեան ի թօթափել ական վճարէք» (Կոր. 38): «Ի սէգբանէ, ասեն, արար Աստուած զերկին եւ զերկիր», այսինքն յանկարծակի, յական թաւթափել, ի միտմ ի սակաւ ինչ վայրկենի» (Վեց. 18):

Ական քթթել հարադրությունը նույնպես կարճատև ժամանակամիջոց է նշում. «Ի քթթել ական հրձիգ զամենայն առնէր զփայտակերտսն» (Խոր. 290): «Քանզի որ զամենայն ստեղծ, կարող գոլով ականարկութեամբ ի քթթել ական զամենայն կացուցանել, ոչ այսպէս հաստատէ» (Խոր. 87):

Թարթ - արմատը գրաբարում անկախաբար չի գործածվել, իսկ այդ արմատից կազմված ակնթարթ-ը հաճախական չէ և վկայված է ուշ շրջանից (13-րդ դար):

Գրաբարում կա և ական քարթափել «թարթել, քթել, վայրկեան ժամանակի, լույս» (ՆՀԲ): «Եթե ի քարթափել ական կամիցիս և եթե առ սակաւ ական» (Ոսկ. ՆՀԲ): Գրաբարում հաճախական չէ քարթափումն ական (աչաց) հարադրությունը:

Վստահորեն կարելի է ասել, որ «ժամանակի կարճ հատված» հասկացությունը հայերենում նախապես արտահայտվել է վերը նշված միջոցներով, իսկ վայրկեանն ու լույսն ավելի հետին գործածություններ են. լույսն փոխառություն է հունարենից, իսկ վայրկեան-ի վայր արմատը նախապես գործածվել է «տեղ» նշանակությամբ, հետո միայն՝ «ժամանակ»՝ վայր մի, վայրիկ, վայրկեան ձևերով:

Որոշ քարզմանական հատվածներում լույս-ն քարզմանիչը մեկնում է ական քաթափել. հմմտ. «Ջանգլի այնպես մասունս կոտորեցին զլույսն, այսինքն զքաթափել ական» (Վեց. 2, 184): Ս. Գրքի՝ (Յեսու ԺԳ, 22) հուն. ροπή-ն քարզմանված է վայրկեան, իսկ στείγιլ χρονοί-ը (Ղուկ. Դ, 5)՝ վայրկեան ժամանակի:

XV դարից եզակի վկայություն է թուենիք «վայրկեան, լույսի 1/60-ը» և թուելիդ-ը, որը արաբական փոխառություն է և ՆՀԲ-ում չկա: Համապատասխան օրինակը բերում է Արմ-ը. «լույսն և թուենիքն և թուելիդն, որ փութանակի անցանեն. մին լույսն 30 թուենիք է և մին թուենիքն 60 թուելիդ է. և սուքա քան զվայրկեան այլ փութով անցանեն և փութիսին»:

Վերը նշել ենք ժամ բառի՝ բառարաններում արձանագրված իմաստները: Թեև գրաբարի բառարանները բառիս առաջին և հիմնական իմաստը համարում են «օրվա 1/24 մասը, սակայն գրաբար մատենագրության մեջ ավելի հաճախական է «ժամանակ» ընդհանրական իմաստը, իսկ որպես աստղաբաշխական հասկացություն այն V դարում հանդիպում է հիմնականում քարզմանական որոշ գործերում, եզակի վկայություններով՝ նաև ինքնուրույն գրականության մեջ:

Ընդհանրապես հունական փոխառություն լինելը կասկածից դուրս է: Ամանակ, ժամ, ժամանակ բառերը համարվում են իրանական փոխառություններ: Եթե միջին իրանական լեզուների *žanān*, *zamanak* ձևերը կարելի է հայերեն ժամանակ-ի ակնհայտ զուգահեռ համարել, ապա, մեր կարծիքով, ժամ-ի և ամանակ-ի իրանական բնույթի հարցը կասկածելի է: Արմատական բառարանում ժամ-ը կապվում է միջինիրա-

նական վերը նշված ձևերի հետ. այս դեպքում պատճառաբանված չէ ամակ ձևային կորուստը: Աճառյանն էլ երևի այս հանգամանքն հաշվի առնելով՝ ժամ բառը հայկական կազմություն է համարում (տե՛ս Արմ. Ժամ բառահոլվածը): Առավել կասկածելի է ամանակ-ի իրանական բնույթը: Ճիշտ է, -ան(ակ) ձևային իրանական լեզուներից փոխառյալ բառեր շատ կան, բայց բուն արմատի խնդիրը անորոշ է: Հ.Աճառյանը որպես զուգահեռ բերում է պրս. amāna ձևը, միաժամանակ նշելով, որ պարսկերենում այդպիսի բառ ավանդված չէ, բայց կա amān «ժամանակ, ժամանակամիջոց»: (Տե՛ս Արմ. Ամանակ բառահոլվածը): Հյ. ամանակ-ի (եթե միջին իրանական ձև է) պրս. զուգահեռը պետք է լիներ amāna, մյուս կողմից, ոմանք պրս. amān-ը համարում են արաբական փոխառություն, որը բացառելի չէ: Ամանակ-ի ստուգաբանությանը կանոնադրաբանաբար այլ բաժնում:

Վայր(իկ)(կեսն) բառի վայր արմատի ծագումը պարզ չէ: Գ.Ջահուկյանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ վ-ով սկսվող բառերը հիմնականում իրանական փոխառություններ են, հավանական է համարում և բառի իրանական ծագումը (Ջահուկյան, 1987, 558): Իրանական փոխառություն համարելու դեպքում էլ առաջանում է նոր հարց. վայր-ի ժամանակային իմաստը անցել է փոխատու լեզվից, թե՞ կատարվել է հայերենում¹⁰:

¹⁰ Ղարաբաղի բարբառում վայր նշանակում է «տեղ, վայր», ինչպես նաև «ժամանակ, պահ»:

Ա. ՕՐ ԵՎ ՕՐՎԱ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐ

Որպես աստղաբաշխական-օրացուցային հասկացություն՝ օրն այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում երկրագունդը մի լրիվ պտույտ է կատարում իր առանքի շուրջ (24 ժամ): Արդեն V դարի մատենագրության մեջ օր բառը բազմիմաստ էր. «գիշեր ու ցերեկ», «ցերեկ», «ժամանակ, տարի»: Ահա օր բառի երկու վկայություն Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայից». «Ընդ տին և ընդ գիշերն համարեցաւ արմի» (59): «Եւ կոչեաց ար զադն, որոյ արեգակն է լուսատրիչ զի արն մասն է իմն եւ չափ մի ժամանակաց յորժամ ի վերայ քան զկէս գնդին առնիցէ արեգակն զգնացս իւր»:

Ե՛վ ինքնուրույն, և՛ քարգմանական գրականության մեջ հաճախական են օր բառի «ժամանակ» և «ցերեկ» իմաստները. բերենք որոշ օրինակներ. «Գնաց Ռուբէն յաւուրս հնձոց ցորենոյ» (Ծննդ. Լ, 14): «Դեռ ատուր շատ կայ, չէ եւս է ժամ խաշանցդ ժողովելոյ» (Ծննդ. ԻԹ, 7): Ռուսերեն Աստվածաշնչում ատուր (օր) բառի համապատասխանակն է время-ն. “Во время жатвы”, “не время собирать скот” (տե՛ս Библия, 1994): Կորյունի գրքում 11 անգամ օգտագործվել է օր բառը, որոնցից 8-ը «ժամանակ» իմաստով է: Նույն պատկերն է Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ, որտեղ 140 անգամ կիրառվել է օր բառը, մեծ մասամբ «ժամանակ» և «ցերեկ» նշանակությամբ: Խորենացու «Պատմության» մեջ մեկ անգամ հանդիպում ենք մեծօր բառին, որը քարգմանվել է «երկար օր»՝ նկատի ունենալով ամառային երկար ցերեկը: «Իսկ զմիւսն յարեւմուտս կոյս նորին տանն, բացագոյն իբր մեծօր հասարակ ատուր միոյ հետեակագնացի առն ճանապարհի» (Խոր., 40):

Նկատելի է, որ քարգմանական գրականության մեջ օր բառի իմաստային որոշ դրսևորումներ քերես հունարենի ազդեցության արդյունք են: Հունարեն *emera*-ն¹¹ ունի «ցերեկ, օր՝ 24 ժամ, ժամանակ, տարիք, կյանք, դար» իմաստները (տե՛ս Дворецкий, 958):

Օր (ար.)-ը հ.-ե. *amor*-ն է. բառաձևը պահել է միայն հունարենը: Գ.Ջահուկյանը այն զետեղում է մահ հայ-ֆիննաուգրական և հայ-սեմական ընդհանրությունների շարքում (Ջահուկյան, 1987, 294, 448):

¹¹ Տպագրական դժվարություններից խուսափելու համար որոշ դեպքերում հունարեն բառերը նշում ենք լատինատառ:

Օր արմատով առօրեան ունի մի «քանի օրվա, հանապազօրյա, անցավոր» իմաստները (տե՛ս ԱԲ, ՆՀԲ): Գրաբարում ոչ հաճախական կիրառություն ունի և մշտօրեայ «մշտական, հանապազօրյա» բառը:

Աստվածաշնչում մի քանի անգամ հանդիպում ենք երկայն օր, երկայնօրեայ ձևերին, որը պետք է քարգմանել «երկար ժամանակ»: «... Եւ երկայնօրեայք լինիցիք յերկրին զոր ժառանգիցեք» (Օր. Ե, 33): «Ձի երկայնօրեայք լինիցիք ի վերայ երկրին զոր երդուաւ Տեր հարցն ձերոց տալ նոցա» (Օր. ԺԱ, 9):

Անկասկած օր-ի նախնական արտասանությունը եղել է ատուր կամ ատր (հմմտ. օրավուր բառը): Կարելի է ենթադրել, որ սկզբնապես ատուր կիրառվել է «ժամանակ, պահ» ընդհանրական, այնուհետև՝ «ցերեկ», ապա նաև «ցերեկ և գիշեր» իմաստով:

Ուշադրության արժանի է Ղաբաբադի բարբառում գործածվող հավուր/հովուր ձևը «պահ, ժամանակ» իմաստով:

Հավանական է, որ վաղնջական շրջանում ժամանակ հասկացությունը արտահայտվել է ատուր բառով:

Ատեան բառի ժամանակի իմաստով գործածության վկայությունը ու շրջանից է: Գ.Ջահուկյանը ենթադրում է, որ «Եթե ճիշտ է ատեան բառի հնդեվրոպական և ոչ իրանական ծագման վարկածը, ապա «ժամանակ» նշանակությունը, այնուամենայնիվ, ուշ շրջանից է, և վաղնջահայերենում ժամանակի ընդհանուր անվանման հարցը բաց է մնում» (Ջահուկյան, 1987, 269):

Գիշեր և ցերեկ ժամանակահատվածները օրվա (24 ժամ) ամենաընդգրկուն ժամանակային տարբերակումներն են: Ցերեկ հասկացությունը հիմնականում արտահայտվում է տիւ բառով, որի հ.-ե. ծագումը կասկած չի հարուցում: Այն ավելի հաճախական է, քան ցերեկ բառը: Այսպես, Կորյունը տիւ գործածել է 4 անգամ, ցերեկ՝ 1: Եզնիկը համապատասխանաբար 6 և 4, Ազաթանգեղոսը՝ 15 և 5, Եղիշեն՝ 4 և 1, Բուզանդը՝ 3 և 0: Ուշադրության արժանի է գործառական մի առանձնահատկություն ևս. տիւ-ը հականիշ է գիշեր-ին, իսկ ցերեկ-ը որպես հականշային եզր գիշեր բառի հետ սովորաբար հանդես չի գալիս, ավելի հաճախական է զցայգ և զցերեկ հակադրությունը (Ազաթանգեղոսի գրքում բոլորը այդպես են):

Տիւ-ը և ցերեկ-ը հոմանիշներ են՝ երկուսն էլ վկայված են V դարից, սակայն պետք է կարծել, որ տիւ-ը գործածության ավելի վաղնջական ակունքներ ունի. նկատի ունենք ցերեկ-ի բաղադրյալ կազմությունը (ց + երեկ) բառացի՝ «մինչև մութն ընկնելը»:

Յերեկվա ժամանակահատվածներից առավոտ հասկացությունը արտահայտվում է հիմնականում առատոտ, այգ, վաղորդայն բառերով:

Համեմատաբանները ընդունում են առաւաւտ-ի աւ արմատի հ.-ե. ծագումը, բայց տարակարծություններ կան այդ արմատի և հ.-ե. նախաձևի հարցում (տե՛ս Աղայան 1974, 26-27, Ջահուկյան 1987, 114, 159): Թեև բառի առաջին վկայությունը վիսլասանական շրջանից է «Ռ^o տայր ինձ գծովս ծխանի և զառաւօտն նաւասարդի», սակայն բառի բաղադրյալ բնույթը ենթադրում է, որ այն այնքան էլ հնագույն ձև չէ: Հնարավոր է, որ այդ հասկացությունն արտահայտվել է հ.-ե. ծագում ունեցող մեկ այլ բառով, որը մեզ չի հասել: Ավելի վաղ գործածություն ունեցել է քերես այգ-ը, մանավանդ երե հավաստի է ֆիննա-ուգրական զուգահեռը: Իսկ ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը «Ֆիննաուգրական լեզուները հնդեվրոպական նախալեզվից և, ինչպես կարծում են, հնդիրանական (արիական) նախալիճակից զգալի թվով բառեր են փոխառել, որոնք հաճախ զուգահեռներ ունեն հայերենում, ընդ որում բավականաչափ մոտ են հայերենի համար վերականգնվող նախաձևերին» (Ջահուկյան 1987, 295):

Վաղորդայն-ը բազմիմաստ է՝ 1. «վաղը», 2. «առավոտ», 3. «վաղ առավոտ»:

V դարի տվյալներով ամենահաճախականը առաւօտ բառն է:

Նկատելի է նաև, որ այգ-ը հաճախ գործածվում է առաւօտ բառի հետ: Այսպես է օրինակ Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ բոլոր հինգ վկայություններում. «Այգն զառաւօտն մերկացաւ» (Ագաթ. 182): «Ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց», «ընդ այգն, ի լուսանալ առաւօտուն յափն ... մատուցանէր» (433):

Աստվածաշնչում առաւօտ գործածվել է 216 անգամ, այգ՝ 24, վաղորդայն՝ 12:

Ռուսերեն Աստվածաշնչի Մտքո-ի դիմաց հայերենը ունի վաղորդայն կամ առաւօտ:

Հմնտ. «Եւ եղև երեկոյ և վաղորդայն օր մի» (Ծննդ. Ա, 5): Ռուս. "Была вечер и был утро": «Եւ կայր ամենայն ժողովուրդն շուրջ Մովսիսի յառաւօտէ մինչև ցերեկոյ» (Ելք. ԺԸ, 13) "и стоял народ перед Моисеем с утра до вечера":

Երբեմն Մտքո-ի համապատասխանակը այգ-ն է. «Իբրև այգ եղև, խորհուրդ արին...» (Մտք. ԻԷ, 1), ռուս. "Когда же настало утро": Այս փաստը մի կողմից հաստատում է հայ. առաւօտ - վաղորդայն - այգ

հոմանիշային շարքի առկայությունը՝ նրբիմաստներով հանդերձ, մյուս կողմից էլ պետք է հաշվի առնել հոմարեն համապատասխանակը:

Հուն. *proi*-ն ունի «վաղ, վաղ առավոտյան» իմաստները:

Ի վաղիս անդր կապակցությունը նույնպես նշանակում է «վաղ առավոտյան»: Հմմտ. «Եւ հարուցեալ Լաբան ի վաղիս անդր համբուրեաց զորդիս իւր» (Ծննդ. ԼԱ, 55): Ռուս. "И встал Лаван рано утром":

Ի վաղիս անդր նշանակում է նաև «հաջորդ օրը»: Եւ եղև ի վաղիս անդր և ասէ երեցն ցկրտսերն» (Ծննդ. ԺԹ, 34): Ռուս. "На другой день старшая сказала младшей":

Ընդ առաւօտն երբեմն թարգմանվում է «առավոտյան», երբեմն էլ՝ «վաղ առավոտյան»:

«Վաղ առավոտ, գիշերվա ավարտ»-ն է ցույց տալիս արշալոյս բառը, որը գրաբար մատենագրության մեջ հանդես է գալիս արշալոյս, արշալուրշ, արշալուշ, աշալուշ, աշալուրշ ձևերով:

Նկատվում է, որ բառը միշտ գործածվում է ընդ մախդիրի հետ. «Եւ յարեան ընդ արշալուրշն մտանել ի բանակն Ասորոց» (Դ. Թագ. Է, 5): «Յառնէ ընդ արշալուրշս» (Առակ. ԼԱ, 15):

«Վաղ առավոտ» իմաստը արտահայտում է արև բառով կազմված բաղադրյալ կազմությամբ կամ հարադրությամբ՝ նկատի ունենալով արևածագը, լույսը բացվելը. «Եւ ընդ առաւօտս միաշաբաթուն զան ի գերեզմանն ընդ արեւագալն» (Մարկ. ԺԶ, 2): «Յամենայն երկրի ընդ արեւածայրս ցօղ անկանի» (Եզն. 191): Միջինհայերենյան շրջանից կա և արեւացայք «արևածագ»:

«Ի վերայ հասեալ յառաջ քան զծագել արեգական...» (Խոր. 44): Նկատենք, որ ՆՀԲ-ն և ԱԲ-ն արեւածագ բառը չեն վկայում:

Ելանել, ծագել արուսեկին նույնպես նշանակում է «լուսանալ, լուսաբաց». «Եւ եհար Դ-ալիթ յելանելոյ արուսեկին մինչև ցերեկոյ» (Ա. Թագ. Է, 17): «Եւ ի ծագել Արուսեկին առնոյր զարդն» (Կդնկ. 183): Հմմտ. նաև «Չասորեստան յելիցն արետու և գոյնս ի մտիցն արետու» (ՆՀԲ):

Արլորականչը լուսաբացի նշան է: Գրաբարում արլոր բառը վաղ շրջանից վկայված չէ, թեև *kel* «կանչել» արմատը համարվում է հնդեվրոպական: Գրաբարը չունի և արլորականչ բառը: Նույն արմատից աքաղաղ-ը վկայված է V դարից, իսկ աքաղաղականչ դարձյալ գրաբարում վկայված չէ: Գրաբարում կա *hawaṣou*՝ հավի խոսելը՝ «լուսաբաց»: «Յերեկորեայ, եթէ ի մեջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտս» (Մարկ. ԺԳ, 35): «Քանզի ըստ անանց և անփոփոխ ծայնարկութեան ... ժամ էր այնուհետեւ հաւուն խոսելոյ» (Փարպ. 91): «Եւ զայս

ամենայն այսպէս խօսեցեալ սրբոյ զօրավարին՝ ի ժամ հաւուն ասելոյ հրաման տային...» (Փարսլ. 71):

Լուսանալ իմաստը գրաբարում արտահայտվում է նաև մերկանալ առաւօտու բառակապակցությամբ: ՆՀԲ-ն բերում է երեք օրինակ, որոնցից մեկը Ագաթանգեղոսից:

Մեզ թվում է մերկանալ առաւօտու կառույցը հունարենի ազդեցութիւն է, վաղ հունաբանություն:

Կէսօր գրաբարի բառարանները չեն ավանդում: ՆՀԲ-ն ունի կէսօրեայ և կիսաւորց, բայց վկայված եզակի օրինակների «կէսօր, օրվա կեսը» իմաստը հստակ չէ: Այդ իմաստը արտահայտվում է հասարակ «կես» և ատուր բառերի հարադրությամբ կամ միջօրէ բառով: «Տար զարսդ ի տուն եւ զեն զենլիս եւ սլատրաստեա. զի ընդ իս ուտելոց են արքդ այդոքիկ հաց ի միջօրէի» (Ծննդ. ԽԳ, 16):

Հասարակ ատուր և միջօրէ-ն հոմանիշներ են և «կէսօր» իմաստով կիրառություններում գործառական որևէ էական տարբերություն չեն դրսևորում: Հմմտ. «Եւ կարդացին զանուն Բահադու յայգուէ մինչեւ ցհասարակ օր ... եւ եղեւ ի միջօրէին եւ այսլանեաց զնոսա Եղիա...» (Ղ. քազ. ԺԸ, 26-27):

Հասարակ բառը Արմ-ում ստուգաբանված չէ, սակայն նրա իրանական ծագումը կասկած չի հարուցում (տե՛ս Ջահուկյան, 1987, 530, Հովհաննիսյան, 1990, 247): Մէջ-ը բնիկ հայերեն է: Ծագումնաբանական առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կարելի է ենթադրել, որ հայերենում միջօրէ-ն ավելի վաղ է գործածվել, քան հասարակ օր-ը: Վերջինս կարող էր նաև գործածական եղած չլինել ժողովրդախոսակցական լեզվում: Միջօրէ-ի գործառական ավելի հին ակունքներ ունենալը կարելի է հիմնավորել մի այլ փաստարկով:

Աստվածաշնչի «Եթէ ի քումնէ՞ իմաստութենէ եկաց բազէ տարածեալ զքես, անշարժ դիտէ ընդ հարաւ» (Յոր. ԼԹ, 26) նախադասության ընդգծված բառը ռուսերեն թարգմանված է полдень. "Твоею ли мудростью летает ястреб и направляет крылья свои на полдень": Այստեղ ռուսերենի полдень-ը «կէսօր» իմաստով չէ, այլ «հարավ»: Նկատված է, որ հ.-են. մի շարք լեզուներում հարավ և կէսօր հոմանիշներ են, ավելի ճիշտ կէսօր-ը բազմիմաստ է և ունի «երկրի հարավային կողմը, հարավ» իմաստը: Այսպիսի ակնառու օրինակ է իրան. nemroz-ը /nem «կես» - roz «օր», որը նշանակում է նաև հարավ:

Գրաբարում կէսօր-ը «հարավ» իմաստով չի գործածվում (համեմայնդեալս այդպիսի գործածություն վկայված չէ): Իսկ միջօրէ-ն այդ

իմաստն ունի, որը և արձանագրված է գրաքարի բառարաններում: Այսինքն՝ բառն իր երկու իմաստներով հարազատ է հնդեվրոպական մտածողությանը: Կարելի է կարծել, որ հարաւ-ն էլ հայերենում ունեցել է նաև «կեսօր» իմաստը, մանավանդ որ հիմնավորված է հարաւ-ի հ.-ե. ծագումը (տե՛ս Ջահուկյան, 1987, 143, 186):

Որոշ վերապահությամբ «կեսօր» իմաստը կարելի է տեսնել ճաշ-աժամ բառում և ժամ ճաշոյ բառակապակցության մեջ:

ՆՀԲ-ն ճաշաժամ մեկնում է «ժամ ճաշոյ կամ ճաշելոյ, հասարակ օր»: Վկայված օրինակները չեն բացահայտում ճաշելու կոնկրետ ժամանակահատվածը, և հիմքեր չունենք ենթադրելու, որ այն կեսօրին է եղել: Հստակ է մի բան. այն օրվա երկրորդ կեսն է:

Աստվածաշնչի «Եւ ասէ զնա Բոռս, ահա ժամ ճաշոյ է» (Հռութ. Բ, 14). ռուս. "во время обеда" ժամանակային կոնկրետ հատված չի նշում, իսկ «Եւ ետ տէր մահ յԻսրայէլ յառաւօտէ մինչեւ ցճաշաժամ» (Բ. քազ. ԻԴ, 15) նախադասության մեջ արդեն ժամանակային հակադրությունը առկա է¹²:

Երեկո, երեկոյան ժամանակահատվածն արտահայտվում է հիմնականում երեկ և երեկոյ բառերով (հ.-ե. reg-os), նաև երեկոքեայ, երեկորին, երեկուն ձևերով. «Եւ եղև երեկոյ եւ եղև վաղորդայն օր մի» (Ծննդ. Ա, 5): «Եւ նստոյց զուղտսն արտաքոյ քաղաքին առ ջրհորոյ ջրոցն ընդ երեկս» (Ծննդ. ԻԴ, 11): «Եւ կայր ամենայն ժողովուրդն շուրջ զՄովսիսիս, յառաւօտէ մինչեւ ցերեկոյ» (Ելք. ԺԸ, 13): «Ձի երեկոյն սահման է հասարակացն զիշերոյն ու տուրմջեան, եւ առաւաւտն ըստ նմին արինակի դրացի է զիշերոյն և տուրմջեան» (Վեցօր. 58): «Յառաջնում ամսեանն ի տասն և ի չորս ամսոյն ի մէջ երեկոքեայցն զատիկ Տեառն» (Դեւտ. ԻԳ, 5):

Ինչպես առավոտ, լուսաբաց-ն է կապված արևը ծագելու հետ, այնպես էլ արևամուտը ենթադրում է երեկոն: «Եւ ընդ արեւուն մտանել. ամենքին, որոց էին հիւանդք ի պէս պէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա» (Դուկ. Դ, 41): «Եւ իբրեւ արեւն ի մոտս եղև» (Ա. Մկր, 27): «Ձենցես զգատիկն առ երեկս ընդ արեւմուտս» (ՆՀԲ):

¹² Ս.Գրքում ծանոթագրվում է, որ եբրայական բնագիրը ցճաշաժամի դիմաց ունի ի սահմանակալ ժամանակի: Ռուսերեն թարգմանությունը ավելի ճշգրիտ է. "От утра до назначенного времени".

«Երեկոյանալ, մթներ» իմաստն է արտահայտում և նսեմանալ ատորն, նաև դառնալ ատոր բառակցութիւնը. «Յատորն ուրաքո ի դառնալ ատորն» (ՆՀԲ):

Գիշեր բառը բալական հաճախական է գրաբարում, որին հականիշ է ցայգը: «Եւ եհաս ի վերայ նոցա Յեսու յանկարծակի զցայգն ամենայն եկեալ ի Գաղգաղայ» (Յեսու. Ժ, 9). (ռուս. всю ночь):

Գիշերայն, գիշերախառն բառերն ունեն «գիշերը, գիշերվա ժամերին» իմաստները. «Եւ կոշեաց Փարատն զՄովսէս ... գիշերայն» (Ելք. ԺԲ, 31): «Գիշերախառն հասանէր ի վերայ յամենացոցն» (Բ. Մակր. ԺԲ, 9):

Կեսգիշեր հասկացութիւնն արտահայտվում է գիասարակ գիշերաւ, հասարակ գիշերի բառակապակցութեամբ. «Ձիսսարակ գիշերաւ ես մտից ի մէջ Եգիպտոսի» (Ելք. ԺԱ, 4): «Եւ եղել ի հասարակ գիշերի եւ տէր եհար...» (Ելք. ԺԲ, 29):

Ոչ հաճախական է միջագիշեր «կեսգիշեր»-ը. «Ձորս ի միջի անդ յիշէ, զմիջագիշերն և զհաւախօսն» (ՆՀԲ): Ավելի հաճախական է մէջ գիշերոյ կապակցութիւնը: «Եւ ննջեաց Սամփոսն մինչեւ ցմէջ գիշերոյն և յարեաւ զմէջ գիշերան» (Դատ. ԺԶ, 3): «Ո՛վ է ի ձենջ որոյ իցէ բարեկամ, եւ երթայցէ առ նա ի մէջ գիշերի» (Դուկ. ԺԱ, 5):

Երեկ բառը, ինչպէս մի շարք լեզուներում, այնպէս էլ գրաբարում նշանակում է «երեկո», նաև «անցած օրը, երեկ»: Վերջինս իմաստով հաճախական է երեկ գրութիւնը: Ահա ննջեցի ես երեկ ընդ հօր իմում» (Ծննդ. ԺԹ, 34):

Եռանդ նշանակում է «նախանգյալ օրը». «Ձի ոչ էք երթալոց զճանապարհ երեկին և եռանդի» (Յեսու. Գ, 4): Վաղ արմատով կազմված վաղիւ-ը նշանակում է «վաղը, հաջորդ օրը». «Ահաւասիկ հանեն դես եւ բժշկութիւնս կատարեն այսօր եւ վաղիւ...» (Դուկ. ԺԳ, 32): «Իսկ եթէ զխոտն ի վայրի, որ այսօր է և վաղիւ ի հնոց արկանի (Մտք. Զ, 30):

Որոշ լեզուներում առավոտ և վաղը հասկացութիւններն արտահայտվում են նույն արմատով: Հմմտ. գերմ. Morgen «առավոտ և վաղը», ռուս. завтра «վաղը», за-утро «առավոտ» (տե՛ս Արմ. Այգ բառահոդվածը): Իմաստային այդ անցումը սպասելի է և այգ բառի դեպքում՝ նկատի ունենալով ժողովրդախոսակցական լեզվում գործածական էգոյց ձևը:

Արմ-ը բերում է միայն վկայություն Սուկրատի «Եկեղեցական Պատմությունից», որը քարգմանվել է 696 թ. «Ես և այսօր և այգուց նոյնս եմ» (տե՛ս Արմ. Այգ բառահոդվածը):

Մեզ հանդիպել է այգուց «վաղը» գործածություն V դարից. «Որ այսօր սպառնայ և այգուցն վախճանի, որ այսօր ի հարստութեան և այգուցն ի թաղման, որ այսօր ի ծիրանիս և այգուցն ելեալ ի կենաց, որ այսօր ի զանձս և այգուցն ի շիրիմի» (Ոսկ. Պօղ. II, 673): «Որ այսօր բարեկամաբար ողջունեն զմեզ, այգուցն ... յուղարկին ի մենջ, որ այսօր ի կենցաղումս, այգուցն ի գերեզմանի» (մ.տ., 771):

Եթե իրոք Ոսկեբերանի գրքի հիշյալ այգուց-ը հետին գրչագրական միջամտություն չէ, ապա այն գործածական է եղել ավելի վաղ շրջանից:

Երբեմն այգուն, այգուց բառաձևերում դժվար է հստակորեն տարբերել «վաղ», թե «մյուս օրը» իմաստը: Այդ նկատելի է հատկապես Աստվածաշնչում, և այս դեպքում պետք է հաշվի առնել այլ լեզուներով կատարված քարգմանությունները: Օրինակ. «Զայգոյ զատկին ելին որդիքն Իսրայելի բարձրացեալ ձեռամբ առաջի ամենայն Եգիպտացոցն» (Թխր. ԼԳ, 3): Ռուսերեն՝ «на другой день пасхи...»:

Օր և օրվա ժամանակահատվածների անվանումները, հ.-ե. մի շարք լեզուներում առկա ծագումնաբանական, իմաստային զուգահեռները վկայում են, որ այդ բառերը հիմնականում գործածության բավական հին ակունքներ են ունեցել:

Բացի օրվա մասերի վերը նշված տարբերակումներից՝ գոյություն է ունեցել մոտ օրվա բաժանում ըստ ժամերի՝ համապատասխան անվանումներով (տե՛ս Բաղայլան, 1970, Աղայան, 1986):

Յերեկվա ժամանումները

- | | |
|-------------------------|-------------------------------|
| 1. Այգ | 7. Շանթակող (Շանթակալ) |
| 2. Յայգ | 8. Հրակաթ |
| 3. Զայրացեալ (գօրացեալ) | 9. Հուր Փայլեալ. Հուր թափեալ |
| 4. Ճառագայթեալ | 10. Թաղանթեալ.
Թաղարթափեալ |
| 5. Շառալիղեալ. Շառաւեղ | 11. Արագոտ (առաւար, տարափ) |
| 6. Երկրատես | 12. Արփող (Տարափող) |

Գիշերվա ժամանումները

- | | |
|--------------------------|-------------------------------------|
| 1. Խաւարակ (գիշերակ) | 7. Խաւթափեալ (խաւթափեալ) |
| 2. Աղջամուղջ (աղջամղջակ) | 8. Գիգակ (գիջակ, դագակ) |
| 3. Մթացեալ (բաւանդակ) | 9. Լուսակն կամ Լուսագայն (լուսաճեմ) |
| 4. Շաղաւտ (խուժակ) | 10. Առատտ (փողահար) |
| 5. Կամաւօտ (համառօտ) | 11. Լուսափայլ (հետագօտ) |
| 6. Բաւական (կատաղատես) | 12. Փայլածու (կաքաւող) |

V դարի մատենագրության մեջ այս անվանումներն ավանդված չեն: Է. Աղայանի կարծիքով դրանք VI-VII դդ. հորինվածքներ են (Աղայան, 1986, 82):

Մեր կարծիքով հիշյալ անվանումները տոմարագիտական աշխատանքներում հանդիպող բառեր են, որոնք առօրյա լեզվում չեն կիրառվել: Դրանք տեղ չեն գտել նաև գրաբարի բառարաններում:

Գրաբարում շաբաթ բառն ունի «շաբաթվա 7-րդ օրը» և «յոթնօրյակ» իմաստները: Բառը սեմական փոխառություն է, որի նախնական նշանակությունը «հանգիստ»-ն է: «Հանգիստ» և «7-րդ օր» իմաստները փոխկապակցված են, որն ակնառու է հատկապես Ս. Գրքում:

Ըստ մի վարկածի՝ յոթնօրյա շաբաթը կապված է Լուսնի փուլերի հետ: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ յոթ լուսատուների հետ (Արեգակ, Լուսին, Մարս, Յուպիտեր, Սատուրն, Վեներա, Մերկուրի) (Բաղայան, 1970, էջ 26): Բերենք օրինակներ շաբաթ բառի նշված իմաստներով: «Շաբաթ հանգիստ Սուրբ Տեառն վաղիս, որ ինչ եփելոց էք՝ եփեցէք...» (Ելք. ԺԶ, 23): «Եղիցի ամիս յամսոյ և շաբաթ ի շաբաթէ (Եսայ, ԿԶ, 23):

«Շաբաթվա 7-օրը» հասկացությունը շատ հաճախ արտահայտվում է օր (աուր) և շաբաթ հարադրությամբ: Հմմտ. «Մի բառնայք բեռինս յաուր շաբաթոց» (Երեմ. ԺԷ, 21): Գնէին յաուր շաբաթու հրեայքն... (Նեեմ. ԺԳ, 16):

Ուրբաթ-ը նույնպես սեմական ծագում ունի, իսկ կիրակի-ն՝ հունարենից կատարված փոխառություն է՝ «շաբաթվա առաջին օրը»:

Երկուշաբթի [երկշաբաթ, երկշաբաթի], երեքշաբթի [երեքշաբաթի], չորեքշաբթի [չորեքշաբաթ, չորեքշաբաթի], հինգշաբթի [հինգշաբաթ, հինգշաբաթի] բառերը վաղ գրաբարում հաճախական չեն եղել: Նշվածները չկան, օրինակ Աստվածաշնչում (գոնե ըստ համաբարբառի տվյալների): Միաշաբթի. ուրբաթ, շաբաթ, կիրակի (կիրակէ) բառերի հաճախականությունը պայմանավորված է դրանց՝ կրոնական տոների, զանազան արարողությունների օրեր լինելու հանգամանքով, որոնք, բնականաբար, ավելի հաճախ են հիշատակվում ինչպես քարգմանական, այնպես էլ ինքնուրույն գրականության մեջ:

Չորեքշաբթի կա սաղմոսներից մեկում՝ «Սաղմոս Դաւթի. չորեքշաբթու» (ՂԳ, 1):

Հինգշաբթի-ն կա Փարպեցու գործում «Էի ես ի մեծի հինգշաբաթոջն ի գատկի աղուհացիցն ի հսկման» (Փարպ. 28):

Կիրակի և միաշաբթի հոմանիշներ են: «Եւ յերեկոյի շաբաթուն, յորում լուսանայր միաշաբաթին, եկան Մարիամ...» (Մտք. ԻԸ, 1): «Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ բազումք ի դարբնաց, զհետ երթալով առասպելին՝ յաուր միաշաբաթոջ երիցս կամ չորիցս բախեն զսալն»

(Խոր. 192): «Վասն զի վաղին հասելոյ առաւօտուն օրն լուսանայր կիրակէն» (Բուգ. 100):

Իմաստային որևէ նրբերանգ չի զգացվում միաշաբթ(ի) և կիրակէ քառերի միջև: Սուրբ գրքում յոթ անգամ գործածվել է միաշաբթ-ը և միայն մեկ անգամ կիրակէ (Յայտ. Ա, 10):

Այս բոլոր վկայությունները Նոր կտակարանից են և հունարենի ընդօրինակություններ են:

Շաբաթ «յոթ օրը» իմաստն արտահայտվում է մաս եօթներորդ, եօթնօրեայ քառերով. «Յաւուրսն յայնոսիկ ես Դանիէլ էի ի սուգ երիս երփներորդս ատուրց» (Դան. Ժ, 2): «Եւ տօն երփներորդաց արասցես ինձ ի սկզբան հնձոց ցորենոյ» (Ելք. ԼԴ, 22). ռուս. праздник седмиц: «Եւ համարեսցիք ձեզ ի վաղուէ շաբաթուն, յօրէ յօրմէ մատուցանիցէք զորայ ուխտին, եւթն երփներորդս բովանդակս բուխցես» (Դեւտ. ԻԳ, 15): Ռուս. Семь полных недель:

Այս իմաստով հազվադեպ գործածվում է եօթնեակ բառը. հմմտ. «Չկնի երիս եօթնեկաց» (ՆՀԲ):

Շաբաթ բառով կազմությունները մեծաքիվ չեն: ՆՀԲ-ն ունի հետևյալ բառերը. շաբաթամուտ, շաբաթանալ, շաբաթապահ, շաբաթապահու, շաբաթապահութիւն, շաբաթաւոր, շաբաթեան, շաբաթունն, շաբաթօրեայ: ԱԲ-ն և Արմ-ը նշում են շաբաթակրօն բառը:

Ամիս «երեսուն օր» հասկացությունը կապված է Լուսնի տեղաշարժի պարբերականության հետ: (Լուսնի եղջյուրի երևալու օրվա պարբերականությունը մոտ 30 օր է, որը կոչվում է ամիս): Պատահական չէ, որ շատ լեզուներում ամիս և լուսին բառերը նույն արմատից են ծագում. հ.-ե. *mens > mes, ռուս. месяц «ամիս, լուսին», պրս. mäh «ամիս, լուսին» (վերջինից հայերենում՝ մահիկ «լուսին» և այլն):

Չարմանալիորեն հայ. ամիս-ը «լուսին» հասկացությունը չի արտահայտում. գոնե V դարից տվյալ չունենք: Կարելի է ենթադրել, որ վաղնջահայերենում այդպիսի բազմիմաստություն եղել է, մանավանդ որ հայերենի հետ հ.-ե. բառաձևային և իմաստային ակնհայտ ընդհանրություններ ունեցող իրանական լեզուներում և հունարենում կա:

Ինչ վերաբերում է լուսին բառին, ապա գրաբարի բառարանները նշում են 1. Լուսին (լուսնկա): 2. Ամիս: Լուսին «ամիս» իմաստով ՆՀԲ-ն և Արմ-ը բերում են մեկ օրինակ Ղևոնդ Պատմիչից. «Եւ էր նոցա ատուրք ուրախութեան իբրեւ լուսին մի»: Խորենացու «Պատմութեան» մեջ էլ կա երկլուսնեայ ատուրս կապակցությունը, երկլուսնեայ ունի «երկամսյա, երկու լուսնային ամսվա» իմաստը: «... Դադարէ առ գետովն երկլուսնեայ ատուրս...» (Խոր. 26): ՆՀԲ-ն լուսնական բառը մեկնում է «ամսական»:

Այս կարգի եզակի վկայությունները դեռևս բավարար հիմք չեն տալիս պնդելու, V դարում լուսին «ամիս» բառի լայն գործածությունը:

Ամսօրեայ բառը նույնպես նշանակում է «ամիս, երեսնօրյա ժամանակ». «...Ոչ յիշեմք, եթէ ի կապելոց որ ամսաւրեայ ժամանակ կեցեալ է ի տանդ յայդմիկ» (Եղիշ. 145): «Եւ եղև իբրեւ եհաս նոցա յամել ամսօրեայ մի ժամանակս, որ տկարագոյնք էին ի նոսա՝ սկսան նքողել ծարաւել...» (Բուզ. 78): «Եւ էր ընդ նմա ամսօրեայ մի ժամանակ» (Ծննդ. ԻԹ, 14): Ռուս. целый месяц:

Ամիս և ամսօրեայ բառերը հոմանիշներ են. «երեսնօրյակ, ամիս» հասկացությունն արտահայտելու առումով, ամիս-ը նաև ունի «տարվա 12 ամիսներից յուրաքանչյուրը» իմաստը: Հմմտ. «Յամսեան մաւսսարդի, որ օր երեսուն էր...» (Փարպ. 30): «...գողջոյն ամիսն քաղոց պահօր -և աղօթիք առնել խնդրուածս առ Աստուած» (Եղիշ. 81):

Ամսվա սկիզբ հասկացությունը արտահայտվում է ամսագլուխ և ամսամուտ բառերով: «Եւ յաւուրս ուրախութեան ձերոյ եւ յամսագլուխս

ձեր հարկանիցեք փող ...» (Թիւր. Ժ, 10): «Եւ յամսամուտս մատուցիք ողջակէզս Տեառն...» (Թիւր. ԻԸ, 11):

Սուրբ Գրքի տվյալներով ավելի հաճախական է ամսամուտը՝ 24 կիրառություն, իսկ ամսագլուխ վկայված է 5 անգամ: Երկու բառ էլ հուն. *νοσηριον*-ի քարգմանությունն է:

*
* *
*

Բառակազմական և իմաստային-ստուգաբանական ուշագրավ իրողություններ են ի հայտ գալիս հայկական հին ամսանունների համակարգում: Հայկական ամսանուններն են՝ Նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհական, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից, Աւելեաց:

Սրանցից աւելացը 13-րդ յրացուցիչ ամիսն է, որը ներառում է տարեվերջի հավելված 5 կամ 6 օրը:

Հիշյալ ամսանունների ստուգաբանության շուրջ տարաբնույթ կարծիքներ կան: Այդ հարցերին այստեղ չենք անդրադառնա: Հարցի պատմությունը և ստուգաբանական տարբեր դիտարկումներն ամփոփված են Է. Աղայանի գրքում (Աղայան, 1986):

Հին հայկական ամսանունների համապատասխանությունը մեզանում գործածական եվրոպական ամսանունների հետ խիստ պայմանական է, որովհետև տոմարը շարժական էր. և երկար ժամանակահատվածի ընթացքում փոխվում էին այս կամ այն ամսանվան ժամանակային սահմանները: (Ասենք, Նավասարդը կարող էր լինել մարտը կամ օգոստոսը): Ավելորդ չենք համարում հղել Է. Աղայանին.

1. Հայերի գարնանային գիշերհավասարի կայուն օրն է եղել մարտի 20-ը, որ և սկզբնապես հայկական օրացույցի տարեմուտը՝ Նավասարդի 1-ն է եղել:
2. Ժամանակի ընթացքում, յուրաքանչյուր քառամյակում գոյացող մեկօրյա տարբերությամբ մեր շարժական և արևադարձային տարիների միջև հայոց Նավասարդի 1-ն անընդհատորեն առաջ է շարժվել, և միայն 1004 թվականին՝ 1460 տարվա շրջանը (Հայկյան շրջանը) լրանալուց հետո կրկին Նավասարդի 1-ը համընկել է մարտի 20-ին [Աղայան, 1986, 47]:

Իսկ Բ. Թումանյանը նկատում է, որ «Հայկական օրացույցը եղել է շարժական, այսինքն՝ ամիսները քափառել են տարբեր եղանակներում, և

այժմ հայտնի չէ, թե անվանակոչման ժամանակ ամիսները տարվա մեջ ինչպիսի՞ դիրք են գրավել...» (տե՛ս Աղայան, 71):

Անդրադառնանք ամսանունների ծագումնաբանության խնդրին:

Հռոի, Սահմի ամսանունների կովկասյան ծագումն ընդունում է Հ. Աճառյանը, Հռոի՝ «երկրորդ», Սահմի՝ «երրորդ»: Սակայն իրավացիորեն այս տեսակետը մերժվում է, մանավանդ որ նշվածները վրացերենում քանակական թվականներ են. և վրացիներն այդպիսի ամսանուններ չեն գործածել: Եթե ամսանունների՝ հիմքում ընկած լիներ թվականը, ապա հայերենը կօգտագործեր երկու, երեք թվականները:

Սահմի, հռոի-ի համար առաջարկվում են նոր ստուգաբանություններ (տե՛ս Աղայան, 1986, 58-61): Այժմ այդ բառերի կովկասյան ծագման փաստարկները անպայմանորեն մերժելի են համարվում, իսկ դրանց բուն հայկական կամ այլ օտար բնույթը նոր փաստարկումների կարիք ունի:

Ուսումնասիրողներն իրանական են համարում նաւասարդ, տրէ, մեհական, ահեկան, մարերի, մարգաց և հրոտից ամսանունները:

Ընդունում ենք Է. Աղայանի տրէ ամսանվան ստուգաբանությունը՝ Տիր աստծու անունից, որով այն դուրս է գալիս հայերենի իրանական ծագում ունեցող ամսանունների շարքից: Մնացածների մասին ասենք հետևյալը. նաւասարդ-ը իրոք իրանական լեզուներից անցած բառ է. nava «նոր» և sarda «տարի» բառացի՝ նոր տարի: Իրան. sard բաղադրիչը պահպանվել է երիտասարդ և աւսարդ «ծեր» բառերում: Ակնհայտորեն նաւասարդ բառաձևը հին պարսկերենից է, քանի որ sard միջին իրանական լեզուներում ներկայանում է sāl ձևով:

Է. Աղայանն իրավացիորեն նկատում է, որ «մեր առաջին ամսվա անվանումը նախապես ամսանուն չի եղել, այլ պարզապես «նոր տարի, ամանոր» նշանակությամբ բառ, որ ժամանակի ընթացքում բռնել է ամսանվան տեղը և դուրս մղել նրան» (Աղայան, 1986, 58): Մեր կողմից կայրող ենք ավելացնել, որ նաւասարդ-ը նախապես մահ տոներից մեկի անվանում էր, որը հաճախ է հանդիպում հայ մատենագրության մեջ: Անժխտելի է, որ հայկական օրացույցում առաջին ամիսը նախապես այլ անվանում է ունեցել, թերևս բուն հայկական:

Հրոտից, Մարգաց-ի իրանական բնույթը ավելի քան կասկածելի ենք համարում՝ հակադրվելով ընդունված տեսակետներին: Նախ՝ իրան. fravartikan-ի (i)kan ձևույթի կորուստը պատճառաբանված չէ, երկրորդ՝ հայ. հուր բառի հետ կապը միանշանակ մերժելն էլ տրամաբանական չէ:

Ինչ վերաբերում է Մարգագ-ին, ապա կամ մարգ «մարգագետին» կամ էլ մարգ «թռչուն» բառից է: Մարգը, իհարկե, իրանական ծագում ունեցող բառ է, որը վաղուց գիտակցվել է հայերեն և նրանով էլ կազմվել մարգագ ամսանունը: Հենց միայն -աց հայերեն ձևությամբ խոսում է բառի հայա-կազմություն լինելու մասին (մանրամասն տե՛ս Հովհաննիսյան, 1990, 95-98):

Մեհական, ահեկան և մարերի - իրանական բնույթը բառաձևի տեսակետից հնարավոր է, թեկուզ որոշ առարկություններ էլ կան: Եթե իրոք *mihrakan* ձևից է մեհեկան-ը (Միհր-աստուծո անունից), ապա ավելի շատ ենթադրելի էր *միհրական ձև: Մարերի – միջ. պրս. գուգահեռը հնարավոր է, սակայն իր. ձևն ուներ այլ իմաստ (տե՛ս Արմ), իսկ հայերենում այն ամսանուն է, բացառված չէ և այլ՝ ոչ իրանական արմատի գոյությունը:

Է. Աղայանը, համադրելով հայկական և իրանական ամսանունները, գրում է, որ «այդ համապատասխանությունները կարող են լինել մ.թ.ա. VII դարի կեսերից ոչ ուշ, ապա հասկանալի է, որ ամիսների հայկական անվանակոչությունն էլ տեղի է ունեցել ոչ ուշ, քան մ.թ.ա. VII դարի կեսերը: Սա, իհարկե, ժամանակային վերջին սահմանն է, և չի բացառվում, որ դա ավելի վաղ տեղի ունեցած լինի» (Աղայան, 1986, 76):

Այս եզրահանգումն առարկելի է: Հայերենի իրանական փոխառությունների բոտն շրջանը համարվում է մ.թ.ա. II - մ.թ. III դարերը (պարթևական շրջան): Ավելի վաղ հին իրանական լեզուներից կատարված փոխառությունների մի քանի դեպքեր են նշվում միայն (այդ թվում է նախաարդը):

Մ.թ.ա. VII և ավելի վաղ շրջանում հայերենի օրացույցը չէր կարող իրանական այդքան մեծ ազդեցություն ունենար և արտահայտվեր փոխառությունների ձևով:

Ավելորդ չէ հիշել, որ որոշ ուսումնասիրողների կարծիքով հին իրանական օրացույցն իր հերթին մեծապես կրում է բաբելոնյան օրացույցի ազդեցությունը, նաև անվանումներով: (Фрейман, 1946):

Հայկական ամսանուններն ունեն օրինաչափություն: «Ամսանունների նույնիսկ մակերեսային դիտարկումը հնարավորություն է տալիս դրանք բաժանել երկու խմբի՝ սեռական հորվածձևով անուններ և -ական ածանցով կերտված անուններ» (Աղայան, 1986, 58):

Է. Աղայանը տրե՛ն էլ իրավացիորեն համարում է սեռականաձև, իսկ Է. Բենվենիստն էլ դարձյալ ուշագրավ դիտարկումներով գտնում է, որ

Արեգ – հ.-ե. *rev (որից՝ արել, արեգ) նախապես ունեցել է արեգի սեռականը:

Մեր կարծիքով սեռականաձև ամսանունների համակարգը հայերեն տոմարի առանձնահատկությունն է: -Ական ձևերը բացառություն չեն: Դրանք ևս սեռականի յուրատեսակ առանձնահատկությունն են. հմմտ. «կացեալ յարքունական դիւանին (Կոր. 36): «Ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս սինէական լերինն» (Կոր. 52): «Ի մայրենի և ի քեռական առականաց արեգակն և լուսին արարան» (Եզն. 141):

Մի խոսքով, -ական-ով ամսանունները գիտակցվել են որպես սեռականաձև կազմություններ: Ամսանունների շարքում այս տեսակետից բացառություն է կազմում մասսադո-ը, որը, ինչպես վերը նշվեց, գոնե նախապես որպես բուն ամսանուն չի գիտակցվել:

Հայկական ամսանունների ամբողջական համակարգը (բոլոր ամսանունները) V դարի ոչ թարգմանական որևէ գործում ավանդված չէ, իսկ որոշ թարգմանական գործերում այն ավելի ամբողջական է: Այդպես է օրինակ Լաբուրնայի «Թուղք Աբգարու» գործում՝ «ԺԲ էր Տրեայ ամսոյ» (1): «Օր չորեքտասան էր արեգ ամսոյ» (4): «Օր երկուտասան էր ահկի ամսոյ» (4): «Օր չորեքտասան էր մարերի ամսոյ» (45) և այլն:

Իհարկե, V դարի ինքնուրույն գրականության մեջ ամսանունների ամբողջական համակարգի բացակայությունն առաջին հերթին պայմանավորված է այդ մատենագրության բովանդակային կողմով: Բայց կարելի է, քեկուզ ոչ այնքան վստահ, կարծել, որ բոլոր ամսանուններն այնքան էլ տարածված կիրառություն չեն ունեցել կամ դրանց հստակ համապատասխանությունը հրեական, հունական նաև լատինական ամսանուններին չի գիտակցվել: Ավելացնենք նաև, որ Ս. Գրքում թարգմանիչներն ընդամենը երեք ամսանուն են արձանագրել. Արեգ (Եսթ. Բ, 16, Ը, 9): Ահեկան (Բ.Մկր. ԺԱ, 30): Արաց (Ջաք. Ա, 7): Նկատենք, որ Ս. Գրքի համաբարբառը վկայում է միայն Արեգ բառը:

Բացի հայկական օրացույցի ամսանուններից՝ V դարի հայ մատենագրության մեջ (հատկապես թարգմանական) գործառնում են օտար ամսանուններ: Դրանք օտար հասկացություններ են, և երբեմն թարգմանիչը կամ հեղինակը զուգահեռ նշում է հայկական ամսանունը: «Եւ կոչեցին զդիսիլիսն յառաջնում յամսեան Նիսան, որ է Արեգ» (Եսթ. Ը, 9): «...յառաջնում ատուր ամսոյն Ադարայ, որ է հայերէն Արեգ» (Եսթ. ԺԱ, 2)¹³:

¹³ Եբրայական, հունական ամսանունները V դարում, անշուշտ, հայերի առօրյա խոսքում չեն գործածվել: Թեպետ նիսան-ը գործածվում է և որոշ բարբառներում՝

Օտար իրականություն ներկայացնելիս օտար ամսանվան գործածությունը բնորոշ է նաև հետհինգերորդադարյան մատենագրությանը: Դրա լավագույն օրինակն է Կաղանկատվացու «Պատմությունը»: Այս երկում դեպքերի ժամանակային նկարագրությունները հայկական ամսանուններով են, բայց երբ խոսքը վերաբերում է մահմեդականությանը, կիրառվում են արաբական ամսանունները. «...Եւ անտի ել յայն շահաստան, որ այժմ կոչի իւր անուն Մահմետայ յամսեանն սափար» (290): «Յամսեանն շահր ռաբբի... (ն.տ.), թափեաց ... ի ռամազան ամսոյ ... » (ն.տ.):

Գրքի մեկ այլ հատվածում բերում է հրեական ամսանուններ. «Մովսէս տօնս կարգեաց իսրայէլացոցն յօթներորդում ամսեան, որ է քշրին առաջին օրն...» (314): «Թէ այս վեցերորդ ամիս է նորա, եբրայեցոցն ճիսանի ի տասն եւ եօթանն աւետիք կուսին» (315):

Ընդունված է այն կարծիքը, ըստ որի. հռոմեական (լատինական) ամսանունները հայ գրականության մեջ գործածվել են IX-X դարերից՝ առաջին Յայսմատուրքների կազմմանը զուգընթաց: ՆՀԲ-ի հղումներն էլ հիմնականում Յասմատուրքից ու Տօնականներից են: Թեկուզ որոշ ամսանուններ կան Եւսեբիոսի «Քրոնիկոնում», սակայն այդ էլ ամսանունների լատիներեն թվարկումն է, և ոչ թե հայերենում դրանց կիրառության արտահայտությունը: V դարի թարգմանական մեկ այլ գործում էլ՝ «Վկայքում», հանդիպում ենք լատինական որոշ ամսանունների: Ընդ որում, դրանք առկայանում են գրքի մեկ բաժնում՝ «Վկայութիւնք բազմաց մարտիրոսաց, որք ի Պարսս կատարեցան» վերնագրով առաջաբանում. «Գռշթագդ, որ է Գունասպ նախարար, վկայեաց ի մեծի հինգշաբթոջ Չատկին ի ԺԳ ապրիլի ամսոյ» (2): «Վկայեաց եւ քեռորդին Շմատնի մեծի ի Ժ յունիս ամսոյ» (3):

Մոկս, Ոգիմ, սակայն այս գործածության ակունքները ոչ թե V դարից են գալիս, գրաբարից, այլ այդ տարածքում ապրող այլ ժողովուրդների լեզվի ազդեցությունն է նոր շրջանում: Խորենացին մեկ անգամ վկայել է Տուրի եգիպտական ամսանունը Եգիպտոսի նկարագրությանը վերաբերող մի հատվածում. «Եւ այնպիսեաւ ... մտար յեգիպտոս (344) ... Եւ ոչ ի քսան և հինգն Տուրի՝ տօնի աղճատանք ... այլ ի մետասան նորին Տուրի՝ յայտնութեանն Տէառն կատարի տօն» (345):

Այս վկայությունը դեռևս հիմք չի տալիս V դարի հայ գրականության մեջ լատինական ամսանունների գործածությունը փաստելու մասին, մանավանդ որ «Վկայքի» այս հատվածի իսկությունը ուսումնասիրողները կասկածելի են համարում, այլևայլ փաստարկների հետ նշելով մահ հռոմեական ամսանունների առկայությունը որպես հետին իրողություն:

Բայց պետք է փաստել, որ IX-X դդ. առաջ գրված որոշ գործերում (ոչ քարգմանական) գործածվում են հունա-լատինական ամսանուններ: Այդպես է օրինակ Կոմիտաս կաթողիկոսի (VII դար) «Վասն հաւատոյ եւ կարգեաց եկեղեցոյ» աշխատության մեջ: «... ի յունուարի վեց գրէ միանալ Ծննդեանն ... քայց միայն Հայք գտեալ յառաջին կանոնաց զկարգն ի դէկտեմբերի քսան ... որ զՏեառնընդառաջն ի փետրուար յերկուքն տաւնել տայր...» (տե՛ս Մատենագիրք հայոց. հատոր Դ, էջ 314):

Մատենագրական տվյալները հաստատում են, որ լատինական ամսանունները վկայվել են IX-X դդ. ավելի վաղ, քայց դրանք հայկական իրականությանը չեն վերաբերել: Ահա մի օրինակ էլ Կադանկատվացուց. «քշրին ամսոյ քսան եւ երկուսն լինի ըստ Հոռոմին հոկտեմբեր ամսոյ ինն» (315): Հայ մատենագիրներին ու քարգմանիչներին, անշուշտ, ծանոթ են եղել հունա-լատինական ամսանուններն ու օրացույցը, Իսկ լայն զանգվածներին՝ ոչ:

X-XI դդ. Հայաստանում գրված ձեռագիր տոնացույցներից մեկում եկեղեցական տոները բաժանվում են երկու խմբի. ա) բացառապես հայկական եկեղեցուն վերաբերող տոներ, բ) ընդհանուր քրիստոնեական: Ուշագրավ է այն փաստը, որ առաջին խմբի ժամանակագրությունը (զուտ հայկական տոների) ներկայացվում է հայկական ամսանուններով. մաւսարդ, հոռի, սահմի, իսկ երկրորդ խմբինը՝ լատինական ամսանուններով: (Տե՛ս Теръ Мовсесянъ, 183):

Մեր մատենագրության մեջ հանդիպում են մահ այլ ամսանունների պատահական, օտար ոչ ճիշտ ձևերով գործածություն: Օրինակը Արմ-ը բերում է գրաբարի բառարաններում չվկայված նոռոն «հուլիս ամիսը», որը հունական ձևի սխալ ընթերցման արդյունք է: Մեկ անգամ է կիրառվում հուն. պանեմոս-ը:

Հայկական ամսանուններն ունեն և իրենց օրերի անվանումները (30 անվանում): Ամիսը շաբաթների չէր բաժանվում:

Ստորև բերում ենք օրանունները (օգտվել ենք Է. Աղայանի գրքից, որտեղ տրվում են և օրանունների ստուգաբանությունը, էջ 77-80):

1. Արեգ	11. Երեզկան/Երեզհան	21. Գրգուտ
2. Հրանդ/Հրանտ	12. Անի	22. Կորդուիք
3. Արամ	13. Պարխար	23. Ծմակ
4. Մարգար	14. Վանատուր	24. Լուսնակ
5. Ահրանք	15. Արամազդ	25. Ցրօն (Սփիւտ)
6. Մազդեզ	16. Մանի	26. Նպատ
7. Աստղիկ	17. Ասակ	27. Վահագն
8. Միհր	18. Մասիս	28. Սին (Սեին)
9. Չոպաբեր	19. Անահիտ	29. Վարազ
10. Մուրց	20. Արագած	30. Գիշերավար ..

Ավելյաց ամսվա օրանուններն են. Լուծ, Եղջերու, Փառազնոտ, Արտախուր, Ծկրատրի:

Հիշյալ օրանունների առաջին վկայությունների ժամանակաշրջանի հարցը պարզաբանման կարիք ունի:

Դ. ՏԱՐԻ

Տարին այն ժամանակահատվածն է, որի ընթացքում երկրագունդը մեկ լրիվ պտույտ է գործում արեգակի շուրջը:

Հայերը վաղնջական շրջանից հիմնավորված ու ճշգրիտ տոմարագիտական տեղեկություններ են ունեցել, եղել է մաս բուն հայկական տոմար և, որ այդ համակարգում տարին (արևադարձային կամ լուսնային) կարևոր դեր է խաղացել, վկայում են օրացուցային ճշգրիտ հաշվարկները: Տարի հասկացության հ.-ե. ամ, մաս անցյալ տարի հասկացության դարձյալ հ.-ե. հերթի անվանումները (տե՛ս, Բ.Թումանյան 1964, 1968, Մ.Բաղայան 1972, Է.Աղայան 1986) խոսում են բառի և հասկացության հին ակունքների մասին:

Նոր հայկազյան բառարանն ամ-ը մեկնում է «Տարի, Ժամանակ ԺԲ ամսոց արեգական, հասակ կենաց մարդոյ, չափ ժամանակի երևելի իրաց», իսկ տարի-ն՝ «ամ, բոլորումն երկուտասան ամսոց»: Ըստ Առձեռն բառարանի՝ ամ՝ «տարի, տարիք, թուական»:

Տարի՝ տարիք: Գրաբարում ամ և տարի բառերը, ունենալով հոմանշային եզրեր, դրսևորում են մաս զգալի գործառական, բառակազմական և այլ կարգի յուրահատկություններ:

Անդրադառնանք նշված բառերին առնչվող մի քանի հարցերի:

V դարի քարգմանական ամենաձավալուն գործում՝ Աստվածաշնչում, Աճառյանի հաշվումներով ամ-ը գործածվել է 581 անգամ, իսկ տարի-ն՝ 66 (տե՛ս Արմ., Տարի բառահոդվածը): Ինքնուրույն գրականության տվյալները մույնպես հաստատում են, որ ամ-ն ավելի հաճախական է, քան տարի-ն: Տվյալները ներկայացնենք աղյուսակի տեսքով:

Հեղինակ	ամ-ի գործածությունը (թվերով)	տարի-ի գործածությունը (թվերով)
Կոլյուն	13	0
Եզնիկ	14	8
Ազաթանգեղոս	38	6
Բուզանդ	45	1
Եղիշե	28	3
Խորենացի	170	4
Փարպեցի	31	1

Ամ-ը հաճախական է և հետիինգերոտոդարյան գրականության մեջ, օրինակ՝ Հ. Դրասխանակերտցու «Պատմության» մեջ ամ-ի գործածությունն անցնում է 100-ից, իսկ տարի բառը հեղինակը չի գործածել։ Այն չկա նաև Նարեկացու «Մատյան»-ում¹⁴։

Ամ-ը բնիկ հայերեն բառ է։ Տարի-ն Արմ-ում ստուգաբանված չէ։ Գ. Ջահուկյանը հավանական է համարում սեմական ծագումը։ Ուրեմն ամ-ը հայերենում գործածության հիմնականներն ունի, իսկ տարի-ն գործածվել է ավելի ուշ։

Ամ և տարի բաղադրիչներով գրաբարում կան մի շարք կազմություններ։ Եթե վերջիններիս քանակական կողմը կարող ենք այնքան էլ էական չհամարել, ապա բառակազմական կաղապարների և բառաձևերի հարցը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում։

Նկատելի է, որ ամ-ով կազմությունները գրաբարում ավելի շատ են. այդ բաղադրիչով գրաբարում կան ամանոթ, ամամեջ, հետադաս դիրքում՝ բազմամեայ, հնամի, զառամ նաև քվական + ամ մի շարք կազմություններ. երկեամ, երեամ, (երեմոյ), եռամեայ, չորեքամեայ, հազարամեայ, հարիւրամեայ և ավն։

Տարի բառով առկա են տարեկան, տարեմուտ, տարեւոր, տարեգլուխ։

Տարի-ն՝ որպես բառի վերջին բաղադրիչ, գրաբարում վկայված չէ։ Ուրեմն՝ ամ-ի բառակազմական հնարավորություններն ավելի մեծ են։ Բառաձևերում ի հայտ է գալիս մի այլ առանձնահատկություն ևս. ամ բառով կազմությունները հատկապես նախադաս դիրքում հնագույն ձևեր են և թերևս կազմված ամա հիմքով։ Բնութագրական է ամանոթ-ը, որտեղ, եթե ամ+ա+նոթ (ա-ն որպես հոդակապ) կազմությունը չէ, ապա գործունենք ամա (հիմքային ձև) + նոթ կաղապարի հետ։ Գ. Ջահուկյանը նույնպես հիմքային ձևի առկայությունն ավելի հավանական է համարում՝ նկատելով, որ «սա խոսում է կազմության արխայիկ բնույթի մասին (հմմտ. վիպասանական աշագեղ) (Ջահուկյան 1987, 411)։ Ամ-ի վերջադաս դիրքում էլ, որոշ կազմություններ՝ երեամ, երեմի, երկեամ, անշուշտ. հիմն ձևեր են։

Ամանոթ բառը ՆՀԲ-ն չունի, իսկ ԱԲ-ում կա՝ «Նոր տարի, տարեգլուխ» բացատրությամբ։ Զանի որ ԱԲ-ն բնագրային օրինակներ չի

¹⁴ Օգտվել ենք նշված հեղինակների գործերի համաբարբառներից, որոնք կազմվել են Գ.Ա. Լեզվի ինստիտուտում

գործածության ժամանակաշրջանի մասին: V դարում, ըստ բառարանների և համաբարբառների տեղեկության, ամանոր բառը օգտագործել է Ագաթանգեղոսը, բայց այն թերևս դիցանուն է և այդ պատճառով էլ տեղ չի գտել ՆՀԲ-ում: Ահա այդ օրինակը. «Ձյիշատակս վկայիցն ... ժամադրեաց ի տօն մեծ հոշակել, սնոտիացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ... նոր պտղոց տոնին» (Ագաթ. 435): Առհասարակ ժամանակի միավորների անվանում-դիցանուն աղերսն առկա է հայկական տոմարում. հմմտ. հետևյալ օրանունները՝ Աստղիկ, Միհր, Արամազդ, Ամահիտ, Վահագն:

Զննության առարկա ամ և տարի բառերի ծագումնաբանական, բառակազմական, հաճախականության առանձնահատկությունները, անշուշտ, պայմանավորում են դրանց կիրառության ոլորտները: Փորձենք տարբերակել սահմանները, իմաստային նրբերանգները:

Հ. Աճառյանը, հաշվի առնելով Ա. Մեյեի այն նկատառումը, թե հին հնդեվրոպացիները տարբեր անվանումներ ունեին մի տարվա և մեկից ավելի տարիների համար, ենթադրում է, որ այդ տարբերությունը կա ամ և տարի բառերի միջև. «Տարի նշանակում էր «մի տարի», ամ՝ տարիներ: Այս տարբերությունը Ե դարուց առաջ ջնջված էր: Ոսկեդարում ամ և տարի բառերը կատարյալ հոմանիշներ էին, մինչև որ ամ բառն էլ ջնջվեց և մնաց միայն տարի» (տե՛ս Արմ., Տարի բառահոդվածը): Որպես հիմնավորում՝ Աճառյանը նշում է, որ Ս. Գրքի ամ-ի 581 կիրառություններից 278-ը հոգնակի է, 65-ը հոգնակի իմաստով (վեց ամ, զհազար ամ) և 198-ը եզակի: Իսկ տարի բառի 66 գործածություններից միայն երեքն է հոգնակի: Նշենք, որ ամ-ի հոգնակիական կամ հոգնակի իմաստով կիրառությունը բնորոշ է նաև աղյուսակում բերված հեղինակների գործերին: Համադրելով ամ և տարի բառերի գործածությունները՝ կարող ենք արձանագրել, որ ամ-ը կիրառվում է.

1. Մեկից ավելի տարիներ նշանակությամբ և հանդես է գալիս 1-ից բարձր թվականների, նաև բազում, շատ, անչափ և նման կարգի բառերի հետ. «Այս քսան ամ է, զի էի ընդ քեզ» (Ծննդ. ԼԱ, 18): «Էր ամաց քառասնից Սաուդայ» (Բ. Թագ. Բ, 10): «Այսչափ ամը են, զի տեսի ես քեզ» (Ագաթ. 30): «Կեցեալ ամս բազումս» (Խոր. 244): «Եւ զայս խորիէր հատուցանել յամս ձիգս» (Խոր. 44):
2. Դասական թվականների հետ. «Առաքեցից յամին վեցերորդի» (Դևտ. ԻԵ, 21): «Եղև վաղորդեան, օր երկյորդ» (Ծննդ. Ա, 8): «Եւ յաջորդէ զարոռն Յուսիկ որլի նորին ի չորրորդ ամին Տիրանայ»

(Խոր. 269): «Ի քառասուն և յեօթներորդ ամեն Տրդատայ մինչև ցյիսուն եւ երրորդ ամն նորին» (Խոր. 243):

3. Երբ նշվում է որևէ իշխանության, թագավորության կամ պատմական իրադարձության ժամանակը. «Յամի ութերորդի թագաւորութեան իւրոյ» (Դ.Թազ. ԻԴ, 12): «Յետ լնոյ հնգետասան ամաց եպիսկոպոսութեան մեծի Վրթանայ...» (Խոր. 269): «...սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Խոսրավայ արքայի Հայոց մինչև ցսկիգրն ամին երկրորդի Յազկերտի» (Խոր. 355): «... ութսուն ամօք յառաջ քան զթագաւորութիւնն Նաբուգոդոնոսորայ եր Սենեքերիմս կացեալ արքայ Ասորեստանի» (Խոր. 70): «Յեկրորդում ամի յետ ջրհեղեղին» (Շննդ. ԺԱ, 10):

4. Երբ ցույց են տալիս մարդու տարիքը. «Եկեաց Ադամ ամս երկերիւր և երեսուն...» (Շննդ. Ե, 3): «Շամուել կացեալ ամս հինգ՝ մեռանի ի մերում աշխարհիս» (Խոր. 354): «Եւ եղեն ամենայն ատուրք Յարեղի ամք ինն հարիւր վաթսուն եւ երկու, եւ մեռաւ (Շննդ. Ե, 20):

Մարդու տարիք նշելու դեպքում նույնիսկ կրկնությունից խուսափելու համար տարի չի օգտագործվում, այլ միայն ամ (հմմտ. «Եւ ամ կենաց Կահաթո՝ հարիւր երեսուն եւ երեք ամ» (Ելք. 2, 18): Եւ այս են ամք կենաց Իսմայելի հարիւր երեսուն եւ երեք ամ» (Շննդ. ԻԵ, 17): Հունարենում նույնպես նույն "ετος(ε"τη) բառն է: Հայերենի դեպքում միայն հունարենի ազդեցությունը չէ, այլ գործ ունենք տարի բառի՝ «տարիք» իմաստով զրաբարում չգործառնելու երևույթի հետ: Ի դեպ, ռուսերենի համապատասխան հատվածում՝ Ելք 2. 18-ում, лет և год բառերն են. "А лет жизни Кафа сто тридцать три года": Ռուսերենը կրկնությունից խուսափելու համար չի արել դա: Ռուսերենում лет և год բառերի՝ թվականների հետ կիրառության այլ կանոն է գործում, որի համաձայն հենց Ս.Գրքի որոշ օրինակներում օգտագործվում է նույն բառը: Այսպես է Շննդ. ԻԵ. 17 նախադասության մեջ. "Лет же жизни Измаиловой было сто тридцать сем лет":

Տարի բառը գործառնում է իմնականում «օրացուցային տարի, տոմարական միավոր» իմաստով. «Եւ լուծան չորք հրեշտակքն պատրաստեալք ի ժամ եւ յօր եւ յամիս եւ ի տարի ...» (Յայտ. Թ, 15): «Տարին կատարեցաւ եւ զարդիւնս ամենայն ի շտեմարանս ձեր ժողովեցէք» (Մաղա. Գ, 10): Եզնիկի երկի բոլոր 8 կիրառություններում էլ նշված իմաստով են. «Նա յերեսուն ատուր կատարէ զընթացսն և արեգակն ի տարւոջ» (215): Որով ժամքն և ատուրք և ամիսք և տարիք կարգին (119): «Որ ի տարւոջ հազիւ մի անգամ հասանեն ի նոյն տեղի ... և է ի տարւոջ և

ի կիսում» (187): Այսպես են և Խորենացու վկայած օրինակները. բերենք երկուսը. «Չշաբաթուց ասեմ և զամսոց և զտարեաց բոլորմանց» (188): «...Որպէսզի զշորորդ մասն ի բոլորմանէ տարւոյն, որ է ամառնային եղանակ, ըստ ամենայն բարեվայելչութեան անցանիցենք ի Հայս...» (51): Այսպես է Բուզանդի վկայած միակ օրինակը. «Եւ մա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առհասարակ իբրեւ տարի մի» (15):

Տարի բառը նշված իմաստի բնորոշ օրինակ է «Վեցօրեայի» հետևյալ հատվածը. «Դարձեալ եւ ի տարիս եղան լինել արեգակն եւ լուսին, քանզի լուսին յորժամ երկոտասանիցս կատարէ զընթացս իւր տարի մի կատարի ... ըստ արիմակլի եբրայեցոց, որ կատարեն զընթացս տարւոյն ի Հին կտակարանաց եւ ըստ արիմակացն յունաց, որ ըստ թուոյ նախնեաց համարին զտարին արեգական ի հաստատել ի կիտէն մինչեւ ի միւս կէտն, նշանակել զընթացից շարժմանցն. զոր ունի արեգակն. նոյնպէս առնի նոքաւք կատարումն տարւոյն իւրոյ» (Վեցօր. 199-200):

Տարի բաղադրիչով կազմությունները նույնպես տոմարական, օրացուցային հասկացություններ են. տարեկան «տարի, տարեմուտ, տարվա գլխավոր օր», տարեմուտ «նոր տարվա մուտքը, կադանդ», տարետը «տարեկան, մեկ տարվա»:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ամ և տարի բառերը զրաբարում դրսևորում են գործառական յուրահատկություններ: Տարի-ն հիմնականում օրացուցային և տոմարական հասկացություն է, իսկ ամ-ն ավելի բազմիմաստ է և հաճախական, որը պայմանավորող կարևոր գործոնն ամ-ի հ.-ե. ծագումն է, այսինքն՝ նրա՝ վաղնջական շրջանից գործածությունը:

*

* *

Մի դիտարկում ամ արմատով մեկ այլ կազմության մասին:

Գրաբարում տարվա եղանակների անվանումները հնդեվրոպական ծագում ունեն:

Ուսումնասիրողներն ամառն բառի մեջ տեսնում են հ.-ե. *som* արմատը: Արդյոք ամառն բառի ամ բաղադրիչը նույն ամ «տարի» արմատն է, թե՞ այլ: Այլ կերպ ասած՝ գործ ունենք տարբեր (համանուն) արմատների հետ, թե՞ նույն արմատի իմաստային զարգացման:

Նախքան առաջադիր խնդրին անդրադառնալով՝ նկատենք, որ տարվա եղանակների շարքում իրականության մեջ հստակորեն հա-

կադրված են ամառ-ձմեռ հասկացությունները, և դա բնական է: Գրաբարում դրանք առանձնանում են և բառակազմական ու թեքման ընդհանրություններով. ամառն-ամարան, ձմեռն-ձմերան:

Չմեռն բառի պարզական արմատն է *gʰei, *gʰi «սառնամանիք, ձմեռ», այս նույն արմատից է հայ. ձիւն բառը: Հմմտ. մակ սանս. hēmantā «ձմեռ», hima «ցուրտ, ձմեռ, ձյուն», պրս. zam «ցուրտ», zamestan «ձմեռ»:

Տրամաբանական է, որ ձմռան-ը հակադրվող ամառ հասկացությունը պետք է արտահայտի «տաք, ջերմություն, շոգ» իմաստը. հմմտ. պրս. tabestan «ամառ»:

Մեզ քվում է ամառն բառի ամ բաղադրիչը նույն ամ «տաքի, ժամանակ» արմատն է: Նախ՝ գրաբարում ամ-ը տաքի իմաստից զատ ենթադրում է մակ «ժամանակ» իմաստը, հմմտ. զառամ (զ-առ-ամ) «ծեր», այդպես էլ տաքիք իմաստով կիրառությունները փաստորեն ժամանականիշներ են: Երկրորդ՝ հ.-ե. մի շարք լեզուներում էլ համապատասխան արմատն ունի և «ժամանակ», և «տաքի» իմաստները. հմմտ. սանս. samā «տաքի, եղանակ, ժամանակ», զնդ. hama «ամառ» և այլն: Այսպես է և սլավոնական լեզուների аето «ամառ» բառը. հ. սլավ. лѣто «ժամանակ»: Տարի, տարվա եղանակ զուգահեռներից է իր. *sarda «տաքի», հ.հնդ. sārād ««աշուն» (տե՛ս ОИЯ, 1981, 173), հուն. θερος-ը նշանակում է «ամառ» և «բերք, հունձ» (տե՛ս Дворецкий, т. I, 781): Վերջինիս դեպքում կարելի է ենթադրել «բերքի, հնձի ժամանակ» իմաստը: Ի դեպ. հայերեն Աստվածաշնչի որոշ հատվածներում ամառայնի բառը «հունձ, հնձի ժամանակ» իմաստով է. «Եւ զտօն ամառայնոյ առաջնոյ արմտեաց քոց. արասցես զգործոց քոց» (Ելք. ԻԳ., 16): «Ջառակ գոռոյիցն իբրև զարդիւնս ամառայնոյ ամփոփելոյ վաճառականք ազգացն» (Եսայ. ԻԳ., 3): Սա. անշուշտ. հունարենի ազդեցությունն է, կամ. ավելի ճիշտ. քարզմանիչների կողմից հունարեն համապատասխանակի միայն մեկ՝ «ամառ-ամառային» իմաստի իմացության արդյունք: Ռուսերեն քարզմանության մեջ եբրայական բնագրի համապատասխանակն է. "Наблюдая и праздник жатвы первых плодов труда твоего" (Исход. 23, 16):

Եթե, իրոք, ամ և ամառն բառերում նույն ամ «տաքի, ժամանակ» բաղադրիչն է, ապա կարելի է ենթադրել, որ նախապես ամառն կազմության մեջ ամ- «ժամանակ» գիտակցվել է «տաք եղանակ, ժամանակ» նշանակությամբ: Ենթադրելի է մակ, որ ամառն-ի «ժամանակ» իմաստն աղերսվում է օրացուցային տարին ամռանից սկսելու (հաշվելու) հետ:

Սլավոնական լեզուներում էլ лето-ն ունի «տաք, տաքություն», որոշ բարբառներում «հարավ» իմաստը (տե՛ս, Фасмер, т. II, 488), քերևս դարձյալ կապվում է «շոգ, ջերմություն» հասկացության հետ:

*

* *

Տարուց ավելի ժամանակաշրջան ընդգրկող բառերից են.

Դար- գրաբարում բառն ուներ շատ տարիներ, «100 կամ ավելի տարիներ» իմաստը: Բառը սեմական լեզուներից կատարված փոխառություն է:

Ներ, շաբ, սոս բառերը հայերենին են անցել քերևս Եվսեբիոսի «Քրոնիկոնի» թարգմանությունից: Այս երեք բառերը 60 թվի խորհրդանիշներ են՝ սոս- «60 տարի ընդգրկող շրջան», ներ- «600 տարի ընդգրկող շրջան», շաբ- «3000 տարի ընդգրկող շրջան»:

*

* *

Մի նկատառում ևս՝ կապված տարվա եղանակների անվանումների հետ:

V դարից վկայված են գարուն, ամառ, աշուն, ձմեռ բառերը: Իրականության մեջ հստակորեն տարբերակվում-հակադրվում են ամառը և ձմեռը՝ որպես տաք և ցուրտ ժամանակահատվածներ: Ինչպես մշել ենք. այդ հակադրությունն ի հայտ է գալիս հ.-ե. անվանումներում մասնատուգաբանորեն:

Գարնան և աշնան միջև այդպիսի հակադրություն չկա:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ հ.-ե. որոշ լեզուներում նույն արմատով կազմված բառերն ունեն «աշուն», «տաքություն» կամ «գարուն», «ամառ» իմաստները. հմմտ. հին պրուս. assanis «աշուն», գոթ. asans «տաքություն», հ.-ե. yēs-ից՝ ոուս. весна «գարուն», ռուս. vara «ամառ»:

Կարելի է ենթադրել, որ վաղմջական շրջանում հայերն էլ գարունն ու աշունը չեն տարբերակել, կամ վերջիններս ունեցել են մեկ անվանում: Ենթադրվում է, որ մոտ 3000 տարի առաջ Հայաստանում ապրող տեղաբնակների աստղագիտական ըմբռնումներով տարին բաժանվում էր երեք եղանակի: (Աղայան, 1986, 17):

Հայերենի որոշ բարբառներում (Երևան, Ջուղա, Ղարաբաղ, Մեղրի) գարուն և աշուն բառերը -ք հոգնակերտով են: Կարծում ենք, որ հոգնակիաձևությունը հին ակունքների ունի և կապված է այդ երկու եղանակների նույնացման հետ: Սկզբնապես քերես գործածվել է գարուն-ը. որի հ.-ե. բնույթը կասկած չի հարուցում:

Լեզվամտածողական այդ կարգի նոր զուգահեռ կարելի է համարել իրան. bahar «գարուն» գործածությունը բուրբերենում, որտեղ lik bahar նշանակում է «գարուն» (բառացի՝ առաջին գարուն), իսկ son bahar՝ «աշուն» (բառացի՝ վերջին գարուն):

ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐ

Գույնի ընկալումը, տարբերակումը և անվանումը մարդու (հանրության) և իրականության յուրատեսակ հարաբերություն են, աշխարհընկալման արտահայտություն: Բնականաբար յուրաքանչյուր հանրություն ունի աշխարհընկալման և ճանաչողության իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են բազմաթիվ գործոններով: Առարկայական իրականության միևնույն երևույթը, այնպես էլ գույնի ընկալումն ու արտահայտությունը, տարբեր հանրությունների կողմից տարբեր դրսևորումներ է ստանում. օրինակ հ.-ե. նույն *k'i, *kei արմատն իրանական լեզուներում մատնանշում է սև գույնը, իսկ քաթասլավոներում՝ մոխրագույն, սպիտակ: Ավելին, նույն գունային ընկալումը կարող է փոփոխվել նույն հանրության պատմական զարգացման տարբեր աստիճաններում:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ գունային առաջին անվանումները եղել են սև, կարմիր և սպիտակ գույները, որոնք առավել տարբերակելի ու ճանաչելի են (Сараджева, 1987):

Գունային անվանումների քննությունը հանգեցնում է հետևյալին. ա) այդ անվանումները (նշանակիչ-նշանակյալ) կարող են լինել կամայական, բ) գունային անվանումը կարող է կապ ունենալ առարկայական իրականության հետ, գ) գունանունները կարող են փոխառվել, դ) հնարավոր է գունանունների իմաստի նեղացում կամ լայնացում:

Հանրության զարգացման նախնական շրջանում գույների անվանումների համակարգում (իսկ այդ համակարգը գույների ընկալման և անվան տեսակետից բնականաբար բազմազան չէր կարող լինել) անշուշտ պետք է փնտրել նրա գոյաբանական հիմքը՝ իրականության որևէ բնորոշ առարկայի և նրան բնորոշ գույնի կապը, միասնական ընկալումը (երկինք, ծով → կապույտ), (դաշտ, անտառ → կանաչ), (արև, հուր → կարմիր, դեղնավուն), (հանրությանը քաջաժանոք որևէ մետաղ → համապատասխան գույնը) և այլն:

Տարբեր ժողովուրդների սովորույթներում գույները նաև որոշակի գաղափարախոսության արտահայտիչներ են: Օրինակ՝ հին Հռոմում կանաչը համարվում էր կանանց համար բնորոշ: Տղամարդկանց հագուստ-

ներում այդ գույնի առկայությունը պախարակելի էր, արատավոր, կանացիակերպ, “gaibini mores” կապակցությունը բառացի «կանաչ բարքեր» նշանակում է «խեղաթյուրված, ալյասերված» բարքեր:

(Այդ կարգի որոշ հարցերի կանդիդատուհանք հագուստներին վերաբերող բաժնում):

Գրաբարի գունանունների գործառական-իմաստային համակարգված քննություն ցայժմ չի եղել: Իհարկե, սա բնավ չի նշանակում, որ այդ բնագավառում ոչ մի բան չի արվել: Զննված է գունանունների ծագման հարցը, առանձնացված են գունանունների հոմանիշային շարքերը (Աճառյան, Արմ, Ջահուկյան 1987), իսկ Լ. Սարաջևայի ուսումնասիրությունը վերաբերում է գրաբարի և հին սլավոներենի տիպաբանական քննությանը, որտեղ շոշափվում են նաև մեզ հետաքրքրող որոշ խնդիրներ:

Գոյն բառի հոմանիշներն են երանգ, երփն, քոյր: Գոյն-ը և երանգ-ն իրանական փոխառություններ են, իսկ երփն-ի և քոյր-ի ծագումը պարզ չէ (ենթադրվում է ուրարտական ծագում):

Վաղուց արդեն նկատված է, որ հայերենի հիմնական գունանունների մեծ մասը՝ սպիտակ, սեաւ, կարմիր, կապոյտ, իրանական փոխառություններ են: Սա հայերենի գունանունների հիմնական առանձնահատկություններից մեկն է. փաստ, որ ինքնընտանիքյան առաջադրում է մի շարք հարցեր: Սկսենք հիմնականից. ինչու⁹ և ինչպե՞ս են փոխառվել իրանական գունանունները:

Անշուշտ, նախքան իրանական փոխառությունները՝ հայերենն ունեցել է նշված գունանունների հ.-ե. կամ հին լեզուներից վերցրած անվանումներ: Որոշ դեպքերում այս բեզը հաստատվում է համեմատական լեզվաբանության տվյալներով: Եթե սրանք, ինչպես նաև գրաբարի և բարբառների վկայած փաստերն էլ չլինեին, դարձյալ անտրամաբանական կլինեին կարծել, թե հայերը գոնե հիմնական գունանունների անվանումները չեն ունեցել:

Այդ դեպքում պետք է պարզել, թե ինչու⁹ են փոխառվել իրանական գունանունները:

Նյութի քննությունը հանգեցնում է հետևյալ եզրահանգմանը: Նախապես իրան. սպիտակ, սեաւ, կարմիր, կապոյտ բառերն ընդհանրական գունանվանումներ չեն եղել: Դրանք վերաբերել են միայն որոշակի

առարկայի. կամ էլ առարկան և նրա հատկանիշը՝ գույնը, դիտվել է միասնության մեջ:

Սկսենք սպիտակ-ի հոմանիշ ճերմակ բառից: Վերջինս գործածական է և՛ արդի հայերենում, հատկապես արևմտահայերեն գրական տառերակում, և՛ որոշ բարբառներում:

Ճերմակ-ը գրաբարում հաճախական չէր: V դարի մատենագրության մեջ վկայել է միայն Բուզանդը: Երկու դեպքում էլ, ըստ էության, գումանուն չէ, այլ Բուզանդը նկատի ունի Մուշեղի ձին (ձիու անունը, նրա տեսակը): «Եւ էր երիւարն Մուշեղի ճերմակ ձի մի» (Բուզ. 159): «Եվ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ճերմակաւն» (մ.տ.): Նույն տեղում նաև՝ «Ճերմակաձին գինի արբցէ»:

Ստուգաբանորեն էլ չի հիմնավորվում ճերմակ-ի «սպիտակ» իմաստը, որովհետև ըստ Արմ-ի՝ միջին իրանական լեզուներում այն վկայված չէ, իսկ պրս. կա չարմա «ճերմակ ձի, շագանակագույն ձի», «հասարակօրէն ձի»: Ընդհանրապես «ձիու տեսակ» - «գույն» անցումը հաստատվում է և այլ լեզուների տվյալներով (տե՛ս Сагаджева, 1976): Գրաբարում էլ երաշխ, զարտակ, ճարտուկ գումանունները վերաբերում են միայն ձիուն: «Այր մի հեծեալ յաշխէտ ձի» (Չաքա. Ա, 8): (Ս. Գրքում այս բառով վկայված երեք օրինակներն էլ այդպես են): «Ահա ձի մի զարտակ» (Յայտ. Զ, 7-8): «Ի ձի երաշխ արիւնագոյն հեծեալ» (Մագ. քղթ. 51): (Իրանական էպոսում րախշ-ը Ռուստամի ձին էր):

Չիտոն վերաբերող գույն → որևէ գույն անցումը կարելի է արձանագրել նույնիսկ մեր օրերում: Քումայք արաբական փոխառություն է, որ փոխառու լեզվում նշանակում է «արմավագույն մարմնով և սև պոչով ձի»: (Արմ.): ՆՀԲ-ն և ԱԲ-ն բառը սխալմամբ մեկնել են «խարտյաշ ձի» և «որի համեմատ էլ, – ինչպես գրում է Աճառյանը,– արևմտյան գրականում ումանք սկսել են գործածել քումայք պատանի «խարտյաշ երիտասարդ!» բանաստեղծական բացատրությունը» (տե՛ս Արմ. Քումայք բառահոդվածը):

Արևելահայ գրականում այն նույնպես կիրառված է Թաթուլ Հուրյանի «Նամակ» գողտրիկ բանաստեղծության մեջ.

Նա գլնվոր է հիմա

Եվ երկիրն է պահում,

Դու, աղջիկ իմ քումա՛յք,

Ամեն հարմար պահում

Նախատում ես նրան,
Որ շուտ վերադառնա
Եվ կոպերի վրա
Արցունք չերևա...¹⁵

Մի խոսքով. կոնկրետ որևէ առարկային վերագրվող գունանուն → գունանուն ընդհանրապես անցումը կարելի է օրինաչափ համարել, սակայն միշտ չէ, որ հնարավոր է այն փաստարկել:

Անդրադառնա՞նք իրանական ծագում ունեցող այլ գունանուններին:

Կարմիր – վկայված է V դարից: Հին պարսկերենում համապատասխան բառ վկայված չէ. այդ հասկացությունն արտահայտվում էր *suxra* բառով՝ *suk* «կարմիր», որից և *պրս. sorx* «կարմիր»: Եթե հայ կարմիր-ն իրոք իրանական ծագում ունի, ապա անցել է միջին իրանական լեզուներից՝ միջ. *պրս. *karmir*, սողդ. *krm'yr*: Բառի արմատն է *krm* «որդ»: Ստուգաբանությունը ենթադրել է տալիս, որ կարմիր-ը նախապես վերաբերել է որդից պատրաստված գույնին (որդան կարմիր)¹⁶:

Կապույտ – գրաբարում որպես գունանուն օգտագործվում է կապուտակ ձևով, որն ավելի հաճախական է: Հմմտ. «Առցեն հանդերձ կապուտակ», «մաշկեղէն կապուտակ» (Թխր. Գ, 9, 10): Հ. *պրս. kapautakan* նաև կապույտ գույն ունցող մի քարի անվանում է:

Հավանորեն հայերենում կապույտ-ը նախապես վերաբերել է քանկարժեք քարի մի տեսակի:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ կապույտ-ին հոմանիշ լաջվարդը (վերջինս գրաբարում վկայված չէ) նույնպես իրանական փոխառություն է՝ *պրս. lāžvard* «գոճազմ քարը» (տե՛ս Արմ. լազուարթ բառահոդվածը):

Սեալ – թեև բառը համարվում է իրանական փոխառություն (Աճառյան, Արմ, Ջահուկյան, 1987, 207). հմմտ. *ավ. syāva*, *պրթ. syw*, միջ. *պրս. siyav*, *պրս. siyāh*: Հիշյալ ձևերը ծագում են *հ.-ե. *k'e-i*-ից, որից

¹⁵ Թաքով Հուրյան, Լուսապյակ, «Մովեստական գրող» հրատ. Երևան, 1982, էջ 39:

¹⁶ «Որդ» → «կարմիր» անցումը համահնդեվրոպական երևույթ է. հմմտ. "чръмъхъ" «կարմիր» և "чърмъ" «որդ», նաև *լեռ* հմմտ. *լատ. vermiculus* «կարմիր»:

հայերենում նույնպես կարող էր լինել սեաւ: Այսինքն՝ սեաւ-ը կարող ենք համարել բնիկ հայերեն:

Իսկ եթե այդուհանդերձ ընդունենք բառի փոխառյալ լինելը, ապա, մեր կարծիքով, սեաւ-ն էլ նույնպես ձիու գույն է նշանակել:

Հայերենի առաջին վկայությունն էլ թերևս այդ է հաստատում. «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի յսաւն գեղեցիկ»: Աստվածաշնչի վեց վկայություններից երեքը դարձյալ այդպես է: (Չաբա. 2.2, 2.6, Յայտ. 2. 5):

Բերենք երկու օրինակ. «Ի կառսն առաջինս ձիք աշխէտք և ի կառսն երկրորդս ձիք սեաւք (Չաբ. 2, 2): «Յորում էին ձիքն սեաւք, ելանէին ընդ երկիր հիւսիսոյ...» (2, 6):

Ռուս. քարգմանության մեջ էլ "... а во второй колеснице кони вороные" նույնը և 2. 61:

Սեաւ-ի՝ նախապես որևէ առարկայի գույն նշանակելու կողմնակի փաստարկ կարող է լինել և այն, որ մի շարք լեզուներում սև-ը և սպիտակ-ը մաս վատ-ի և լավ-ի խորհրդանշներ են, իսկ գրաբարում այդ իմաստով ավելի ցայտուն է բարի-չար հակադրությունը, այսինքն՝ գրաբարում սև բախտ, սև օր և նման փոխաբերացված արտահայտություններ չկան, որը վկայում է սեաւ-ի սկզբնապես մեղ գործառական ոլորտի մասին:

Սպիտակ-ի՝ նախապես որևէ առարկայի գույն լինելը համեմատական լեզվաբանության և գրաբարի ընձեռած տվյալներով հիմնավորումը դուրսին չէ, մանավանդ որ սպիտակ-ը գունային ավելի շատ զամաներ է պարունակում, ասել է թե՝ սև-սպիտակ հակադրության միջանկյալ որոշ երանգներ, մասնագույնն ընկալվում են որպես սպիտակ:

Անկախ ծագման բնույթից՝ գրաբարի հիմնական գունանուններն արդեն V դարի տվյալներով ունեն հոմանշային զուգահեռներ, որոնք դրսևորում են մասնագործական յուրահատկություններ:

Սկսենք հ.-ե. համարվող միակ հիմնական գունանունից՝ դեղին:

Թեև այս գունանունը բնիկ հայերեն է, սակայն գրաբարում հաճախական չէ. V դարի ինքնուրույն գրականության մեջ վկայված չէ, բառարանները վկայություն չունեն մասնաքանակական գրականությունից: Դեղին-ը կապվում է հ.-ե. *dhehino-ի հետ (Չախուկյան, 1987, 119), պարզական արմատն է *dheh-, որը հայերենում ներկայացնում է դեղ և դալ ձևերով (դեղը, դեղծ, դաղձն, դալար և այլն): Հ.-ե. հիշյալ արմատով և ածականով կամ ածանցմամբ մի շարք բառեր արտահայտում են «դեղին» իմաստը: V դարից է վկայված, օրինակ, դեղձան-ը. «... և կտրեալ

գրեղծան հերսն և զվարսիցն փետտեալ զխոսյոյալս՝ հրամայէ քարշէլ, արտաքս ընկենուլ ի սենեկէն» (Խոր. 195):

Դեղը «դեղին»-ի առաջին վկայությունը, ըստ Արմ.-ի VII դարից է. «... ո՛չ սպիտակ է և ո՛չ լուրթ, ո՛չ դեղը և ո՛չ կարմրագոյն, այլ կանաչ իմն գոյն է» (տե՛ս Արմ. դեղը բառահոդվածը): «Հ.-ե. *dhele- արմատը, ըստ երևույթին, մատնանշում է և՛ դեղինը, և՛ կանաչը. նկատված է, որ հ.-ե. լեզուներում այդ գույները երբեմն չեն տարբերակվում. հմմտ. հ.-ե. *ghel- հ.սլ. зеленъ, ռուս. зеленъ «կանաչ, կանաչի», չեխ. zeleny՝ - հ.հնդ. haritas. harinas «դալուկ, դեղին, կանաչավուն», ավեստ. zari «դեղին» և այլն (Сараджева, 194):

Հայերենն էլ նախապես հստակ չի տարբերակել գունային այդ արտահայտությունները՝ համեմայնդեալս *dhele- արմատի դեպքում (հմմտ. դեղ-բ, դեղ-ին, դեղծան «դեղին» և դալ-ար «խոտ, կանաչի»): Այդ տարբերակումը կատարվել է աստիճանաբար՝ որոշ աճականների միջոցով:

«Դեղին» իմաստն են արտահայտում նաև խարտեաշ-ը և շէկ-ը: Առաջինը վաղ գրաբարում հաճախական է և թերևս գործածության հին ակունքներ ունի՝ վկայված լինելով վիպասանական հայերենից մեզ հասած հատվածներից մեկում. «Եւ ի բոցոյն վագէր խարտեաշ պատանեկիկ» (Խոր. 86): Խարտեաշ-ի համար ենթադրվում է ուրարտական ծագում (Ջահուկյան, 1987, 436):

Խարտեաշ-ի հաճախականությունը և դեղին բառի փոխարեն նրա գործածությունը ակնհայտ է դառնում Աստվածաշնչի տվյալներով: Սուրբ գրքի հայերեն թարգմանության մեջ չկան դեղը, դեղծան, դեղին, դեղնատուն բառերը: Ռուսերեն թարգմանության մեջ желтый չկա, բայց կա желтоватый (Դեւտ. 13. 30, 13.32, 13.36)¹⁷: Հայերեն համապատասխանակում խարտեաշ-ն է: «... և ի նմա մագ աղուամագ խարտեաշացեալ (ԺԳ., 30), «և մագ խարտեաշացեալ չիցէ ի նմա...» (ԺԳ., 32): «Մի՛ դարմանեսցէ քահանայն վսսն խարտեաշ մագոյն» (ԺԳ., 36):

Այս և այլ կարգի օրինակները հաստատում են, որ գրաբարյան փուլում, հատկապես՝ վաղ շրջանում. դեղին գոյն հասկացությունն արտահայտվում էր հիմնականում խարտեաշ բառով:

¹⁷ Օգտվել ենք Симфония к синодальному изданию Библии. Стокгольм, 1995 г. համադրարարող:

Շէկ-ն արմատական ձևով վաղ գրաբարում հաճախական չէ, սակայն այդ արմատով կան մի շարք կազմություններ. ատրաշէկ, հրաշէկ, շիկագոյն, շիկակարմիր, շիկնիլ...

Գ. Ջահուկյանը ենթադրում է բառի ուրարտական ծագումը (Ջահուկյան, 1987, 436), քեև նախորդ մի աշխատանքում հնարավոր է համարում իրանական բնույթը (Ջահուկյան, Очерки, 195): Ավելի հավաստի է քվում բառի՝ իրանական լազուներից փոխառյալ լինելը (տե՛ս Հովհաննիսյան, 1990, 255):

Բացառելի չէ, որ նախագրաբարյան ինչ-որ շրջանում դեղին հասկացությունը արտահայտված լինի ոսկի բառով՝ նկատի ունենալով այդ մետաղի գույնը¹⁸, իսկ իմաստն ավելի հստակ է բառակազմության մեջ. հմմտ. ոսկեգոյն, ոսկեգլխակ, ոսկեթել, ոսկեճաճանչ, ոսկեփետուր, որոնք բոլորն էլ հիմնգերորդարյան վկայություններ են:

Գրաբարում դեղին գունանուն արտահայտող հոմանիշային շարքը ներկայանում է հետևյալ բառամիավորներով. դեղը, դեղին, դեղձան, ոսկի(?), շէկ: Գունային այս երանգն են արտահայտել նաև կարմիր գույնի որոշ նրբերանգներ (հուր, բոց, բոսոր ... և այլն), որոնց կանոնադաշտնաճի համապատասխան տեղում:

Եզակի վկայությամբ առկա է շլոռոս բառը: Ըստ ՆՀԲ-ի՝ «կանաչ, դալար՝ դեղնորակ», ըստ Արմ.-ի՝ «բաց կանաչ, դալար դեղնորակ»: Բառը, անշուշտ, հուն. χλωρόσ-ն է «դեղնավուն, կանաչ: «Ես տեսի ահա ձի շլոռոս» (Յայտ. 2, 8):

Այս համատեքստում բացառելի է կանաչ իմաստը, ուստի պետք է ենթադրել դեղնագույնը: Ի դեպ. ռուսերեն թարգմանության մեջ մի քիչ այլ է՝ бледный. "... и вот, конь бледный...".

Կանաչ Բառն Արմ.-ում ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում բառի ուրարտական ծագումը (Ջահուկյան, 1987, 436):

Այս գունանունը դասական մատենագրության մեջ հաճախական չէ, քեև կան որոշ վկայություններ, ինչպես Սուրբ գրքից, այնպես էլ ինքնուրույն գրականությունից. «կանաչս կամ կարմրացեալս» (Ղեւտ. ԺԴ, 37): «Ծիծառն մարդասէր է. յոժսմ տեսեալ մարդկան՝ նովա

¹⁸ Որոշ մետաղների և նրանց գունային անվանումների կապը վաղուց է նկատված:

ճանաչեն զկանաչագգեստ հասկն զարմանոյ աճման» (Ագաթ. 340), «կանաչ ոստոցն մորենոյն ... պահեաց զնա անթարշան» (Ա.տ., 273):

Կանաչ գրաբարում օգտագործվում է նաև «կանաչի, տունկ, բույս» իմաստներով: Թեպետ համոզիչ փաստեր չկան, քանի որ հստակ չէ նաև փոխառության բուն աղբյուրը և համապատասխան բառաձևն ու իմաստը, բայց կարելի է կարծել, որ գոյականական իմաստից է առաջացել ածականական իմաստը, մանավանդ որ գունային անվանումների համակարգում այդ երևույթը օրինաչափ է:

Կանաչ գույնը բնության մեջ հանդիպող ակնառու երանգներից է (կանաչ դաշտ, անտառ, բույսեր), որի հիմն անվանումը հայերենն անպայման պետք է ունենար: Դա առաջին հերթին դալ- արմատն է, որից դալար բառը գրաբարում կիրառվում է «կանաչ» նշանակությամբ, նաև՝ «կանաչի, կանաչ բուսականություն»: Հմմտ. «Ապա ետ հրաման ընդենուլ զնա ի կղզին մի մեծ ովկիանոս ահագին ծովու, յանապատ յանջուր տեղի մի՝ ուր ոչ բոյս ինչ դալար և ոչ արմատ ինչ» (Բուգ. 77): «Բայց զշառախղ արմատոյ դորա թողէր յերկրի, երկաթասպատ և սղոճասպատ ի դալար վայրի» (Դան. Դ, 12):

Ունենալով գործածության հիմն ակունքներ՝ դալար-ն իր հաճախականությունը, նաև բառակազմական մեծ հնարավորությունները պահպանել է գրաբարում, հատկապես վաղ շրջանում:

Դալար արմատով գրաբարն ունի դալարաբեր, դալարաբերել, դալարաբերութիւն, դալարաբոյս, դալարագոյն, դալարագգաց, դալարակեր, դալարահեր, դալարանամ, դալարաբար, դալարացուցանեն, դալարեղէն, դալարի, դալարութիւն, դալարութ,

Կանաչ արմատով՝ կանաչաբոյս, կանաչագեղ, կանաչագոյն, կանաչագարդ, կանաչագգեստ, կանաչանամ, կանաչատաղարք, կանաչասեգ, կանաչութիւն:

Բերենք կանաչ և դալար բառերի հաճախականությանը վերաբերող որոշ տվյալներ: Կորյունի և Եզնիկի գործերում դրանք չկան, Ագաթանգեղոսի Պատմության մեջ սլատկերը հետևյալն է. դալար (5)¹⁹, դալարանամ (1), դալարացուցանեն (4), դալարի (1), դալարութիւն (3): Կանաչ (1), կանաչագգեստ (1), կանաչացեալ (1): Բուզանդի Պատմության մեջ կանաչ չի գործածվել, դալար (1), երեք անգամ էլ

¹⁹ Տվյալները ըաղված են համաբարբառներից: Փակագծերում գործածության քվերն են:

վկայված է Դալարիկ տեղանունը: Նշենք մակ, որ կանաչ բաղադրիչով կազմությունների գերակշիռ մասը հետհինգերորդարյան է:

Խորենացու «Պատմության» մեջ կանաչ դարձյալ չկա: Դալար (1), դալարի (1): Փարպեցիյն մույնպես կանաչ գունանունը չի գործածել, ունի դալարացուցանել (1), դալարութիւն (1): Եղիշեն՝ դալար (1), դալարի (2), կանաչը չկա:

Աստվածաշնչում կանաչ վկայված է չորս անգամ (Ծննդ. Խ, 10, Ելք. Ժ, 15, Ղեւտ. ԺԴ, 37, Եսայ. ԺԹ, 7) կանաչանալ՝ 2 (Ղեւտ. ԺԳ, 49, Յովք. Ը, 11) դալար. դալարի՝ 28:

Կանաչ-ի և դալար-ի հունական համապատասխանակը հիմնականում չօրօս-ն է, «կանաչ». այն ունի մակ «դեղին, փայլուն, քարն» իմաստները (Дворецкий, т. II): Սուրբ գրքի ռուսերեն քարգմանության հետ համեմատությունը ցույց է տալիս, որ *зеленый, зеленоватый* բառերն ավելի հաճախական են, քան կանաչ, կանաչանալ: Ղուկ. ԻԳ, 31, Յայտ. Ը, 7 դալար-ը ռուս. համապատասխանաբար՝ *зеленеющим* և *зеленая*:

Նկատելի է մակ, որ երբեմն ռուս. *зеленый, зеленоватый*-ի դիմաց հայերենում կանաչ-ը չէ, այլ ուրիշ բառ: Հմմտ. "... *зеленеет он пред солнцем*" – հայ. «... զի խոնավութիւն յարեգական է» (Յոր. Ը, 16): "А я, *зеленеющая маслина*" – Այլ ես որպէս ձիթենի պտղալից..." (Սաղմ. ԾԱ, 10):

Այս կարգի անհամապատասխանությունները պետք է բացատրել ոչ միայն այն հանգամանքով, որ գրաբարում կանաչ-ը հաճախական չէր, և կանաչ, կանաչել-ի փոխարեն քարգմանիչներն օգտագործում են իմաստով մոտ բառեր, ինչպէս՝ "под всяким *зеленеющим деревом*" – «... ի ներքոյ ամենայն վարսավոր ծառոց» (Եզեկ. Զ, 13), "лист его *зелень*" – «եղիցի ստեղն մորա անտառացեալ» (Երեմ. ԺԷ, 8), այլև քարգմանական սկզբնաղբյուրի տվյալներով: Հայերենն ավելի հարազատ է մնացել հունարենին, իսկ ռուսերեն քարգմանությունը եբրայերենից է: Օրինակ՝ վերը բերված՝ Յոր. Ը, 16-ի խոնավութիւն-ը հուն. *ύγρός* – «խոնավություն»-ն է, իսկ Սաղմ. ԾԱ, 10-ի պտղալից-ի համապատասխանակը՝ *κατάκαρπος* «պտղալից»-ը:

Որոշ դեպքերում կանաչ «կանաչեղեն» գոյականի փոխարեն Աստվածաշնչում մշվում է կոմկրետ բուսանուն, կամ այլ հոմանիշ. հմմտ. "Да произрастит земля *зелень, траву*..." – «բլիսեսցէ երկիր բանջար

խոտոյ...» (Ծննդ. Ա, 11): «И как мелький дождь на зелень...» — «հիբրեւ զանճրել ի վերայ սիգոյ...» (Երկր. օր., ԼԲ, 2):

Եթե բացառենք կանաչ գոյականի գրաբարյան հոմանիշությունը, ապա զուտ գունանվանական համակարգում հոմանիշային շարքը ներկայանում է դալար, կանաչ բառերով՝ առաջինի անհամեմատ մեծ հաճախականությամբ:

Կապոյտ Հոմանշային շարքը ներկայանում է կապոյտ, բիլ լուրջ (լուրջ), ծաւի, խաժ, հիբ բառերով: Կապոյտ-ն ակնհայտորեն իրանական ծագում ունի: Լուրջ, ծաւի խաժ բառերի ծագումը ստույգ չէ: Ենթադրվում է, որ դրանք կարող են անցած լինել ուրարտերենից (Ջահուկյան, 1987, 436), ծաւ-ը՝ արևելակովկասյան լեզուներից (Ջահուկյան, 1987):

Ըստ բառարանային տվյալների՝ խաժ-ը վաղգրաբարյան անկախաբար գործածություն չունի: Սակայն խաժակն, խաժակութիւն բառերի առկայությունը թույլ է տալիս ենթադրելու նաև խաժ-ի գոյությունը:

Գրաբարում (Սուրբ գրքում) երկու անգամ գործածվել է հիբ բառը (Եզեկ. ԻԳ, 6, ԻԷ, 24)²⁰ : Համեմատելով հունարեն բնագրի հետ՝ Աճառյանը գրում է. «Պետք է ընդունիլ, թե հիբ նշանակում է յակնբագոյն, որ է երկնագոյն կապուտակ: Հնագոյն հայերենում զանազանում էին ուրեմն կապոյտի երկու որոշ տեսակները, այն է՝ կապոյտ «синий» «լեդակի գոյն», հիբ «голубой» «երկնագոյն» (տե՛ս Արմ. Հիբ բառահոդվածը): Բաղադրյալ կազմություններից կապոյտ գոյն (գոյնի երանգներ) են մատնանշում ծովագոյն, լրթագոյն, երկնագոյն, օղագոյն բառերը:

«... և կապուտակ երկնագոյն հովանոցս» (Բուգ. 207): «Եւ ընդ ահեկէ բեմբին տեսի աթոռ մի բարձր չորեքկուսի, ծովագոյն սառնակերպ» (Փարպ. 29): Փարպեցին երեք անգամ է օգտագործել ծովագոյն բառը՝ Սահակի տեսիլքի և նրա մեկնության բաժնում՝ երկու դեպքում՝ սառնակերպ, մեկ դեպքում՝ սառնաման ամսականի հետ: «Տեսի աթոռ մի բարձր չորեքկուսի, ծովագոյն սառնակերպ», «ցուցաւ քեզ աթոռ չորեքկուսի ծովագոյն սառնակերպ», «երեսցաւ քեզ ծովագոյն սառնակերպ տեսիլ աթոռոյն» (Փարպ. 29, 33, 34):

²⁰ Ս. Գրքի համաբարբառում հիբ-ը չի նշվում:

Սահակի տեսիլքի նկարագրությունն ունի և Մեծոփեցին, այստեղ էլ ծովագոյն սառնամամն է (Մեծոփ. 1999. 231): Հավանորեն Մեծոփեցին օգտվել է Փարփեցուց:

Կապոյտ-ի մի ուշագրավ օրինակ գտնում ենք Աստվածաշնչում: «Եւ կացուցանէր յանդիման մաքեացն և զխոյ կապոյտ և զամենայն գորշախայտն յօդեաց» (Շմնդ. Լ, 40): Ըստ Սուրբ գրքի ծանոթագրման՝ երբայերենում կապոյտ չկա: Այն չկա և ռուսերեն քարզմանության մեջ. հմմտ. "И отделял Иаков ягнят, и ставил скот лицом к пестрому и всему черному скоту...": Հայերեն քարզմանչի նախասիրությունը թո՞ւյլ է տալիս կապոյտ բառի բացատրության մեջ հավելել և «սև» իմաստը:

Ինչպես նկատելի է. կապոյտ գունանվան հ.-ե. անվանումները քիչ են: Կապույտը գունային առանձնահատկությամբ եզրեր ունի սևի, կանաչի մոխրագույնի և այլ երանգների հետ, և. ըստ երևույթին, նախապես այդ գույնի առանձին անվանում չենք ունեցել:

Բնության մեջ կապույտի երանգ ունեն երկինքը և ծովը: V դարից վկայված են այդ բաղադրիչներով կազմված երկնագոյն, ծովագոյն բառերը: Բնականաբար, սրանք հետին կազմություններ են՝ իրանականից փոխառյալ գոյն բառով: Բացառելի չի կարելի համարել երկին բառի՝ վաղմջական շրջանում մասնականական կիրառությունը²¹: Աճառյանը մերժում է առաջարկված բոլոր ստուգաբանությունները, սակայն Է. Աղայանի ստուգաբանությունը՝ հ.-ե. *deia/deion-ից. ավելի քան համոզիչ է: (Տե՛ս Աղայան, 1974, 66-67):

Բիլ-ը. ըստ Հայկազյան բառարանի, նշանակում է և «կապույտ» (զանազան երանգներով): Վաղ գրաբարում բառի գործածություն բառարանները չեն վկայում, ուշ շրջանից նշվում է մեկ վկայություն: Աճառյանը մերժում է Բիլ «կապույտ» բացատրությունը և Բիլ-ը համարում է «ձկան տեսակ», ծագումն էլ՝ անստույգ: Է. Աղայանը Բիլ-ը կապում է «հ.-ե. bhlē-u-o-s «կապույտ, դեղին, խարտյաշ» աճած ձկնի պարզ bhlē-«փայլում, սպիտակ» արմատի հետ» (Աղայան, 1974, 47):

Կարմիր Հ.-ե. լեզուներում *reudh- արմատն ունի մի շարք. զարգացումներ, իսկ հայերենում այն չի պահպանվել: Այդ արմատն է

²¹ Աբ-ն ունի կապոյտն «երկինք» բառը: Ղարաբաղի բարբառում յերե կապուտ նշանակում է «երկինք»:

արայր (մետաղը) բառում, որը, սակայն, իրանական փոխառություն է, և անմիջական գույն հասկացությունը մթագնված է:

Ուսումնասիրողները *reudh- արմատի մեջ տեսնում են մետաղ → գունանուն սերտ կապ: (Гамкрелидзе, Иванов, 711-712):

V դարի մատենագրության մեջ կարմիր հասկացությունն արտահայտվում է հիմնականում հենց ընդգծված բառով, որը, ինչպես նշել ենք, իրանական փոխառություն է: Այս գունանունն էլ, անշուշտ, նախքան իրանական բառը փոխառելը պետք է ունեցած լինի հնագույն՝ բուն հ.-ե. անվանումը կամ անվանումները:

Այդօրինակ բառերից են թերևս հուր, բոց-ը, որոնք մեզ են հասել դեռևս Գողթան երգերից և ունեն «կարմիր, կարմրագույն» իմաստները. հմմտ. «Նա հուր հեր ուներ, (սպա թէ) բոց ուներ մօրուս եւ աչկունքն էին արեգակունք» (Խոր. 86):

Հուր արմատով կազմված գունանուններից են հրագոյն, հրաշէկ, հրատեսիլ, հրազենտ:

Բոց-ով՝ բոցաբոց, բոցաղէգ, բոցազգեստ, բոցաճանճանչ ... բառերը: Բերենք մի քանի օրինակ. «Եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ ծխելոյ ի մէջ հնոցի հրաշէկ» (Յայտ. Ա, 15): «...և զհուր ի ձեռն կարմրոյն, քանզի զգոյնն հրատեսիլ է» (Փիլ.Մն., 526): «Անդ բոցագոյնքն փայլածեն և ազնուական մարգարիտքն լուսաւորեն» (Վկայք. 94):

Բնիկ հայերեն արիւն բառով կազմված արիւնագոյն-ի առաջին վկայությունները V դարից են (արիւնեբանգ-ն ու շրջանի վկայություն է): Արիւնռուշտ բառն էլ ՆՀԲ-ն մեկնում է «շառագոյն, արիւնեբանգ»՝ բերելով հետևյալ օրինակը. «Աչք ի բարկութենէ շառագոյն արիւնռուշտ լինին»: Այս օրինակում արիւնռուշտ-ի՝ «արյունով լցված, արնաշաղախ» իմաստն էլ մերժելի չէ: Մերժելի չպետք է համարել և այն, որ վաղնջական ինչ-որ շրջանում արիւն նշանակել է և կարմիր: Աստվածաշնչի հետևյալ օրինակում թերևս այդ իմաստն է. «... եղև շարժում մեծ եւ արեգակն եղև սեաւ իբրեւ զկարպետ այծեայ և լուսինն բոլորովին եղև իբրեւ արիւն» (Յայտ. Զ, 12): Իհարկե, այստեղ հունարեն բնագրի գործոնը կա. հուն. αἷμα «արյուն», ուսերենում նույնպես այդ բառն է. "... и луна сделалась как кровь": Եզնիկը Սուրբ գրքի այս հատվածի վերաբերյալ իր շարադրանքում օգտագործում է արիւնագոյն բառը. «Ճշմարիտ է բան գրոյն, որ ասէ՝ թէ դարձուցից զարեգակն ի խաւար, և զլուսինն յարիւն...

հիրամանաւ Աստուծոյ գլուսնոյն արիւնագոյն լինելոյ՝ դիւի նմանել լուսնի քարքանջեն...» (Եզն. 217):

Կարմիր գոյնի՝ ոչ հնդեվրոպական (անհայտ ծագումով) անվանում կարելի է համարել և որդան-ը, որը վաղ գրաբարում փոխարինում էր որդան կարմիր կապակցությամբ (բառակապակցությունը մեզ չի հանդիպել): «Եւ ականց պատուականաց և մարգարտոյ և բեհեգոյ և ծիրանոյ եւ ոսկեթելի և որդան» (Յայտ. ԺԸ, 12): Գ. Ջահուկյանը հավանական է համարում որդ-ի ուրարտական բնույթը (Ջահուկյան, 1987, 440):

Շառ-ի ծագումը նույնպես պարզ չէ: Այդ արմատը գրաբարում անկախաբար չի գործածվում: V դարից ունենք շառագոյն «կարմիր»: «Եւ եկն ել որդին անդրանիկ շառագոյն ամենեւին իբրեւ զմորթ թաւ... (Ծննդ. ԻԵ, 25): Ռուս. красный. հուն. πυρρόκρησ:

Բոսոր-ի գունանվանական իմաստը՝ «կարմիր, դեղնակարմիր» վաղ գրաբարում ավանդված չէ: Այդ իմաստը չի պահպանել և հայերենի ոչ մի բարբառ: Հ. Աճառյանը չի ընդունում Պետերսոնի ստուգաբանությունը՝ հայերեն բոց և որ ածանց: (Տե՛ս, Արմ. Բոսոր բառահոդվածը): Ակադ. Գ. Ջահուկյանը, ըստ էության, ընդունում է այդ ստուգաբանությունը (Ջահուկյան, 1987, 218, 289): .

Մեր կարծիքով՝ բառի բնույթը բոլորովին այլ է: Աճառյանը ենթադրում է, որ բոսոր-ը եբր. *bāṣarā* բառն է, որ նշանակում է «բուն ամրապատ և անմատչելի տեղ» և «յետոյ դարձել է եդոմայեցոց գլխատր քաղաքի անունը»:

Այս մեկնաբանությամբ բոսոր գունանվան իմաստային հենքը, սակայն, չի ուրվագծվում:

V դարի մատենագրության մեջ բոսորը վկայված է միայն Աստվածաշնչում, այն էլ ոչ որպես գունանուն, այլ տեղանուն. հմմտ. «Եւ թագաւորեսց ընդ նորա Յովբաբ որդի Ջարեհի ի Բոսորայ...» (Ծննդ. ԼԶ, 33): Տե՛ս նաև Եսայ. ԼԴ, 6 և այլն, որոնցից տեղանուն → գունանուն անցումը հիմնավորելը դժվար է:

Բոսոր բառը Սուրբ գրքի մի շարք օրինակներում առնչվում է անապատի հետ հմմտ. «բոսոր յանապատին, ի դաշտին երկրի» (Յեսու. Ի, 8, նաև՝ ԻԱ, 36): «Ի ցեղեն Ռուբենի, զԲոսոր յանապատին և զգատուցեալսն նորա» (Ա.Մնաց. Զ, 78):

Մեր կարծիքով՝ անապատի դեղնակարմրավուն գույնն էլ երևի տեղանուն → գունանուն (հատուկ անուն → հասարակ անուն) իմաստային անցմանը նպաստող գործոն է եղել:

Ծիրանի բառը (որպես գունանուն), որոշ փաստերի առկայության դեպքում, ուշագրավ քննության նյութ կարող է դառնալ. որովհետև՝ ա) հստակ չէ բառի ծագումը, բ) առարկելի է ծիրանիի կապը ծիրան (միրգ) բառի հետ, մանավանդ որ վերջինս և ծիրանի/ծիրանենի (ծառը) գրաբարում վկայված չէ, գ) գրաբարի բառարանները ծիրանի գունանվան համար նշում են գունային տարբեր երանգներ. հմմտ. ըստ ՆՀԲ-ի՝ ծիրանեգոյն, կարմրերանգ, բոցագոյն, վարդագոյն. և մանուշակագոյն, և մուլագոյն, և երփն-երփն:

Սակայն գույների այս բազմազանության մեջ ավելի հաճախական է «կարմիր, բոցագոյն» նշանակությունը: Բավական է նշել, որ Սուրբ գրքում ծիրանի բառով կան տասնյակ վկայություններ, և բոլորն էլ «կարմիր, կարմրերանգ» իմաստով. հմմտ. Ելք. ԻԵ, 4, ԼԵ. 5, ԻԶ. 1, ԻԷ. 16, ԻԸ. 33, ԼԶ. 8, 35, 37... և այլն:

Նշված բոլոր հոդվածների ռուսերեն համապատասխանակն է багряный, пурпурный, հուն. հիմնականում՝ πορφύρεος:

Ահա երկու օրինակ. «Եւ կապուտակ և ծիրանի և կարմիր կրկին...» (Ելք, ԻԵ, 4). “И шерсть голубую, пурпуровую и червленую”:

Անշուշտ, ծիրանին կարմրերանգ գույն է նշում, որը տարբերվում է կարմրից: Հմմտ. «Ի բեհեզոյ մանելոյ և կապուտակէ և ի ծիրանոյ և ի կարմրոյ կրկնելոյ» (Ելք, ԻԶ, 1), «... զեզրածիրանին և զմիջնածիրանին, զառտնին արկանելիս և զարտաքին խլայտեռս լակոնացիս, զծիրանին և զկարմիրն. զբեհեզն, զոսկեհոռն, զերկնագոյնն... (Ոսկ. Ես., 35):

Ծիրանի բառի՝ ԱԲ-ի բացատրությունը հետևյալն է. «զեղեցիկ կարմիր խառն դեղինի հետ, ծիրան պտղոյ նման, վարդագոյն, ոսկեգոյն, մանուշակագոյն, ծովագոյն, երկնագոյն»:

Նրբերանգային այս բազմազանությունը թույլ է տալիս ենթադրելու, որ ծիրանի նշանակում է նաև բազմագոյն: Որպես փաստարկ կարելի է նշել ծիածան բառի ծիրանի գոտի անվանումը:

Ծիրանի գույնի («երկներ և ծովն ծիրանի») հատվածի մի յուրատեսակ բացատրություն գտնում են Նազենի Վարիբյան դը Վարդաւան ստորագրությամբ լրագրային հոդվածում: «Ծիրանին ծովի

գույնն է շատ որոշակի պահին՝ արեամազին, երբ հորիզոնում ծնվող արևի կարմիրը խառնվում է երկնքի զարթնող կապույտին՝ ջրին անդրադարձնելով մանուշակագույն երանգ, և երբ արևի ուլտրամանիշակագույն ճառագայթները սփռվում են երկրի վրա», ուշագրավ է և հորվածագրի եզրահանգումը. «Ուրեմն՝ ծիրանին արշալույսի խորհրդանիշն է, հարություն, վերածննդի, վերելքի անցման սահմանը... » («Հայկական ժամանակ» օրաթերթ, 3 փետրվարի, 2007 թ.):

Կարմիր կամ կարմրերանգ գունանուններ են նշում նաև իրանական ծագում ունեցող ունեցող վարդ, շէկ բաղադրիչներով կազմությունները՝ վարդագոյն, շիկակարմիր ... և այլն:

Մի խոսքով, հումանշային շարքը բազմանդամ է: Այս շարքում հաճախական գործածություն ունի կարմիրը: Աստվածաշնչում այն վկայված է 83 անգամ: Այդ վկայությունների համատեքստային քննությունը հանգեցնում է հետևյալին. վկայությունների մի մասը կարմիր ծով կապակցությունն է: Մյուս վկայությունները հիմնականում վերաբերում են հագուստի կտորի գույներին: Ինչպես նշել ենք, կարմիր-ը նախապես վերաբերել է որդան կարմրին, այն գույնին, որը նաև հագուստի կտորի ներկանյութ է եղել: Սուրբ գրքի վկայություններն էլ կողմնակիորեն հաստատում են նաև այդ, ի տարբերություն բնագրի. ավելացնելով ներկելոյ, մանելոյ, կրկին բառերը: Հմմտ. «Եւ կապուտակ և ծիրանի և կարմիր կրկին» (Ելք. ԻԵ, 4): «Եւ արասցես խորան տասն փեղկեան ի բեհեզոյ մանելոյ և ի կարմրոյ կրկնելոյ» (Ելք. ԻԶ, 1): «Եւ կապուտակ եւ ծիրանի եւ կարմիր կրկին մանեալ և բեհեզ նիւթեալ եւ մազ այծեաց» (Ելք, ԼԵ, 6):

Նշված օրինակների ռուսերեն համապատասխանակը красный-ն է:

Այն հատվածներում, որտեղ շորի, հագուստի մասին չէ խոսքը, ռուս. հիշյալ բառի դիմաց հայերենը երբեմն կարմիր բառի փոխարեն օգտագործում է այլ հումանիշ. Ծննդ. ՀԵ, 25՝ շառագոյն, ԻԵ, 30՝ շիկաթան, կամ էլ ներկայացնում է բոլորովին այլ ձևով: Հմմտ. "... привез из Офира великое множество красного дерева и драгоценных камней" (Գ. քաղ. Ժ, 11) – հայ. «... Եբերի ի Սովփերայ փայտ անտաշ քաղում...»: "И сделал царь из этого красного дерева лестницы к дому Господню." – «Եւ արար արքայ զփայտն նոճ աստիճանս տանն Տեառն...» (Բ.Մնաց. Թ, 11):

Սպիտակ: Հումանշային շարքի հիմնական անդամն է. սպիտակ-ն իրանական փոխառություն է, և դժվար է պարզել բառիս գործածության

սկզբնական սահմանները: Համեմայնդեալս փոխառվելուց հետո հիշյալ բառը գրաբարում արդեն V դարից հաճախական էր՝ լինելով սեաւ և թուխ-ի հակաճիշտ:

Պետք է նկատել, որ սպիտակը գունային որոշակի գամաներ է պարունակում և անգույնից մինչև հստակ սպիտակի շատ նրբերանգներ գրաբարում կարող է արտահայտվել սպիտակ անվանումով:

Հ.-ե. լեզուներում սպիտակ գույնի անվանումն առկայանում է տարբեր արմատներով՝ *ar(e)g*՝ «փայլուն, սպիտակ», **bhel*, *albho* «белый», **leuk* «լույս, սպիտակ»: Այս կապակցությամբ Գ. Ջահուկյանը նկատում է. «Սպիտակի անվանումները կապված են գերազանցապես փայլելու գաղափարի հետ և այդ գաղափարի հ.-ե. առատ արտահայտման պայմաններում դժվար է ասել, թե հայերենը ո՞ր տարբերակը կարող է ընտրած լինել. հավանական են, օրինակ, *աղբ կամ աղաւ (**albho*- կամ **aləu*- «սպիտակ». այստեղից են աղանի, բերևս նաև ալաւ(ս)ունք «համաստեղություն», *լուսն (հմմտ. լսնագոյն «սպիտակ», լուսն «աչքի սպիտակ փառ՝ որպես հիվանդություն»՝ *leuk*- արմատից, որտեղից լոյս), արծ (հ.-ե. **areg*՝, որտեղից արծաթ, արծնեն, արծարծեն) ձևերը: (Ջահուկյան, 1987, 270):

Նշված հ.-ե. արմատներով հայերեն կազմություններից սպիտակ հասկացությունը արտահայտելու փաստեր իրոք կան և եթե **albho*--ից կամ **aləu*--ից ենթադրելի է միայն աղանի-ն, ապա մյուսների հարցում այլ օրինակներ ևս կան՝ այն էլ բավական համոզիչ:

Անշուշտ, կարելի է ենթադրել աղանի-սպիտակ անցումը. մանավանդ եթե նկատի ունենանք հ.-ե. այլ զուգահեռներ – **albho*- «սպիտակ», հայ. աղանի, հ.սլ. лебедь, ռուս. лебедь, լիտ. bal.añdis «աղանի», հ.վ. գերմ. elbiz «կրունկ», լատ. albus «սպիտակ» և այլն²²:

²² Ի դեպ, V դարի հայ բարգմանական գրականության մեջ՝ Եվսեբիոսի «Քրոնիկոնում» լատ. այդ գունանունը նշվում է. «... Քանզի դատինացիք ըստ իւրեանց բարբառոյ սպիտակ աղբան անուանեն» (Քր. Ա, 388): «... և անուն քաղաքին կոչեալ աղբան՝ ըստ խոլին գունոյ. քանզի դատինացիք ըստ իւրեանց բարբառոյ զսպիտակ աղբան անուանեն» (ն.տ.):

Արծաթ - «սպիտակ» համոզիչ օրինակ մեզ չի հանդիպել: Սակայն հ.-ե. argēh' «սպիտակ» – հյ. արծաթ «մետաղ» գուգահեռում ենթադրելի է արծաթ-ի նախնական «սպիտակ, փայլուն» իմաստը²³:

Հ.-ե. մեկ այլ արմատից՝ *Pollio-s-ից ունենք ալի(ք) «սպիտակ մազ»։ «Մի՛ խորշեսցուք ի բազմաժամանակեայ ալեաց ծերոյն», «Յառաջ քան զժամանակն ածեն ալիս հոգք» (ՆՀԲ):

Որոշակիորեն դժվար է փաստարկել ալի(ք)-ի սկզբնական կիրառությունը. արդյոք այն վերաբերել է միայն մազերի գույնին, թե նախապես ունեցել է սպիտակ ընդհանրական իմաստը. և հետագայում է կատարվել իմաստի նեղացում: Բոլոր դեպքերում ալիք-ն արդեն գրաբարի կտրվածքով էլ պետք է որոշ վերապահությամբ ներառել սպիտակ-ի հոմանիշային շարքի մեջ՝ նկատի առնելով հատկապես «սպիտակ մազ» նշանակությունը:

Սպիտակ հասկացության համար նախագրաբարյան շրջանում, ըստ երևույթին հայերենի կազմավորման շրջանից, գործածվել է լոյս բառը կամ լոյս + որևէ բաղադրյալ կազմություն: V դարից վկայված շատ օրինակներում էլ այդ բանը հստակ է: Բերենք որոշ օրինակներ. «Թողուցեալք ի թոխս արագութեան լուսափետուր սպիտակերամն աղանեաց» (Ագաթ. 309): «Եւ հանդերձ մորա եղեն սպիտակ իբրեւ լոյս» (Մտք. ԺԷ, 2):

Լուսագգեստ, լուսագգեաց բառերում էլ լոյս «սպիտակ» գույնն է: Լսնանալ բառն էլ ունի «սպիտակել, գունատվել» իմաստը: «Որ երկնչի լսնանան երեսքն եւ ամաչէ դեղնի և շառագունի եւ որ նախսնձի կապուտակի, որ յոլով մասն ունի սեւոյ՝ շաման դադ առնէ աչացն մտացն...» (Եղիշ. Մեկն. արարած. (Մատենագ. հայոց, 850):

Մի ուշագրավ օրինակ կա Փարայեցու գրքում. «Ի մմանութիւն լուսատր արծուոյ սլացեալ հասանէր յերկնից» (Փրպ. 103): Ընդգծվածը կարելի է համեմատել սպիտակ արծիւ, белыѣ орѣл կապակցության հետ, որը որոշ չափով դարձվածային միավորի արժեք ունի:

²³ V դարից վկայված Արծաթադիրը հատուկ անունը կողմնակիորեն կարող է հաստատել արծաթ-սպիտակ իմաստային գուգոդդումը. «... իջանէր ի գաւառն Բասեան և բանակէր մօտ ի գեօղն, որ անուանի Դու, ի դաշտին Աղբերականաց, զոր Արծաթադիրեսն կոչեն» (Փրպ., 146): Նույն հեղինակի գրքում կա և Արծաթի գյուղանուն (148):

Լուսաւոր → սպիտակ կիրառության մի զուգահեռ էլ բերենք Կաղանկատվացու Պատմությունից. «... զոր անապատաւորն կանգնեաց սպիտակազգեստ հանդերձիւ և յոյժ ահաւորագոյն տեսեամբ» (Կողմ. 76): «Այդր եպիսկոպոս նստէր, ասէ, լուսաւոր զգեստու և ահաւոր կերպարանօք» (ն.տ. 77):

Լույսի, փայլելու հետ կապված սպիտակ իմաստով զործառուում է և պայծառ-ը: ՆՀԲ -ն պայծառը մեկնում է՝ «լուսափայլ, սպիտակ յոյժ. ջինջ և շքեղ...»: Պայծառ բաղադրիչով կազմություններից նաև սպիտակ իմաստն են արտահայտում պայծառագեղ, պայծառագոյն, պայծառազգեստ բառերը. «Եւ ելանէին ի տաճարէն եւթն հրեշտակք, որք զգեցեալ էին կտաւս մաքուրս և պայծառս» (Յայտ. ԺԵ, 6): «Բայց դու մի՛ ըստգիտ լինիր գունդն մերոյ. քանզի ենք բարուք ոգոյ պայծառագոյնք քան որ առ քեզ սպիտակդ են» (ՆՀԲ):

Սպիտակ նախադաս բաղադրիչով ՆՀԲ-ն վկայում է սպիտակագոյն, սպիտակեւանգ բառերը: Կա և տենչասպիտակ. «Զի գեղեցկավայելուչն ծաղկեալ գարունն զծաղկանցն բոյսս տենչասպիտակ գունովք ի վեր բաղկացոյց» (Ոսկ. Պօղ. II, 760):

Եզակի վկայությամբ այս բառը ՆՀԲ-ն չունի: Իսկ ԱԲ-ն մեկնում է «աղոտր ճերմակութեամբ»: Ն. Բյուզանդացին բերում է նույն օրինակը՝ առանց բառիմաստի բացատրության²⁴:

Գրաբարի բառարաններն ունեն փաղեքութիւն բառը, որի մեջ տեսնում են «սպիտակություն» իմաստը: Արմ-ը դիտում է որպէս անստույգ բառ: Բառը կարելի է աղերսել հ.-ե. *sphel*, *'phel* «փայլել» արմատի հետ: Դժվար է պարզել փաղ-եք-ութիւն բառի -եք- ձևության իսկությունը:

Սեաւ Գրաբարում հոմանիշներ են սեաւ-ը և թուխ-ը: Սեաւ-բաղադրիչով են կազմված սեւագոյն, սեւագորշ, սեւադէմ, սեւազգած, սեւաթոյր, սեւային, սեւաներկ, սեւութիւն. թուխ-ով՝ թխագոյն, թխազգեստ, թխակնութիւն, թխակերպ, թխանամ, թխատիպ, թխութիւն, թոյրաթուխ... Բառակազմական հնարավորությունների և զործածության հաճախակացության տեսակետից սեաւ-ը և թուխ-ը որևէ էական տարբերություն չեն ցուցաբերում: Թերևս, ինչպէս նշել ենք համապատասխան տեղում, ձիու

²⁴ Տե՛ս Նոր բառագիրք հայկազեան լեզուի. սրբագրուած եւ ճոխացուած Նորայր Ն.Բիւզանդացու ձեռքով. հրատարակութեան պատրաստեց՝ Մարտիրոս Սիմասեանը, Ժնև, 1990:

գույնի դեպքում օգտագործվում է սեռ ածականը (այդ կիրառությամբ թուխ-ը մեզ չի հանդիպել): Ինչ վերաբերում է բառերի ծագմանը, ապա սեռ-ի համար ենթադրելի է կա՛մ հ.-ե. (քնիկ հայերեն), կա՛մ իրանական, իսկ թուխ-ի համար հավանական է համարվում ուրարտական, քեև մերժելի չի դիտվում հ.-ե. ծագումը (Ջահուկյան, 1987, 270, 436):

Հ.-ե. ծագումով հետևյալ արմատները քերև գործառել են սև, սևություն իմաստով: Մութ/մութն- ներկայացնում է հ.-ե. *mut- արմատը (տե՛ս Ջահուկյան, 1987, 139): Այդ արմատից է և մթար-ը: Ներքոհիշյալ օրինակներում մթութին, մթարութին բառերը գույն են մատնանշում: «Լուսինն յորժամ ի մահիկեղջերն զնշան կարմրութեան կամ մթարութեան ունիցի» (ՆՀԲ): «Մութ է գույն դիմաց մերոց» (ՆՀԲ):

Մուգ բառը գրաբարում ավանդված չէ: Արդի հայերենում այն սովորաբար գործածվում է որևէ գույն նշող բառի հետ՝ մուգ կարմիր, մուգ կանաչ ... և այլն: Ղարաբաղի բարբառում և Աշտարակի խոսվածքում այն անկախաբար կիրառվում է «մթագույն, սևագույն, դարչնագույն» իմաստով: Մուգ-ը, անշուշտ, հ.-ե. *(s)meukh-, *(s)meug- արմատից է, որից հ.սլ. смагъ «սևադարչնագույն», ռուս. смуглый «թուխ»:

Ներքոհիշյալ բառերի ծագումն անհայտ է, կամ ստույգ չէ:

Արջն «սև» բառի մեկ վկայություն կա: «Յանկարծօրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա» (Բուգ. 32): Այդ արմատով կան մի շարք կազմություններ. արջնագոյն, արջնաթոյր, արջնդեղ, արջնագգեստ. «Վասն զի սևաթոյր է կրկին կապուտակն, իսկ սեւան արջնագոյն է և անրուստոր» (Փիլ. Մնաց. 558): «Ոչ եթէ խստիւ ինչ սրբի արջնդեղն, ... այլ գաւազանաւ քափի» (Նս. ԻԸ, 25, նաև 27): Ռուս. черныха, հուն. μελανθιον:

Համակ բառով ՆՀԲ-ն ունի երկու վկայություն, երկուսն էլ Աստվածաշնչից (Ծննդ. Ժ. 32, 33): Համակ ՆՀԲ-ն մեկնում է «գույն խառն ընդ սպիտակ և ընդ սեւա, գորշախայտ»: Արմ-ը՝ «գորշախայտ գույնով»:

Ահա օրինակները. «... և զատոյ ի միմեանց զամենայն ոչխար զխայտախարիւ և զգորշ և զամենայն արօտական զհամակ յօդեաց. եւ ամենայն խայտախարիւն յօդեաց և պիսակն յայծեաց եղիցին վարձք» (Ծննդ. Լ, 32): «Եւ զատոյց յատուր յայնմիկ զքաղս կապոյտս և զպիսակս, և զամենայն այծս կապոյտս և զպիսակս և զամենայն սպիտակս ի նոցանէ և զամենայն համակս յօդեաց. եւ ի ձեռս որդոցն իւրոց» (Ծննդ. Լ, 35):

246

Հայերեն հատվածը հունարենի համեմատությամբ ավելի ծավալուն է, որոշ կրկնություններով, որը դժվարություն է հարուցում համակ-ի ճշգրիտ համապատասխանակը պարզելու գործում. (ի դեպ, Սուրբ գրքի ծանոթագրություններից նկատելի է, որ տարբերություններ կան նաև եբրայական բնագրի համեմատությամբ): Համեմայնդեպս համակ-ը կարելի է քարգմանել սև կամ գորշ: Որպես գուգահեռ բերենք ռուսերեն համապատասխանակը. "...отдели из него всякий скот с крапинами и с пятнами, всякую скотину черную из овец, также с пятнами и с крапинами из коз. Такой скот будет наградою мне" (Ծննդ. I, 32): Ծննդ. 35-ում՝ "и всех черных овец":

Այս գուգահեռները խոսում են համակ-սեաւ հոմանիշության օգտին:

Վաստակոց գրքում ըստ Արմ-ի մեկ անգամ վկայված է ճնդիկ «գուտ սև» նորագյուտ բառը: (Տե՛ս Արմ. Դճնդիկ բառահոդվածը):

Ճանձախարիք բառի մեջ էլ գունային նրբիմաստների հետ ՆՀԲ-ն նշում է և «սև»-ը՝ նկատելով որ «ուստի վարի և որպէս սեաւ մագ»:

Դատելով Արմ-ի օրինակներից՝ ձանձախարիքը թերևս մուգ կարմիրն է:

*

* *

Ամփոփելով գունանունների քննությունը՝ կարող ենք եզրակացնել:

Գրաբարում գործառում են գունանուններ նշող բազմաթիվ բառեր, որոնք կարելի է ներկայացնել հոմանշային շարքերով. շարքերի որոշ անդամներ նույնանիշներ են, իսկ որոշ դեպքերում էլ ի հայտ են գալիս իմաստային, գործառական առանձնահատկություններ: Թեև հիմնական գունանունները (բացի դեղինից) իրանական փոխառություններ են, սակայն համեմատական լեզվաբանության և գրավոր ավանդված որոշ տվյալներ հաստատում են, որ նախքան գունանունների փոխառելը հայերենն ունեցել է հիմնական գունանունների բնիկ՝ հ.-ե. անվանումները, իսկ իրանական փոխառությունները նախապես տվյալ գույնի ընդհանրական անվանումները չեն եղել. այլ վերաբերել են որոշակի առարկայի: Գունանուն նշող բնիկ հայերեն, փոխառյալ, անստույգ

ծագմամբ բառերի առկայությունը, դրանց գործառական յուրահատկությունները թույլ են տալիս ենթադրելու տարածքային (բարբառային) տարբերակների գոյություն, նաև հայերեն մուտք գործելու ժամանակային տարբեր կտրվածքներ: Եթե վերջին դրույթը գոնե մի շարք բառերի դեպքում կարելի է հիմնավոր համարել, ապա տարածքային (բարբառային) տարբերակների հարցը մնում է սոսկ գիտական վարկած:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ԱԲ – Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
Աբր. խոստ. վկ. – Աբրահամու խոստովանողի Վկայք Արեւելից,
Էջմիածին, 1921:
Ագաթ. – Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
Աքանաս – Ս. Աքանասի Աղէքսանդրի հայրապետի ճառք. Թուղթք և ընդ-
դիմասցութիւնք, Վենետիկ, 1899:
Աղայան 1974 – Է. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական
հետազոտություններ, Ե., 1974:
Աղայան 1976 – Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան,
Ե., 1976:
Աղայան 1986 – Է. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների
պատմության, Ե., 1986:
Աճառյան, ՀԼՊ – Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, II, Ե.,
1940, 1951:
Առաքելյան 1981 – Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի
պատմության, Ե., 1981:
Արծր. – Թովմայ Արծրունայ Պատմութիւն, Ե., 1985:
Արմ – Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 1-4, Ե., 1971-
1979:
Բաղայան 1970 – Հ. Բաղայան, Օրացույցի պատմություն, Ե., 1970:
Բուզ. – Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ,
1883:
Դավթժ. – Առաքել վարդապետ Դավրիժեցոյ Պատմութիւն,
Վաղարշապատ, 1896:
Եզն. – Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց,
Վենետիկ, 1826:
Եղիշ. – Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Ե., 1957:
Եղիազարյան 2007 – Վ. Եղիազարյան, Հայրեններ. ուսումնասիրություն,
Վանաձոր, 2007:
Եմես. մեկն. – Եւսեբիոս Եմեսացոյ, Մեկնութիւնք, Վենետիկ, 1980:
Եւագր. – Ս. Խորն Եւագրի Պոնտացոյ Վարք և մատենագրութիւնք,
Վենետիկ, 1907:
Եւս. ճառ. – Եւսեբիայ եպիսկոպոսի Եմեսացոյ, Ճառք (ՀԱ, 1956-1959):
Եփր. Մատ. – Ս. Եփրեմի մատենագրութիւնք, Վենետիկ, 1836:

- Թոռն.1910 – Թոռնեան Հ.Վ. Թադևոս, Հատընտիր ընթերցուածք, Վիեննա, 1910:
- Գ. Թումանյան 2007 – Գաբեգին Թումանյան, Թաղման ծիսակարգերը ուշքրոնգեղարյան Հայաստանում, ՊԲՀ, 2007, էջ 138-151:
- Բ.Թումանյան 1964, 1968 – Բ.Թումանյան, Հայ աստղագիտութեայն պատմութիւն, հտ. Ա-Բ, Ե.1968:
- Լաբուր. – Լաբուրնեայ Թուրք Արգարու, Վենետիկ, 1868:
- Խաչատրյան 1975 – Ժ. Խաչատրյան, Դիակիզումը Հայաստանում (մ.թ.ա. II - մ.թ. III դ.դ.), «Լրաբեր» # 2, 1975:
- Խոր. - Մովսիսի Խորենացոյ, Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1913:
- Կղնկ. - Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի. քննական բնագիրը և ներածութիւնը Վարազ Առաքելյանի, Ե. 1983:
- Կիւրլ. կոչ. – Կիւրլի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832:
- Կոր. – Կորիւն, Վարք Մաշտոցի, Ե., 1941:
- ՀԱ – Հանդէս Ամսօրեայ:
- Համբարձումյան 1998 – Վ.Համբարձումյան, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտութեայն, Ե., 1998:
- Հիշատ. – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե - ԺԲ դարեր, Ե. 1988, ԺԳ դար, Ե. 1984, կազմեց Ա. Ս. Մարտիրոսյանը:
- Հովհաննիսյան 1990 – Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառութիւնները, Ե., 1990:
- Ղազարյան 2006 – Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., 2006:
- Մագ. Թրք. – Գրիգոր Մագիստրոսի քոթերը, հյտ. Կ. Կոստանեանց, Ադէքսանդրասպօլ, 1910:
- Մատենագիրք ... կամ Մատենագիրք հայոց, Ա, Բ հատ. Ե դար, Գ հատ. Զ դար, Դ, Ե հատ. Է դար, Անթիլիաս-Լիբանան, 2003-2005 թթ:
- Յակոբեան Գ., Հայերենի տարիքային անուանումները, Ե., 1995:
- ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
- Ոսկ. Մտք. – Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826:
- Ոսկ. պօղ. – Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն քոթոցն Պաղոսի, Վենետիկ, 1862:
- Ոսկ.ճառ. – Յովհաննու Ոսկեբերանի Ճառք, Վենետիկ, 1861:

- Պատմ.Աղբյու. – Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու. աշխատասիրությամբ Հասմիկ Սիմոնյանի, Ե., 1989:
- Ջահուկյան 1987 – Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Ե., 1987:
- Ս. Պետրոսյան 2006 – Ս. Պետրոսյան, Հացահատիկի ուրարտական աստվածությունները (Շիրակի հայագիտական կենտրոն. գիտական աշխատություններ IX, 2006 թ.):
- Ս. Վարդանյան – Հայաստանի բժշկության պատմություն, Ե., 2000:
- Վեցոր. կամ Բրադ. – Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցարեայ արարչութեան. աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի, Ե., 1984:
- Տեր-Մկրտչյան 1998 – Գալուստ Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, Ս. Էջմիածին, 1998:
- Տաթևացի 2005 – Սուրբ Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն Յոհաննու ատեաբանին, Ս. Էջմիածին, 2005:
- Փարսլ. – Ղազար Փարսլեցույ, Պատմութիւն հայոց, Տփղիս, 1904:
- Փիլ.ճառ. - Փիլոնի Յեբրայեցույ ճառք, Վենետիկ, 1892:
- Библия; книги священного писания Ветхого и Нового завета, М. 1994.
- ВЯ – Вопросы языкознания
- Гамкрелидзе, Иванов – Т.В. Гамкрелидзе, Вяч.Вс.Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984.
- Дворецкий – Древнегреческо-русский словарь, составил И. Х. Дворецкий, т. 1-2, М., 1958.
- Луконин 1980 – В.Луконин, Культура и экономика древнего Ирана, М., 1980.
- Оганесян – Оганесян Л. А., История медицины в Армении, часть первая, Е., 1946.
- Очерки – Джаукян Г., Очерки истории дописьменного периода армянского языка, Е., 1967.
- Периханян 1983 – А.Периханян, Общество и право Ирана в парфянский и сасанидские периоды, М., 1983.
- Сараджева – Сараджева Л., Сравнительно-типологическое исследование цветовых обозначений в древнеармянском и старославянском языках (ՊԲՀ, 1976, # 4):

- Седакова — Седакова О. А., Метафорическая лексика погребального обряда ("Славянское и балканское языкознание", М., 1983).
- Теръ Мовсисянъ, 1902 — Месропъ Теръ Мовсисянъ, Исторія перевода библии на армянскій языкъ, С. - Петербургъ, 1902.
- Фасмер — Фасмер М., Этимологический словарь русского языка, т. т. 1-4, М., 1964-1973.
- Фрейман, 1946 — Фрейман А.А., Древнеперсидский календарь ("Вестник древней истории, # 3, 1946).
- Этимология, 1979 — М., 1981.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Գլուխ I. Մարդ, կյանք, մահ	7
Ա. Մարդ հասկացության լեզվական արտահայտությունները գրաբարում	7
Բ. Ծնունդ, կյանք	15
Գ. Մարդու տարիքային անվանումներ	18
Դ. Մահ/մեռնել հասկացության ընկալումն ու լեզվական ար- տահայտությունը գրաբարում	28
Ե. Թաղում հասկացության ընկալումն ու լեզվական արտա- հայտությունները	39
 Գլուխ II. Հիվանդություն, բժշկություն	50
 Գլուխ III. Ժամանակահիշ բառեր	73
Ա. Օր և օրվա ժամանակահատվածներ	78
Բ. Շաբաթ և շաբաթվա օրեր	87
Գ. Ամիս, ամսանուններ	89
Դ. Տարի	97
 Գլուխ IV. Գունանուններ	105
 Համառոտագրություններ. օգտագործված գրականության ցանկ	126

Լավրենտի Շահենի Հովհաննիսյան

Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն
(I մաս)

Չրատ. խմբագիր Ա.Սահակյան

Հրատ. պատվեր N 212

Ստորագրված է տպագրության 9.06.2008թ.:

Չափսը 60x84 $\frac{1}{16}$: Թուղթ №1, 8.25 տպ. մամուլ:

Տպարանակը՝ 150 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
Երևան, Սարգսի Բաղրամյան պող. 24գ

[1000yr

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0078071

A π
93663

